ոտս ԱՐԱՐԱՏԻ

Թիվ 5 (11), Նոյեմբեր - Դեկտեմբեր, 2006 թ.



Մշո դաշտը և Սբ. Կարապետ վանքի դուռը:

Նյութը կարդացեք էջ 36-ում

Սեպտեմբերի 24-ին Եռաբլուր պանթեոնում՝ ԱՍԱԼԱ-ի նահատակների հուշակոթողի մոտ, տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված «Վան» գործողության 25-ամյակին:

Միջոցառումը կազմակերպել էին Նորագույն զինյալ ազատագրական պայքարի համակիր երիտասարդներ, որին մասնակցեցին նաեւ Աբովյան քաղաքի կրթահամալիրի աշակերտներն իրենց ուսուցիչների հետ միասին: Հաշվի առնելով, որ ներկաների թվում կային մեծ թվով պատանիներ եւ երիտասարդներ, բացման խոսքին անմիջապես հետեւեց ակնարկ ԱՍԱԼԱ-ի եւ մասնավորապես «Վան» գործողության մասին:

Միջոցառման ընթացքում հնչեցին հայրենասիրական երգեր, արտասանություններ: Այնուհետեւ խորհրդանշական նվերներ հանձնվեցին օրվա հերոսներին՝ Վազգեն Սիսլյանին եւ Հակոբ Ջուլֆայանին:

Ներկա էին «Ուխտ Արարատի» միության անդամները:

«Վան» գործողության եւ դատավարության մասին նյութերը կարդացեք էջ 14-17-ում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրականի փոխարեն	էջ 1-3	
Հայոց ցեղասպանության ճանաչումն ու թուրք - եվրոպական հարաբերությունները	էջ 3	Արտակ Շաքարյան
Ռազմական էլիտայի դերը Թուրքիայի քաղաքական կյանքում 20-րդ դարի երկրորդ կեսին	էջ 4	Հայկ Մարտիրոսյան
Ռուս-վրացական հակամարտությունը և դրա ազդեցությունը տարածաշրջանային խնդիրների վրա	էջ 5	Եսթեր Հլղաթյան
Բաքու-Թբիլիսի-Ջեյհան	էջ 6	Հայկ Գաբրիելյան
Տնտեսական անվտանգության խնդիրների շուրջ	էջ 7	Սարգիս Պարսամյան
Աֆղան մոջահեդները ղարաբաղյան պատերազմում	էջ 8	Հայկ Դեմոյան
«Սասունցիներ» ջոկատը	էջ 9	Լիլիթ Հարությունյան
Խոստումը դրժելով՝ վերադարձավ մարտադաշտ	էջ 10	Մկրտիչ Գասպարյան
«Անդրանիկ. Սիբիրական վաշտի ոդիսականը»	էջ 11	Ռուբեն Սիմոնյան
Միսաք Թոռլաքյան (1888 - 1968)	էջ 12	Հակոբ Մանջյան
Վեհափառ հայրապետն օրհնում է ազգային հերոսին	էջ12	
Նժդեհյան մասունքներ	էջ 13	Վարդան Հովսեփյան
Եթէ կ'ուզէք հայ մնալ, միակ տեղը Հայաստանն է, իսկ եթէ Հայաստան կ'ուզէք, միակ ճամբան պայքարն է	էջ 14	
Պաշտպան Լեկլերկի ճառը	էջ 15-16	Գրիգոր Ջանիկյան
Կոմիտե 300. անտեսանելի կառավարության գաղտնիքները	էջ 17-19	Նաներ
Խայծ	էջ19	Կարլոս Եղիազարյան
«Հայ քաղաքացիության փորձադաշտը»	էջ20	Սերգեյ Գալոյան
Ողբ ընթերցողաց... «Եվ զուր մի հարցրու»	էջ 21	Արփինե Ալավերդյան
Ով ասելիք ուներ, շարունակեց ստեղծագործել	էջ 22-23	Դիանա Մակինյան
Հայաստանի զարմանահրաշ բուսականությունը հետաքրքրում է միայն բուսաբաններին	էջ 24-25	Վիկտորյա Բուռնազյան
Մի քիչ պղպեղ՝ մայրական սիրո մեջ	էջ 26-27	Նարինե Աբրահամյան
Արմենիզմ և Հայք	էջ 28	Վարդան Նիկողոսյան
Դեղձուտ	էջ 29	Հայկ Խաչատրյան
Գրիգոր Նարեկացի	էջ 30	Աշխեն Գրիգորյան
Հաճընցիների հերոսամարտը և նրանց պատմական հիշողությունը (1920թ.)	էջ 32-33	Վերժինե Սվազլյան
Ալայա - Կոռակեսիոն կամ Ալանիա	էջ 34	Ջեմմա Բաղդադյան
Տարօն - Մուշ	էջ 35-36	Հովիկ Մկրտչյան

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է տպագրության՝ 18.12. 2006

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue: Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail: oukhtararadi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:



Վերեւի քարտեզում հայության բնօրրանն է՝ Հայաստանը, ըստ «Աշխարհացույցի»: Ներքեւում՝ Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության տարածքում 1915–23թթ. իրագործված հայերի ցեղասպանության, Ռալֆ Պիտերսի բնորոշմամբ՝ «իրենց գործն անող էթնիկ զտումների» պատկերը: Հայոց հայրենիքի տերը՝ ասել է, թե պատասխանատուն, մնում է հայը, ով այդ իրավունքը միջազգային իրավական դաշտում ամրագրելու խնդիրն ունի՝ դիմակայելու համար արաբացիների, տրոցկիների, պիտերսների հակահայկական ծրագրերին... (Տես՝ էջ 1–3):



Խմբագրականի փոխարեն

ՀԱՅՈՒԹՅԱՆԸ, ՀՀ-ԻՆ, ԼՂՀ-ԻՆ ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Հայը հայրենիքով և հայրենիքում ապրելու իր իրավունքը հազարամյակներ շարունակ վաստակել է իր աշխարհաճանաչողության, հոգևոր - մշակութային, ազգային - քաղաքակրթական արժեքների ստեղծման նաև ազգային անվտանգության ապահովման ճանապարհով: Աշխարհին տիրելու մուլուցքով Արևմտյան համաշխարհային ռազմաքաղաքական աղետների և միջազգային քաղաքական անկատար համակարգերի մարտահրավերներին պատրաստ չլինելու պատճառով վերջին հարյուրամյակում կրել ենք մեծ կորուստներ: Այժմ երաշխավորելու և իրագործելու համար մեր ազգային պետական գոյությունը՝ պարտավոր ենք մեր հարատևման իրավունքը հաստատել նաև միջազգային իրավական դաշտում:

Աշխարհը կառավարելու, համայն մարդկությանը ստրկացնելու, անհայրենիք քոչվորների վերածելու մոլուցքով տարված, մշտապես մարդատյաց ու արյան ծարավ Արևմուտքը, անգամ իր իսկ երկրների ժողովուրդներին ողջակիզող եվրոամերիկյան հանցագործ քաղաքականությունը համայն աշխարհի մարդկության կյանքը վերածել է նատուրալիզացված թատրոնի: Մի քանի միլիոն հանդիսատեսի համար հիմա էլ ներկայացվում է իր սցենարով գրված՝ 6 միլիարդին պարտադրվող, համաշխարհային - համամարդկային նոր մեծ ողբերգություն՝ տրամաբանական շարունակությունը ամբողջ XX դարի ընթացքում իրագործած սցենարի:

Սա է Լիբանանի նկատմամբ Իսրայելի ագրեսիայի առաջին օրերին, Միջին Արևելքի, այդ թվում՝ հայության, ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ ներկայումս (ժամանակագրական որոշակի հաջորդականությամբ) իրագործվող ԱՄՆ-ի և Եվրոմիության ծրագրած հանցագործ քաղաքականության՝ Ռալֆ Պիտերսի կազմած քարտեզով[1], նաև հիմնական դրվագներով (բաց տեքստով և ուղիղ խոսքով) արված բացահայտումը[2]:

Հեշտ է նկատել, որ Արևմուտքի հետապնդած նպատակն ու դրան հասնելու ընդհանուր գործելաոճը նույնն է, ինչը իրագործման էր դրվել անցյալ դարասկզբին՝ որպես աշխարհին տիրելու անգլիական և եվրոբոլշևիկյան իրար լրացնող ծրագրեր: Որոնք, որպես իրագործվող քաղաքականություն, ժամանակին բաց տեքստով (ինչպես հիմա) ներկայացվեցին՝ որպես Լոուրենս Արաբացու[3] (1919թ.) և Տրոցկու[4] (1921թ.) բացահայտումներ: Նույնն է, ինչն էր Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի հրահրման բուն դրդապատճառներն ու 1985-ից, հանձինս ԽՍՀՄ «պերեստրոյկայի», ընթացք տրված աշխարհի ընդհանուր վերակառուցման՝ երկրների ստրկացման ծրագիրը: Փոխվել է միայն նախկին իրագործման դասական ձեռագիրը. 1945-ի գարնանը՝ դեռ Երկրորդ համաշխարհային պատերազմը ավարտելուց առաջ, որդեգրված, այսպես կոչված, Ալեն Դալեսի հայտնի ծրագիրը, ըստ որի, արտաքին անմիջական ազդեցությունը իրականացվում է ներքին ներուժի (երկրներում իշխանության բերված, նաև շահադիտորեն և ակնկալիքով նրանց աջակցող, այլոց ինքնաստրկացնող հանցագործ տարրի), նաև նրանց միջոցով կեղծ արժեքների քարոզչության լկտի բռնությունների տարատեսակ միջոցներով: Ի դեպ, որի հրեշավոր «արդյունավետությունը» փորձարկվեց և 1957-97թթ. գործնականորեն հաստատվեց, հանձինս փուլ առ փուլ, դրվագ առ դրվագ կառուցվող Եվրոմիության իրողության՝ որպես Ա. Դալեսի խոսքերով ասած, եվրոպական երկրների ժողովուրդների հիմարացման և ապուշացման ինքնաստրկացման գործընթաց:[5] Հիմա հերթը Միջին Արևելքինն է: Վաղը՝ Ռուսաստանինը… ու բուն Արևելքինը:

Այդ են վկայում **Ռալֆ Պիտերսի** կողմից **վերագծված քարտեզն** ու կից տրվող **«**Միջին Արևելքի նոր քարտեզը՝ ըստ արյունակցական կապերի և հավատի նմանությունների» հոդվածը, որտեղ, ըստ **Ռալֆ Պիտերսի** մտածումի, «***Միջազգային սահմանները երբեք էլ ամբողջովին արդար չեն եղել***»:

Պարզվում է, որ ներկայիս երկրները այլևս պետական սահմաններ չունեն, կան միայն «միջազգային» սահմաններ: Կա նաև ինչ-որ Համաշխարհային (պարզ է՝ ընդամենը մեկ) Կառավարություն, որն էլ ամբողջ աշխարհը (ցամաքն ու ջրերը), ըստ իր հայեցողության, ցանկության, բաժանում և վերաբաժանում է երկրների միջև. «***այս կամ այն երկրին պարտադրված անարդարության աստիճանը (որով նրան ստիպել են միանալ մեկին և անջատվել ուրիշից) չափազանց տարբեր է եղել***»:

Պարզվեց, որ 1945-ին՝ համաշխարհային երկրորդ մեծ աղետից հետո, մարդկային ճակատագրերի բազմամիլիոն կորուստների և ողբերգությունների գնով, ֆաշիզմի՝ մարդկության ստրկացման համաշխարհային ոտնձգություններից սեփական տունը, արժանապատվությունը, կյանքն ու հայրենիքը պաշտպանելը նույնն է՝ երկրի պետական սահմանները ամուր պահելու իրողությունը, ինչպես և հետագա տասնամյակներում, նույնական ողբերգությունների գնով, սեփական կամ գերտերությունների կողմից՝ նրանց ցանկությամբ վերախմբագրված սահմանները պահելը, ինչպես և այն վերակագնելու ցանկությունը այլևս ազգերին ու ժողովուրդներին չի պատկանում. միջազգային են: Նույնն է, որ ազգերի ու ժողովուրդների ճակատագրերը, ներկան ու ապագան, նույնպես իրենցը չէ. միջազգային են: Ուստի և նրանց բոլորի լինել կամ չլինելը, ազատություն և անկախություն ունենալ կամ չունենալը, գոյատևման մղձավանջում տառապելը կամ էլ երջանիկ ապուշի սոցիալական ապահովվածության և սակայն բարոյահոգևոր ու բարոյամտավոր սնանկության մեջ «ապրելը» այսուհետ կախված է միջազգայն սահմաններից, նույնն է՝ քո սեփական կենսածնի ու կենսաբովանդակությունը որոշողներից:

Պարզվեց նաև, որ Ռալֆի քարտեզում նշված երկրներին ***«պարտադրված սահմանների անարդարության աստիճանը»*** այսօր չի համապատասխանում ԱՄՆ-ի ներկայիս քաղաքական աշխարհաճանաչողության պահանջներին: Եվ այնքան տարբեր է. «□, ***որքան, ասենք, անկախությունը՝ բռնատիրությունից, օրենքի իշխանությունը՝ ահաբեկչությունից, հանդուրժողականությունը՝ դաժանությունից և նույնիսկ խաղաղությունը՝ պատերազմից***», որ կարիք ունի վերաճշտման, ասել է թե քարտեզում ներառված երկրներից որի՞ն է, որ պետք է տալ «անկախություն» և որի՞ «բռնատիրությունով» է, որ այն պետք հակակշռվի, ո՞ր մեկին է պետք «օրենքի իշխանություն» հարկադրել և որո՞վ է, որ հնարավոր կլինի նրա նկատմամբ «ահաբեկչություն» իրականացնել, ո՞ր երկրին է պարտադրվելու «հանդուրժողականություն» և որո՞վ է նրա նկատմամբ «դաժանություն» իրագործվելու, ի վերջո, ո՞ր մեկից է պահանջվելու «խաղաղություն», և որո՞վ է նրան «պատերազմ» պարտադրվելու:

Իսկ քանի որ «***Միջին Արևելքում… «անարդար սահմանները» առաջացնում են առավել բարդ խնդիրներ, որոնց լուծումը վեր է տեղական իշխանությունների հնարավորություններից***», ապա այդ ամենը փորձել է լուծել քարտեզի հեղինակը, մեղմ ասած «զգուշացնելով», որ «***Այդուհանդերձ, ինչքան էլ մեր պատկերացմամբ կազմված նոր քարտեզը թերություններ ունենա, առանց սահ-***

մանները վերագծելու, մենք երբեք խաղաղություն չենք տեսնի Միջին Արևելքում»:

Քարտեզը հավաստում է, որ 1921-ին Արցախը Հայաստանից անջատելու և Արևմուտքի կողմից հորինված նորաստեղծ Խորհրդային Ադրբեջանին բռնակցելու նախկին իրողությունը շարունակում է համապատասխանել միջազգային սահմանների արևմտյան արդարության ներկայիս քմահաճ պահանջներին: Այնպես որ Ռալֆ Պիտերսը՝ կենտրոնական իշխանության պաշտոնյան, մեզ և մեր տեղական իշխանությունների համար պարզել է, որ առանց կենտրոնի միջազգային թույլտվության, սեփական կամոք և ուժերով, հանուն արցախահայության հետագա լինելությանն անգամ, անցյալ դարասկզբին Հայոց հայրենիքի 9/10-րդը բռնազավթած մեծ անարդարությունը մի փոքր մասով անգամ վերականգնելը, այն էլ առանց Արևմուտքի նվիրատվական օգնության, չէր կարելի: Քանզի, գուցե թե միջազգայնորեն որոշված է (և այդ մենք է, որ դեռ չգիտենք), որ առաջիկայում, ինչպես նույն 1921-ին, «Ռուս - թուրքական բարեկամության» պայմանագրով Հայաստանից բռնանջատված ու Ադրբեջանին բռնակցված (խնամատարության տրված) Նախիջևանի Ինքնավար Հանրապետության, նույնպես և ազատագրված Արցախի Հանրապետության պետական սահմաններից ներս հայություն չպետք է լինի: Նրանց պետական սահմաններն էլ, ինչպես նշված է քարտեզում, կտարալուծվեն, պարզապես չեն լինի ու չեն խեղաթյուրի ընդարձակվող նոր Ադրբեջանի «միջազգային» սահմանները:

Իսկ տասնամյակից ավել ծգվող Արցախի, այսպես կոչված, «լոկալ կոնֆլիկտի խաղաղ կարգավորումը» ընդամենը ժամանակ ձգելու միջոց է, մինչև որ Իրանը Արևմուտքին կզիջի քարտեզում նշված հյուսիսային տարածքը՝ ի լրացումն ընդարձակվող Ադրբեջանի «միջազգային» սահմանների:

Այս ամենը տեսել էինք, նոր չէր, հին իրողություն է: Ծանոթ էինք դեռ 1921-ից ու բախվում ենք դրան 1988-ից առ այսօր: Նորը, կարելի է ասել «զարմանահրաշ» նորությունը մեզ համար Ռալֆ Պիտերսի այն բացահայտումն է, ըստ որի, պարզվում է, որ «էթնիկ զտումները» ոչ թե ֆաշիստական, այլ հենց ամերիկյան ժողովրդավարությանը հատուկ, ճիշտ է կեղտոտ, բայց լիովին ժողովրդավարական՝ էթնոսների զտման գործընթացը կարգավորող, բնականաբար գաղտնի իրականացվող իրողություն է. ***«Հիշենք նաև հինգհազարամյա վաղեմություն ունեցող մի փոքրիկ կեղտոտ գաղտնիք: էթնիկական զտումն իր գործն անում է»:***

Իսկ այդ «գործ» ասվածը վերաբերում է մարդկության դեմ կատարվող հանցագործությանը՝ ցեղասպանությանը: Չնշելով, նաև չհամաձայնվելով անշուշտ, որ հենց իր առաջարկած քարտեզը Միջին Արևելքում նոր ցեղասպանություններ, ասել է թե «էթնիկ զտումներ» իրականացնելու, ինչպես և ազգամիջյան նոր բախումներ և քաղաքացիական կոչվող ներքին՝ անջատողական ու արտաքին՝ «լոկալ կոնֆլիկներ» կոչվող պատերազմներ հրահրող, քարոզող, նաև դրանք ձևավորելուն նպաստող հանցագործ գործունեություն է:

Փորձելով իր բնորոշմամբ «**վերանայել ամենաշատ տուժած կամ «խաբված» խմբավորումների վիճակը**», որոնց «**թվում են քրդերը**», չհիշելով անշուշտ, որ նույն այդ քրդերն էին, որոնք մինչև ցեղասպանությունը և 1915-ից հետո մեծմասամբ «**ամենաշատ տուժած կամ «խաբված»,** իսկ իրականում մեծ մասամբ թուրքական պետության կողմից քաջալերված ու հրահրված, թուրքերի հետ միասին Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի տարածքում կոտորում էին հայերին, հույներին, ասորիներին, եզդիներին և այլոց, հենց միայն նրանց ունեցվածքին և ինչքին տիրանալու համար՝ ինչպես խոստացել էր պետությունը: Նա բարձրացնում է ամբողջ Արևմտյան Հայաստանի, նաև հարակից, ներկայիս Սիրիայի, Իրաքի և Իրանի որոշ տարածքների վրա «**Ազատագրվող Քուրդիստան**» ստեղծելու հարցը. «***Դիարբեքիրից մինչև Թավրիզ երկարող անկախ Քուրդիստանը կլինի նաև Բուլղարիայի և Ճապոնիայի միջև գտնվող ամենաարևմտամետ պետությունը***», համոզում է **Ռալֆ Պիտերսը** արևմտյան իր գործընկերներին:

Այդուհանդերձ, նաև շտապում է որպես վերջին ճշմարտություն հայտարարել. ***«Իսկ մի սարսափելի չարագործություն, ինչպիսին է հայերի հանդեպ հոգեվարքի մեջ գտնվող Օսմանյան կայսրության ցեղասպանությունը, երբեք չի կարող փոխհատուցվել տարածքային նվիրատվությամբ»***:

Ասել է թե միջազգայնորեն կարելի է տվյալ ազգին պատկանող երկիրը ամբողջությամբ զավթելու նպատակով՝ ցեղասպանություն իրագործել: Եվ քանի որ միջազգային սահմաններում ներառվող տարածքները, տվյալ դեպքում, ԱՄՆ-ը ինքն է ծառայությունների դիմաց որպես «նվեր տալիս», ապա թող հայերը հույս չունենան Արևմտյան Հայաստանը որպես «***նվիրատվություն***» ստանալու: Առավել ևս, որ ժամանակին եվրոպական գերտերությունները նույնպես դեմ չեն եղել Հայերի ցեղասպանության ճանապարհով Հայկական հարցի լուծմանը, ասել է թե Արևմուտքի համար (ըստ Ռալֆի) ոչ միայն անցյալում, նաև ներկայում, կարևոր է հայկական տարածքները վտարանդի՝ աշխարհասփյուռ ժողովրդից «սեփականակազրկելու», ասել է թե հայությանն իր հայրենիքից բռնի օտարելու խնդիրը:

Ռալֆի քարտեզը գալիս է խորացնելու մեր համոզմունքը առ այն, որ աշխարհը վերակառուցող, նոր կարգեր հաստատող Արևմուտքը ևս մեկ անգամ ինչպես, 1918-22-ին, 1941-43-ին նաև 1953-61-ին փորձում է Արևելյան Հայաստանում ավարտի բերել, իրեն առ այսօր շահեկան թվացող 1915-23-ի Հայերի ցեղասպանությունը: Խնդիր, որը նախ և առաջ, սթափություն և զգոնություն է պահանջում հայից, Հայոց երկու պետությունների ղեկավարներից, նաև ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդից, ՄԱԿ-ից և բոլոր առաջադեմ երկրներից:

Բավ է: Համբերությունն էլ սահման ունի, այն էլ ոչ քմահաճ ու մշտապես արդարացի:

Փառք Աստծո, որ անգամ, ըստ արևմտյան քաղաքական մտածողության, գոնե համբերության սահմանը ըստ երկրների է, ազգային է, պետական և ոչ՝ միջազգային:

Արդ, այսուհետ և առմիշտ պարտավոր ենք կռել ու կոփել արտաքին բոլոր մարտահրավերները դիմակայող Հայոց պետության և պետականության գերհզոր զենքը՝ իրավական հենքը:

Եվ, ըստ այդմ դիմակայենք, նաև իրենց սեփական (1 քառակուսի մետր) տեղը ցույց տանք բոլոր էթնիկ զտումներով ու ազգերի և ժողովուրդների բուծումներով զբաղվողներին, նաև ցեղասպանություններ, ազգամիջյան ու կրոնական բախումներ, քաղաքացիական, լոկալ և գլոբալ պատերազմներ ծրագրող ու քարոզող և, ըստ այդմ, «միջազգային» սահմաններ գծող, ու իրենք իրենց աշխարհի տիրակալ երևակայող մոլեռանդներին:

Այս մտահոգություններից մեկնած դիմում ենք ՀՀ Նախագահին, ՀՀ Արտգործնախարարին և **ՀՀ Ազգային Անվտանգության Խորհրդին**, որ **հիմք ունենալով** ԱՄՆ քաղաքացի Ռալֆ Պիտերսի «ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՈՐ ՔԱՐՏԵԶԸ ԸՍՏ ԱՐՅՈՒՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՏԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» հոդվածը, համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության և միջազգային մի շարք այլ համապատասխան պայմանագրերի՝ առաջարկել ԱՄՆ-ի իշխանությանը **պատասխանատվության ենթարկել Ռալֆ Պիտերսին**, նաև **«Չինյալ ուժերի հանդեսի» խմբագրությանը**, իրենց հրապարակումով նշված երկրների, այդ թվում՝ ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգությանը սպառնալու, այն է՝ Միջին Արևելքում ազգամիջյան բախումներ և քաղաքացիական պատերազմներ, երկրների միջև «լոկալ կոնֆլիկտներ» ու պատերազմներ հրահրելու և քարոզչություն անելու, ինչպես և մարդկության դեմ կատարվող հանցագործությունը՝

→

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄՆ ՈՒ ԹՈՒՐՔ-ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատի կողմից Հայոց ցեղասպանությունը մերժող օրինագծի ընդունումը մեծ հույզեր առաջացրեց թե՛ հայկական, թե՛ թուրքական միջավայրում: Սփյուռքը ցնծության մեջ է, Հայաստանի Հանրապետությունը՝ ոչ պակաս ուրախության: Անկարան խեղդվում է զայրույթից: Կարճ ասած՝ հայ-թուրքական բարիկադների երկու կողմերում էլ էմոցիոնալ վերելք է:

Արդյոք դա՞ էր մեզ պետք:

Անշուշտ, Հայկական հարցի միջազգային քննարկման համար սա լավ առիթ հանդիսացավ: Եվս մեկ անգամ ամբողջ աշխարհի լրատվամիջոցները ներկայացրեցին լուրը, քննարկումներ ու բանավեճեր սկսվեցին, Թուրքիան, իր հերթին, իր մշտապես հիստերիկ արձագանքով օգնեց մեզ՝ ավելի մեծ աղմուկ բարձրացնելով և ավելի շատ լսարան գրավելով: Եվրոպան կրկին ագամ Թուրքիային ցույց տվեց իր տեղն ու հասկացրեց, որ անդամակցության ուղին այդքան էլ անփուշ չի լինի: Սակայն, ամեն դեպքում, սա դեռ ապտակ չէ: Եթե դիտարկենք եվրոպացիների, մասնավորապես Ֆրանսիայի քաղաքականությունն այս հարցում, ապա նրանք վերջնական ոչ մի որոշում չեն ընդունում, քանի որ եվրոպական դիվանագիտությունն է այդպիսին. «Եթե ընդունենք վերջնական որոշում, ապա մանևրելու դաշտ չի մնա թե՛ մեզ, թե՛ Թուրքիայի համար, իսկ առանց մանևրների ու սակարկության էլ ի՞նչ դիվանագիտություն»:

Մի քանի տարի առաջ Ֆրանսիան ընդունեց Հայոց ցեղասպանության մասին որոշում: Ապա այս տարվա մայիսին, փորձելով ճնշումներ գործադրել Թուրքիայի վրա, սպառնաց վերոնշյալ պատժիչ օրինագծի ընդունմամբ: Այս օրերին նույնպես, ըստ էության, ընդունված որոշումը դեռ ոչ մի բան չի էլ նշանակում: Ըստ դեպքերի զարգացման տրամաբանության՝ Ֆրանսիան պետք է որ մի քանի անգամ ձգձգի հարցի քննարկումը վերին պալատում, իսկ նախագահի ստորագրության մասին խոսելը դեռ շատ վաղ է. այն կապված է արդեն թուրք-եվրոպական հարաբերություններից և ոչ թե մեզանից:

Ի՞նչ տեղի ունեցավ: Թուրք հասարակությունում վերջին տարիներին ակտիվացել են ազատականները, որոնք համեմատաբար ավելի ազատ քննարկում են դեռևս տաբու համարվող հարցեր, ինչն արդեն առաջընթաց է Թուրքիայի համար: Սա ապագայում կարող էր նաև արտացոլվել թուրք-եվրոպական հարաբերություններում, ինչը բնավ Փարիզին ձեռնտու չէ: Բացի այդ, Անկարայի հանդեպ մի շարք ճնշումների արդյունքում, Թուրքիայում վերելք է ապրում նաև ազգայնականությունը՝ ի հակակշիռ ազատականների: Ընդհանուր առմամբ, կանխատեսվում է, որ 2007թ. կայանալիք խորհրդարանական ընտրություններում երկրում իշխանության են գալու ազգայնականները, որոնք կողմնակից չեն Թուրքիայի լիիրավ անդամակցությանը Եվրամիությանը: Իսկ ի՞նչ կարող էր անել Փարիզը ազգայնականներին օգնելու համար: Ընդունել Թուրքիայի համար ամենացավոտ հարցի կապակցությամբ մի որոշում, որն էլ ավելի կամրապնդի թուրք ազգայնականների դիրքերը և նրանց քաղաքական քարոզարշավում հակաեվրոպական տրամադրություններ տարածելու նյութ կտա:

Ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանությունը մերժող օրինագծի ընդունման մեջ մենք այդքան էլ ազդեցիկ դեր չենք ունեցել: Մեզ թույլ են տալիս կարծել, որ դա մեր լոբբինգի արդյունքն է. սակայն, ինչպես դա տեղի է ունենում ԱՄՆ-ում, եթե ուժերին ձեռնտու չլիներ ընդունել այն, ապա մեր լոբբինգը ոչ մի արդյունք չէր էլ ունենա ու դեմ կառներ պողպատե պատի:

Եվրոպան շատ լավ գիտակցում է, որ Հայաստանի ու Թուրքիայի թույլ կետը Հայոց ցեղասպանությունն է: Մեզ հաճելի պահեր պարգևելու ու թուրքերին խրտնեցնելու մի շատ դյուրին միջոց, որի համար պետք չէ ո՛չ դրամ ծախսել, ո՛չ էլ երկար նախապատրաստվել, ավելին՝ դա ձեռնտու է առաջին հերթին հենց իրենց՝ եվրոպացիներին, սակայն այդ քաղաքական խաղերից ո՛չ Հայաստանն է դեռ շահել, ո՛չ էլ Թուրքիան՝ փլուզվել:

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ցեղասպանությունը, նաև դրա հետևանքները, որպես պատասխանատվության ոչ ենթակա, ասել է թե անպատժելի չարագործություն որակելու, ուստի և, ըստ այդմ, նոր ցեղասպանություններ քաջալերելու և քարոզչություն տանելու համար:

ԿԱՐԵՎՈՐ ԵՆՔ ՀԱՄԱՐՈՒՄ ՆԱԵՎ, որ ԼՂՀ Նախագահը, ԼՂՀ Արտգործնախարարը և ԼՂՀ Ազգային Անվտանգության Խորհուրդը ԼՂՀ ՊԵՏՈՒԹՅԱՆ և ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆՈՒՆԻՑ ԴԻՄԵՆ ՀՀ Նախագահին (որպես ՄԱԿ-ի անդամ, ինչպես և Հայաստանի Անկախության Հռչակագրով և միջպետական պայմանագրերով ԼՂՀ ազգային անվտանգությանը սատարող երկրի ղեկավարի), նաև Միավորված Ազգերի Կազմակերպության Անվտանգության (ընդլայնված) Խորհրդի անդամ երկրների ղեկավարներին. ԼՂՀ պետությանը և ժողովրդին, ըստ Ռալֆ Պիտերսի ներկայացրած սցենարի, սպառնացող հնարավոր վտանգների կանխարգելման խնդրով:

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆՔ նաև, որ ԲՈՂՈՔԻ ՁԱՅՆ բարձրացնեն մեր երկրի ազգային անվտանգության հարցում պատասխանատվության զգացում ունեցող ՀՀ բոլոր քաղաքացիները, իշխող և ընդդիմադիր կուսակցությունները, հասարակական (գրանտներով և առանց գրանտների՝ ինքնուրույն գործող) կազմակերպությունները, ազգային ու հանրային կազմակերպչական մյուս բոլոր կառույցները…

Անտարբեր մնալ, չպահանջել ԱՄՆ-ից Ռալֆ Պիտերսին պատասխանատվության կանչել, նշանակում է նպաստել, նաև հանցակից դառնալ Միջին Արևելքին, այդ թվում՝ ԼՂՀ-ին և ՀՀ-ին սպառնացող միջազգային հանցագործության առաջիկա իրագործման խնդրում:

Ծանոթագրություն

1. Տես, «Ուխտ Արարատի» 4 (10) հունիս-հուլիս, 2006թ.:
2. Քարտեզին կից Ռալֆ Պիտերսի հոդվածի թարգմանությունը ամբողջությամբ, տես «Ազգ» 25.08.2006թ.:
3. Տես, ԱՅԴ ԱՆՏԱՆԵԼԻ ՀԱՅԵՐԸ (Լինկոլն Սթեֆընսի հարցազրույցը Լոուրենս Արաբացու (Թոմաս Էդուարդ Լոուրենսի) հետ, §Þ»Ù¦ Ññ ï ., º ñ»ð ³ Ý, 2004Ã.:
4. Տես, Լ. Բ. Տրոցկի, Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում, հոդվածը (ծանոթագրություններով), «Ուխտ Արարատի» 2 (8) փետրվար-մարտ, 2006թ., էջ 10-13:
5. Տես, «Պրավդա» 11-ը մարտի 1994թ., Մոսկվա, (1945-ի սկզբին, Յալթայի կոնֆերանսի օրերին՝ գաղտնի խորհրդակցության ժամանակ, Ա. Դալեսի ելույթը, որտեղ ներկա էին ԱՄՆ փոխնախագահ Հ. Տրումենը, ֆինանսների նախարար Հ. Մորգենթաուն և Բ. Բարուխը):

ՌԱԶՄԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Մինչ 20-րդ դարի երկրորդ կեսի Թուրքիայի քաղաքական կյանքի իրադարձություններին անցնելը հարկավոր է ուշադրություն դարձնել երկրի ներքաղաքական կյանքին դրան նախորդող ժամանակահատվածում: Կասկած չի հարուցում, որ քաղաքական էլիտան և առաջին հերթին քաղաքական առաջնորդները մեծ մասամբ ավագ սպայակազմի ներկայացուցիչներ էին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիային հաջողվեց խուսափել դրանում անմիջական մասնակցություն ունենալուց՝ շնորհիվ իր երկակի քաղաքականության: Այդ ամենի արդյունքում Թուրքիան ունեցավ ռազմական ու ֆինանսական ձեռքբերումներ հակամարտող երկու կողմերից էլ: Ցանկացած իրավիճակում հնարավոր առավելագույն ռազմական, քաղաքական և տնտեսական օգուտ կորզելու Թուրքիայի ձգտումը մշտապես բնորոշ է եղել իրենց հաշվենկատ քաղաքականությանը: Գլխավոր դերը այստեղ վերապահված էր ռազմա-քաղաքական էլիտայի առաջնորդ, նախագահ, գեներալ Իսմեթ Ինոնյուին:

20-րդ դարի երկրորդ կեսին քաղաքական և ռազմական իրադարձություններում շարունակում էին վճռորոշ դեր խաղալ ռազմական գործիչները: Նախորդ դարի երկրորդ կեսը սկսվեց թուրքական որոշ զորամիավորումների անմիջական մասնակցությամբ Կորեայում ընթացող պատերազմական գործողություններին և Թուրքիայի մուտքով ՆԱՏՕ: Ռազմականացման բուռն գործընթացը, որով աչքի ընկան 1950-ականները, Թուրքիայի համար ունեցան լուրջ հետևանքներ: Բազմակուսակցական համակարգի առաջացումը Թուրքիայում չնվազեցրեց ռազմական էլիտայի դերը երկրի քաղաքական կյանքում: Ռազմական գործիչների բազմաթիվ միտումները փաստարկվում էին Աթաթուրքի սկզբունքներին վերադառնալու անհրաժեշտությամբ:

1960թ. մայիսի 27-ին Անկարայի ռադիոն հայտնեց պետական հեղաշրջման մասին, որի գլուխ կանգնած էր բանակը: Ռազմական գործիչներն իրենց վրա էին վերցրել քաղաքական գործիչների դերը: Եվ քաղաքական էլիտան իր մեջ ներառեց զգալի թվով սպաներ: Պետության ղեկավարի գործառույթներն իր վրա էր վերցրել բանակի գեներալ Ջ. Գյուրսելը: Գյուրսելի հայտարարության մեջ նշվում էր, որ «թուրքական բանակը կատարել է իր պատմական առաքելությունը՝ փրկելով երկիրը շահադիտական վարչակազմից, որն իր ներքին քաղաքականությամբ երկիրը տանում էր դեպի թշվառություն»: Խոսքը, հետագայում կախաղան բարձրացված, իշխող Դեմոկրատական կուսակցության առաջնորդներ, երկրի նախագահ Ա. Մենդերեսի և վարչապետ Ջ. Բայարի մասին էր: Գյուրսելը ձևավորեց 38 հոգուց բաղկացած Ազգային միության կոմիտեն: Եվ կրկին պետության առաջնորդ դարձավ ռազմական գործիչը: Բանակի և հրամանատարական կազմի դերն ակտիվացավ նաև 1971թ.: Բարձրագույն ռազմական խորհրդի անդամները մարտի 14-ին եկան այն եզրակացության, որ ստեղծված իրավիճակում կառավարությունը Դեմիրելի գլխավորությամբ այլևս ի վիճակի չէ վերահսկել իրավիճակը երկրում ու, այդ իսկ պատճառով, պետք է պաշտոնաթող լինի: Եվ 1971թ. մարտի 12-ին երկրի նախագահ Սունային և Թուրքիայի Ազգային ժողովի երկու պալատներին հանձնվեց բարձրագույն ռազմական հրամանատարության հուշագիրը, որն ընթերցվեց ռադիոյով: Մարտի 12-ի հուշագրի տեքստը հայտարարում էր, որ «կառավարությունը երկիրը տարել է դեպի անարխիա, դեպի սոցիալ–քաղաքական խժդժություններ և չի ապահովել սահմանադրությամբ նախատեսված բարեփոխումների անցկացումը: Այս պայմաններում բանակն անհրաժեշտ է համարում ուժեղ կառավարության ստեղծումը, որը կապահովի երկրի զարգացումը Աթաթուրքի սկզբունքներով և սահմանադրությամբ նախատեսված բարեփոխումների անցկացումը»: Փաստացի, կրկին ռազմական գործիչներն իրենց վրա վերցրեցին երկրի փրկչի և պաշտպանի դերը:

1980թ. սեպտեմբերի 20-ին թուրքական ռադիոն հերթական անգամ հայտարարեց այն մասին, որ «զինված ուժերը իշխանությունը վերցրել են իրենց ձեռքը»: Նրանք նույնիսկ կասեցրին 1961թ. սահմանադրության գործունեությունը, ամբողջ երկրով մեկ արտակարգ իրավիճակ մտցրեցին, պաշտոնանկ արեցին կառավարությանը, արգելեցին բոլոր քաղաքական կուսակցությունների գործունեությունը, ցրեցին խորհրդարանը: Իշխանությունն ամբողջությամբ անցավ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) ձեռքը, որից հեռացվեցին բոլոր քաղաքացիական գործիչները: Գլխավոր շտաբի պետ Ք. Էվրենը, որը գլխավորում էր ԱԱԽ-ն, հայտարարվեց երկրի նախագահ: ԱԱԽ-ն առաջացել էր 1960թ. հեղաշրջումից հետո: Իրավաբանորեն դրա ստեղծումն ամրագրված էր 1961թ. Սահմանադրության երրորդ հոդվածով, որի համաձայն՝ ԱԱԽ-ը հանդիսանում էր բարձրագույն ռազմա-քաղաքական օրգան: Այն համակարգելու էր կենտրոնական քաղաքացիական և ռազմական հաստատությունների գործունեությունը ռազմական քաղաքականության ու ազգային պաշտպանության հարցերով:

Եվ կրկին տեղի է ունենում ռազմական գործիչների մեծ ներհոսք դեպի քաղաքական դաշտ, դեպի քաղաքական վերնախավ: Քաղաքականության մեջ ընդհանրապես բացառվեց քաղաքացիական գործիչների դերը: Նրանք իրականացրին այդ քայլը՝ ելնելով երկրում տիրող քաղաքական ճգնաժամից, որի ապացույցը 100-ից ավելի ընտրություններն էին, որոնք այդպես էլ մատնացույց չարեցին երկրի նոր նախագահին:

Անհնար է դիտարկել արդի Թուրքիայի Հանրապետության այս կամ այն խնդիրը, առանց հաշվի առնելու բանակի մասնակցության գործոնը երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում, որի հաշվին այսօրվա դրությամբ կուտակվել է ահռելի ռազմա-քաղաքական ներուժ: Ռազմական էլիտայի դերը շարունակում է աճել, ու համանման նկարագրությամբ իրադարձություններ չեն բացառվում ո՛չ մեր օրերում, ո՛չ էլ ապագայում, ամենայն հավանականությամբ, կրելով ավելի «քաղաքակիրթ» բնույթ:

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎՐԱ

Վրաստանում «վարդագույն» հեղափոխության արդյունքում Ռուսաստանը կորցրեց իր ռազմավարական կարևոր դաշնակիցներից մեկին: Ռուս-վրացական հարաբերությունների վատթարացումը հանգեցրեց այս երկու պետությունների միջև սուր հակամարտության: Այն դեպքում, երբ երկու պետություններն էլ կապված են փոխադարձ շահերով ու պարտավորություններով և ունեն բազմաթիվ լծակներ միմյանց վրա ներգործելու:

Դիտարկելով հակամարտությունը նեղ, տարածաշրջանային տեսանկյունից՝ ակնհայտ է դառնում, որ ռուս-վրացական հակամարտությունից ամեն կերպ օգտվում է Թուրքիան: Հզորացնելով իր ազդեցությունն ու ներկայությունը Վրաստանում՝ Թուրքիան ոչ միայն ապահովում է Վրաստանի տարածքով դեպի Ադրբեջան իր ազատ կապը, այլև մեծապես աջակցում է Ջավախքի հայաթափության՝ Մ. Սահակաշվիլու քաղաքականությանը: Պարզվում է, Թուրքիան երբեք էլ չի հրաժարվել «Մեծ Թուրանի» գաղափարից: Եվ պարզվում է, որ ինչպես նախկինում, այդ ճանապարհին կրկին որպես խոչընդոտ կանգնած են հայերն ու այս անգամ «փոքրիկ» Հայաստանը:

Տարածաշրջանային նմանատիպ զարգացումները, մեղմ ասած, նպաստավոր չեն Հայաստանի համար: Հայաստանը հայտնվել է մի իրավիճակում, երբ երկրի չորս կողմն էլ սուր հակամարտությունների գոտի է և չափազանց պայթյունավտանգ՝ հայկական երկու պետությունների համար: Նախ՝ հակամարտության մեջ են գտնվում Հայաստանի երկու կարևորագույն դաշնակիցներն ու գործընկերները (Վրաստանը՝ որպես անմիջական հարևան ու համեմատաբար հուսալի գործընկեր արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու առումով, և Ռուսաստանը՝ որպես գլխավոր ռազմական ու տնտեսական դաշնակից): Մյուս կողմից, Իրանի շուրջ ծավալվող վտանգավոր զարգացումները կասկածի տակ են դնում Հայաստանի ելքը արտաքին աշխարհի այս պետության տարածքով:

Ջավախք, գյուղ Արագովա

Արդյունքում, ակտիվորեն գործող Թուրքիա-Ադրբեջան դաշինքին ավելանում է Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան «եռյակ միությունը», ինչը չի սահմանափակվում տնտեսական համագործակցությամբ: Ադրբեջանը իր նավթն ու գազը Վրաստանի և Թուրքիայի տարածքով դուրս է բերում Արևմուտք, ինչը խորացնում է Հայաստանի տնտեսական շրջափակումը: Մյուս կողմից, ադրբեջանական գազը կարևոր նշանակություն ունի Արևմուտքի համար, քանի որ միակ այլընտրանքն է իրանական և ռուսական գազի: Իհարկե, Թեհրանը շահագրգռված է Իրան-Հայաստան գազամուղի երկրորդ ճյուղի շինարարությամբ, բայց դա, կարծես, անընդունելի է և՛ Ռուսաստանի, և՛ Արևմուտքի համար:

Վրաստանում Մ. Սահակաշվիլին, իր հերթին, աջակցում է Ջավախքի և մյուս վրացական շրջանների հայաթափման գործընթացին: Ավելին, պատրաստ է մեծ թվով թուրքերի վերաբնակեցնել հայերի փոխարեն և, բացառության կարգով, նրանց տալ երկքաղաքացիություն, չնայած Վրաստանի Սահմանադրությամբ նման դրույթ չի ամրագրվում: Սահակաշվիլին իր այս քաղաքականությամբ այնքան հեռու է գնացել, որ իր քաղաքական թեզից հրաժարվելու դեպքում Թուրքիայի հետ լուրջ խնդիրներ կունենա:

Նման իրավիճակում, ծանրանում է Հայաստանի վիճակը արտաքին քաղաքական կողմնորոշման առումով: Ո՞ւմ պաշտպանել. իր ռազմավարական դաշնակցի՞ն, թե՞ անմիջական հարևանին: Այսօր Հայաստանը կարողանում է պահպանել համեմատական չեզոքություն: Սակայն որքան, պարզ չէ: Ի վերջո, հակամարտության կողմերից մեկը Հայաստանին կարող է կանգնեցնել փաստի առաջ և այդ դեպքում գործնականում դժվար կլինի պահպանել չեզոքություն: Պետք է հաշվի առնել նաև, որ Հայաստանը թե՛ Ռուսաստանում, և թե՛ Վրաստանում իր քաղաքացիների անվտանգությունն ապահովելու և պաշտպանելու խնդիր ունի:

ԵՍԹԵՐ ՀԼՂԱԹՅԱՆ
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ

Ամսագրի հաջորդ համարում կներկայացնենք Էդգար Հելհելյանի «Ջավախքի ինքնավարության խնդիրները» հոդվածը:

ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՄԲԻ

Վրաստանում հայ և ադրբեջանցի փոքրամասնություններով բնակեցված Սամցխե-Ջավախք և Քվեմո-Քարթլի տարածաշրջաններն, ըստ Միջազգային ճգնաժամային խմբի (ՄՃ), դեռևս Օսիայի և Աբխազիայի նման Վրաստանի տարածքային ամբողջականությանն սպառնացող վտանգ չեն, սակայն այս տարածքներում լարվածությունն ակնհայտ է: Միջազգային ճգնաժամային խմբի «Վրաստանի հայ և ադրբեջանցի փոքրամասնությունները» վերջին զեկույցն ուսումնասիրում է այս երկու համայնքների դժգոհությունները: Ըստ այդմ, ՄՃ-ի գնահատմամբ, Վրաստանի կառավարությունը պետք է լուրջ քայլեր ձեռնարկի երկրի էթնիկ ծագմամբ հայկական և ադրբեջանական տարածքներում հակամարտությունից խուսափելու համար:

ՄՃ-ի զեկույցն արձանագրում է, որ Վրաստանի բնակչության 12 տոկոսը կազմող այս փոքրամասնությունների ինտեգրման ուղղությամբ առաջընթաց չկա, հայերն ու ադրբեջանցիները լավ չեն ներկայացված հանրային կյանքի որևէ բնագավառում, հատկապես կառավարող օղակներում: Բացի այդ, այս ազգային փոքրամասնությունների և Թբիլիսիի երկխոսության պակասը սաստկացնում է խտրականության և օտարացման ընկալումները: «Թբիլիսին պետք է շատ ավելին անի, որ վստահություն ստեղծի և խրախուսի փոքրամասնություններին՝ լուծելու իրենց խնդիրները պետական կառույցների և ոչ թե փողոցի միջոցով»,- նշել է ՄՃ-ի կովկասյան բաժանմունքի տնօրեն Սաբինա Ֆրեյզերը:

«Ազգ», 28.11. 2006թ.

ԲԱՔՈՒ-ԹԲԻԼԻՍԻ-ՋԵՅՀԱՆ

2006թ. հուլիսի 13-ին տեղի ունեցավ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի բացման արարողությունը: Այդ իրադարձության գեոքաղաքական նշանակության մասին է վկայում բացման արարողակարգին երեք երկրների՝ Թուրքիայի, Ադրբեջանի ու Վրաստանի նախագահների, ինչպես նաև ԱՄՆ-ի էներգետիկայի նախարար Սամուել Բոդմանի ու «British Petroleum»-ի նախագահ Ջոն Բրաունի ներկայությունը: ԲԹՋ-ն ստեղծված է ապահովելու եվրոպական սպառողներին Կասպիական ավազանի վիթխարի ռեսուրսներով:

Նախագծի նկատմամբ հսկայական հետաքրքրություն է ցուցաբերում նաև «Արևմուտքի լավագույն ընկերը» Իսրայելը, որը նույնպես սկսել էր գնել կասպիական նավթը՝ չսպասելով հուլիսի 13-ին: Իսրայելը շահագրգռված է ադրբեջանական նավթի տրանզիտով դեպի Մերձավոր Արևելք՝ Ջեյհանից Աշկելոն-Էլոտ խողովակաշարով դեպի Կարմիր ծով, իսկ այնտեղից էլ արդեն այնպիսի մեծ շուկաներ, որպիսիք են՝ Չինաստանն ու Հնդկաստանը: Այդ նախագիծը թերևս ավելի հետաքրքիր է հենց Իսրայելի համար, քան նրա եվրոպական գործընկերների, քանի որ ԲԹՋ-ի նավթը չի բավականացնի ո՛չ Եվրոպային, ո՛չ Ասիային:

Նավթամուղի երկարությունը 1767 կմ է, և այդ ցուցանիշով այն զիջում է միայն «Դրուժբա» խողովակաշարին (4000 կմ): Վարկերի տոկոսների հետ միասին այն ներկայումս գերազանցել է 4 մլրդ դոլարի սահմանը:

Խողովակաշարի կառուցման ժամանակ գլխավոր շարժիչ ուժի դերում հանդես եկավ Վաշինգտոնը: Ընդորում, կատարելապես ակնհայտ է, որ ԱՄՆ-ի համար առավել կարևոր է ԲԹՋ-ի նախագծի իրականացման քաղաքական ասպեկտը, քան տնտեսական: Կասպյան տարածաշրջանի նավթի զգալի մասը բաժին է ընկնում ոչ թե ամերիկյան շուկային, այլ՝ եվրոպական:

Խողովակաշարի կառուցումը շատ թանկ արժեցավ նրա կառուցողների և մասնավորապես՝ «British Petroleum» ընկերության վրա, ինչի պատճառով էլ վերջինս ստիպված եղավ նավթի փոխադրման համար բավականին թանկ գին սահմանել. 21 դոլար մեկ տոննա նավթի դիմաց: Դա համարյա 1/3-ով ավելի է, քան ասենք Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարով (16.64 դոլար):

Հայտնի է, որ ԲԹՋ-ն անցնում է մոտ տասը սեյսմիկ անհանգիստ գոտիների միջով: Բացի այդ, խողովակաշարի բաժնետերերի համար ևս մեկ գլխացավանք է այն հանգամանքը, որ երթուղին անցնում է այն տարածքներով, որոնք ռազմական տեսանկյունից անվտանգ չեն: Դա վերաբերում է հայ-ադրբեջանական հակամարտության գոտուն, վրացական խռովարար ինքնավարություններին և Թուրքիայում քուրդ ապստամբներին: Մոտակայքում են գտնվում Իրաքն ու Սիրիան:

Դրա համար էլ պատահական չէ, որ տարածաշրջանում ԱՄՆ-ի ակտիվ մասնակցությամբ ստեղծվում է «Կասպիական Գվարդիա» («Caspian Guard»), որը կոչված է լինելու պաշտպանել խողովակաշարն ամբողջ երկայնքով: Ներկայումս ակտիվորեն քննարկվում է Ադրբեջանի, Վրաստանի ու Թուրքիայի միջև ռազմական միության հարցը: Այդ ուղղությամբ առաջին քայլը կդառնա ադրբեջանական-վրացական-թուրքական հատուկ ռազմական ստորաբաժանումների կազմավորումը, որոնք կոչված կլինեն պաշտպանել ԲԹՋ-ն: Առաջ է քաշվում նաև Թուրքիայի ժանդարմերիայի, Վրաստանի Պետական ծառայության հատուկ պաշտպանության և Ադրբեջանի Ներքին զորքերի համատեղ զինավարժությունների պլանավորման հարցը:

ԲԹՋ-ն կարող է բախվել մեծ խնդիրների՝ կապված շահութաբերության հետ: Խողովակաշարն ի վիճակի է տարեկան փոխադրել առավելագույնը 50 մլն տոննա նավթ:

Սկզբնական փուլում նախատեսվում էր, որ Ադրբեջանն ինքը ի վիճակի է ապահովելու մատակարարումների այդպիսի ծավալը: Սակայն Բաքվում ակնհայտորեն գերագնահատել էին իրենց ուժերը: Ադրբեջանական նավթագործները խողովակաշարին ի վիճակի են տրամադրել տարեկան 20-25 մլն տոննա նավթ, այն էլ միայն 2010-ին: Նախագիծը հնարավոր եղավ փրկել միայն նրանում Ղազախստանի նավթային ռեսուրսների շուտափույթ ներգրավմամբ (առաջին փուլում 7.5 մլն տոննա): Դա պետք է տեղի ունենար դեռևս 2005-ի մայիսին, երբ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևն այցելեց Բաքու, սակայն այդ ժամանակ ԱՄՆ-ին ու Ադրբեջանին չհաջողվեց Ղազախստանից երաշխիքներ ստանալ անհրաժեշտ ծավալի նավթի մատակարարումների հարցում: Դրանից հետո Ղազախստանի վրա ճնշումներն ուժեղացվեցին և ի վերջո 2006-ի հունիսի 19-ին Ադրբեջանի հետ կնքած համաձայնագրով Ղազախստանը միացավ ԲԹՋ-ին: Նախագծին միանալու հարցում Ղազախստանի նախագահի բավականին երկար մտածելը կապված էր հետևյալ երկու հանգամանքների հետ. ա) չէր ցանկանում հարուցել Ռուսաստանի դժգոհությունը, բ) ցանկանում էր նավթամուղ կառուցել դեպի արևելք՝ Չինաստան ու Հարավարևելյան Ասիա:

Ներկայումս ղազախական նավթը Կասպիցով Ադրբեջան է հասցվում հեղուկանավերի միջոցով: Ադրբեջանն ու Ղազախստանը ցանկանում են Կասպիցի հատակով խողովակաշար (Բաքու-Ակտաու) անցկացնել, սակայն Ռուսաստանն ու Իրանը դեմ են նավթամուղ կառուցելուն:

Մինչև ԲԹՋ-ի կառուցումը, ադրբեջանական նավթն արտահանվում էր երկու երթուղով՝ մինչև ռուսական Նովոռոսիյսկ և վրացական Սուփսա նավահանգիստները: Ներկայումս Բաքուն առավել կողմնորոշված է դեպի ԲԹՋ-ն և գտնում է, որ ռուսական երթուղին շահավետ չէ:

Պետք է նշել, որ նավթամուղի մի հատվածն անցնում է ամբողջ աշխարհում հայտնի Բորժոմյան կիրճով: Մասնագետների գնահատմամբ հանքային ջրի աղբյուրները կարող են աղտոտվել: Ներկայումս հանքային ջուրը կազմում է Վրաստանի արտահանման 10%-ը: Իր ժամանակին Վրաստանի Բնապահպանության նախարար Նինո Ցխոբաձեն հրաժարվել էր հաստատել տվյալ շրջանում նավթամուղի շինարարությունը: Հարցը լուծվել էր միայն Վրաստանի նախագահ Էդուարդ Շեվարդնաձեի անմիջական միջամտությունից հետո:

Արևմուտքի ռազմական ու քաղաքական այդ ծրագրերը անհանգստություն են առաջացնում նաև Հայաստանում և Իրանում: Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի խոսքերով՝ նավթամուղի շահագործումը կխախտի ուժերի հավասարակշռությունը Հարավային Կովկասում: Հայաստանին անհրաժեշտ կլինի գտնել այլընտրանքային տարբերակ տարածաշրջանում հավասարակշռությունը վերականգնելու համար: Վարչապետի խոսքերով, այդպիսի այլընտրանք կարող է հանդիսանալ Իրան-Հայաստան գազամուղը, որը շահագործման կհանձնվի 2007 թվականի հունվարի 1-ին:

Սակայն սխալ կլիներ նվազեցնել խողովակաշարի քաղաքական դերը: Խողովակաշարը ոչ միայն բարելավում է այն երկրների էներգետիկ իրավիճակը, որոնցով այն անցնում է, այլև նվազեցնում է եվրոպական սպառողների կախվածությունը պայթյունավտանգ և քաղաքական առումով անհուսալի Պարսից ծոցի տարածաշրջանի նավթից: Չնայած դրան՝ կասպիական նավթը ծծումբի մեծ պարունակության պատճառով իր որակով զիջում է մերձավորարևելյան նավթին:

Իր հերթին պաշտոնական Անկարան, ցանկանալով

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

Երբ հուլիսի 12-ին Երևանում ՌԴ տրանսպորտի նախարար Իգոր Լևիտինը հայտարարեց, որ ««Գազպրոմի» և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև համաձայնագիր է ստորագրվել, ըստ որի, ռուսական ընկերությանը հնարավորություն կտրվի մասնակցել Հայաստանի տարածքում իրականացվող գազային-էներգետիկ նախագծերին», պարզ դարձավ, որ Իրան-Հայաստան գազամուղի հայաստանյան հատվածը ևս կանցնի Ռուսաստանի վերահսկողության տակ, ինչպես մեր մյուս էներգետիկական օբյեկտները:

Ընդհանրապես, Իրան-Հայաստան գազամուղ կառուցելու տրամաբանությունը կայանում էր նրանում, որ մենք գազային առումով կախված չլինենք միայն մեկ աղբյուրից և հնարավոր «Ֆորս մաժորի» դեպքում չկանգնենք «կոտրած տաշտակի» առաջ, այլ ունենանք այլընտրանք: Սակայն, ստացվում է այնպես, որ իրանական գազը այդքան էլ չի կարող ծառայել այդ նպատակին:

Նախ և առաջ պետք է նշել, որ ռուսական քաղաքական ճնշումների հետևանքով Հայաստան մտնող խողովակաշարի տրամաչափը 1200մմ-ի փոխարեն դարձավ 700մմ, դրանով իսկ զրկելով Հայաստանին տարանցիկ դերից, որը կբերեր տրանզիտային գումարներ՝ զարգացնելով մեր տնտեսությունը:

Բացի այդ, ըստ պայմանագրի, Հայաստան մտնող յուրաքանչյուր 1մ^3 գազի դիմաց Իրանի Իսլամական հանրապետությունը պետք է ստանա 3 կվտժ էլեկտրաէներգիա:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Հրազդանի ՋԷԿ-ում 1մ^3 գազից հնարավոր է արտադրել 3,5-3,7կվտժ էլեկտրաէներգիա, ապա ստացվում է այնպես, որ այդ գազից մեզ է մնալու (3,5-3=0,5) 0,5-0,7կվտժ էլեկտրաէներգիա:

Հոկտեմբերի 26-ին «Հայռուսգազարդ» ընկերության գործադիր տնօրեն Կարեն Կարապետյանը լրագրողներին ասաց. «Տրամաբանական կլինի, որ գազամուղի հայաստանյան հատվածը անցնի «Հայռուսգազարդ»-ի ենթակայությանը»:

Իսկ հոկտեմբերի 30-ին ՀՀ և ՌԴ նախագահների հանդիպման ժամանակ ՌԴ նախագահ Վ. Պուտինն ասաց հետևյալը. «Հայաստանում կապիտալ ներդրումների թվով Ռուսաստանը առայժմ ամոթալի երրորդ տեղում է: Ասում եմ ամոթալի, որովհետև տարօրինակ է, որ Ռուսաստանը ներդրումներով առաջին տեղը չի գրավում ռազմավարական գործընկերոջ տնտեսությունում»: Պարզ է, որ այս հայտարարությունը գազամուղը «Գազպրոմ»-ին վաճառելու համար նախադրյալներ ստեղծելու միտում ուներ: Ռ. Քոչարյանը իր ռուս գործընկերոջն ի պատասխան ասաց. ««Գազպրոմ»-ի հետ Երևանի բոլոր համաձայնություններն իրականացվում են: Բոլոր լուրջ պայմանագրերը էներգետիկ նախագծերի առնչությամբ մտնում են իրականացման փուլ»:

Մեր կարծիքով գազամուղի հայաստանյան հատվածի հարցը վաղուց լուծված է, ուղղակի մնում էր հասարակությանը նախապատրաստել դրան՝ ապացուցելով դրա «նպատակահարմարությունը»:

Անդրադարձնելով էներգետիկ անվտանգության հիմնախնդրին և հաշվի առնելով նաև այն, որ ոչ միայն էներգետիկայի բնագավառն է այս վիճակում, հարկ ենք համարում նշել մեր ռազմավարական ոլորտներում առկա իրավիճակը:

Էներգետիկա. 80%-ից ավելին պատկանում է ՌԴ-ին:

Կապ. 90%-ը հիմա արդեն պատկանում է Ռուսական «Վիմպելկոմ» (Բիլայն) ընկերությանը: (ՀՀ կառավարությունը պատրաստ է վաճառել մնացած 10% բաժնեմասը, իսկ «Վիմպելկոմն» էլ պատրաստ է գնել այն՝ հրաժարվելով «Արմենթել»-ի մենաշնորհներից):

Տրանսպորտ. Նախատեսվում է երկաթուղու կոմերցիոն կառավարումը հանձնել որևէ ընկերության (վերահսկիչ փաթեթը մնալու է ՀՀ-ին): Պետք է մրցույթ հայտարարվի և որոշվի, թե ում են հանձնելու կառավարումը: Քննարկվում է նաև Ռուսական կողմի տարբերակը:

«Զվարթնոց» օդանավակայանը չի հանդիսանում պետության սեփականություն և դեռ լավ է, որ գոնե տերը հայկական ազգանուն ունի...:

Խմելու ջուր. Երևան քաղաքի խմելու ջրի մատակարարման ծառայությունը տրված է ֆրանսիական «Ջեներալ Դեզո» ընկերությանը:

Այս ամենին զուգահեռ, վերջերս շատ է քննարկվում էներգետիկ անվտանգության հիմնահարցը, ինչպես նաև՝ ազգային անվտանգության ռազմավարության հայեցակարգի մշակումը:

Ի՞նչ է, այսպե՞ս պետք է կառուցենք մեր ազգային անվտանգությունը...: Երբ պատասխանատու անձանց հարցնում ենք, թե ինչո՞ւ են վաճառել, պատասխանում են, որ մեր պետությունը գումարներ չունի, որպեսզի ինքը ներդրումներ կատարի և պահի ոլորտը կամ օբյեկտը իր վերահսկողության ներքո: Այս դեպքում ակամայից հարց է առաջանում. «Այս պետությունը որևէ մի բանի համար գումար ունի՞, թե՞ ոչ: Ցավոք, ստացվում է այնպես, որ ոչ մի բանի համար էլ գումար չունի:

Պարզապես, ասենք մի պարզ ճշմարտություն. **հանձնել երկրի ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտները օտարի վերահսկողությանը դա նույնն է, որ հանձնել երկիրը օտարի վերահսկողությանը...**

ՍԱՐԳԻՍ ՊԱՐՍԱՄՅԱՆ
ՀՊՃՀ էներգետիկայի դեպարտամենտի ուսանող

որևէ կերպ հակազդել Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարով, իսկ հետո արդեն Սև ծովով դեպի Եվրոպա նավթի փոխադրմանը, ինքնակամ կերպով Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով հեղուկանավերի անցնելու թույլտվության կարգուկանոն մտցրեց: Իր այդ քայլը Թուրքիան պատճառաբանեց Սև և Միջերկրական ծովերը միմյանց կապող նեղուցների (325 կմ) ծայրահեղ ծանրաբեռնվածությամբ: Այժմ Թուրքիան մտադիր է Ջեյհանը վերածել «թուրքական Ռոտերդամի»:

Ներկայումս Եվրոմիությունը խորապես անհանգստացած է ռուսական նավթից ու գազից կախված լինելուց: Այս ամենի պատճառով Եվրոմիությունը ստիպված է փնտրել նոր մատակարարներ ու փոխադրման երթուղիներ: Դրանցից մեկն էլ հանդիսացավ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարը, որի հաջողությունն ամբողջովին կախված է Վաշինգտոնից ու Աստանայից: Առաջինը հարձակումներից պետք է պաշտպանի խողովակաշարը, իսկ երկրորդը պետք է ապահովի նավթի մատակարարումների նախատեսված ծավալը, այլապես ԲԹՋ-ի կառուցումը տնտեսական առումով անիմաստ կլինի:

ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՖՂԱՆ ՄՈՋԱՀԵԴՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Աֆղանստանն իր վերաբերմունքն արտահայտեց Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ՝ ԽՍՀՄ-ի և Հնդկաստանի ղեկավարություններին ուղղված նախազգուշացման ձևով: Աֆղանստանի իսլամական կուսակցության ընդդիմադիր խմբավորման առաջնորդ Գյուլբեդդին Հեքմատիարը 1990-ականների սկզբին Ադրբեջանում և հնդկական Ջամու և Քաշմիր նահանգներում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որում, մասնավորապես, ասվում էր. «Աֆղանստանի մոջահեդները չեն կարող անտարբեր մնալ իսլամական աշխարհի խոցելի խնդիրների նկատմամբ: Մենք հավաստիացնում ենք, որ աֆղան մոջահեդները մեր եղբայրներին մարդասիրական օգնություն կցուցաբերեն»: Սակայն այդ «մարդասիրական օգնությունը» այդքան էլ մարդասիրական չէր. մի քանի տարի անց ադրբեջանական ղեկավարների օգնությամբ Աֆղանստանից զինուժ և զենք տեղափոխվեց Ադրբեջան:

Ադրբեջանի տարածքում աֆղան մոջահեդների ի հայտ գալու նախապատմությունը հետևյալն է. 1993թ. ամռանը, երբ ադրբեջանական զինուժն անհաջողություն էր կրում ղարաբաղյան ռազմաճակատներում, պաշտոնական Բաքուն գործարքի մեջ մտավ Աֆղանստանի ղեկավարության հետ՝ աֆղան մոջահեդներին Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի դեմ ռազմական գործողություններում ներգրավելու համար:

1993թ. հուլիսին Աֆղանստանի մայրաքաղաք Քաբուլ մեկնեց Ադրբեջանի ներքին գործերի նախարար Ռովշան Ջավադովը, որը հանդիպումներ ունեցավ Աֆղանստանի վարչապետ, աֆղանական «Հեզբ ի-Իսլամ» կուսակցության առաջնորդ Գ. Հեքմատիարի հետ, աֆղան վարձկաններ հավաքագրելու համար: «Հեզբ ի-Իսլամը» հանդիսանում էր աֆղանական մասնաճյուղի հիմքերից մեկը, այն Աֆղանստանում իրականացնում էր ալժիրցի և եգիպտացի մոջահեդների մարզումները:

Ղարաբաղ ժամանած աֆղան մոջահեդները, հիմնականում, Հեքմատիարի «Հեզբ ի-Իսլամ» խմբավորումից էին: Ադրբեջանական կողմի և մոջահեդների միջև միջնորդի դեր էր ստանձնել ոմն Վայդալլահ, ով կազմակերպել ու կանոնակարգել էր Ադրբեջանում վարձկանների ներգրավման և տեղաբաշխման աշխատանքը: Ամերիկացի լրագրող Թոմաս Գոլցի խոսքերով, աֆղան վարձկանների տեղափոխման գործընթացներին մասնակցում էին ամերիկյան մի քանի պաշտոնաթող գործակալներ, որոնք նախկինում ԱՄՆ հատուկ զորքերի կազմում ներգրավված են եղել «Իրան-Կոնտրաս» գործարքում:

Այս աննախադեպ գործընթացը

թաքցնելու համար հիմնադրվել էր «MEGA OIL» կոչվող կեղծ կազմակերպությունը: Այն գլխավորում էին ամերիկյան սպաներ Ռիչարդ Սեկորդը, Խարի Ադերխոլդը և Հարի Բեստը: Ամերիկացիների խոսքերով, դեռևս 1992թ. Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովի աշխատակազմի ներկայացուցիչները խնդրել էին իրենց կազմակերպել մեծաթիվ աֆղանցիների հավաքագրման աշխատանքները, ադրբեջանի նորակոչիկների մարզումները և նաև խթանել զենքի մատակարարումը Ադրբեջան՝ իրենց հայտնի աղբյուրներով:

Աֆղանները, որոնք ժամանեցին Ադրբեջան, տեղավորվեցին նախկին սովետական զորամասերի տարածքներում: Աֆղան մոջահեդների մարզումներն անցկացվում էին ամերիկյան և թուրքական հրահանգիչների հսկողության ներքո և աֆղանների խոսքերով, շատ դժվար էր ընթանում, քանզի. հրահանգիչները շատ պահանջկոտ էին, և աֆղաններից մեկն անգամ թուրք հրահանգչի հետ վեճի ժամանակ գնդակահարվել էր: Ադրբեջանը պատշաճ մակարդակով էր նախապատրաստվել աֆղան մոջահեդների ընդունմանը: Գործող բանակ էին զորակոչվել դարի և փուշտու լեզուներին տիրապետող թարգմանիչներ:

Հայկական կողմի ձեռքն ընկած փաստաթղթերից և ադրբեջանցի սպաների զեկույցներից պարզ է դառնում, որ աֆղանները ժամանակի ընթացքում ադրբեջանցիների համար բեռ դարձան, որովհետև նրանց մեծ մասը շատ պահանջկոտ էին սննդի և բուժօգնության հարցերում:

Ուշագրավ է ադրբեջանական ռազմական փաստաթղթերից մեկը, որում ներկայացված է ադրբեջանցի փոխգնդապետ Դ. Լյատիֆովի խոսքերն առ այն, որ այնպիսի տպավորություն է ստեղծվում, իբր «նրանք (մոջահեդները - Հ. Դ.) մեզ մոտ բուժման են եկել, այլ ոչ կռվելու»: Այդ ամենից բացի, հայկական կողմի տրամադրության տակ գտվող ռազմավարը ներառում է նաև, Աֆղանստանում և Պակիստանում հրատարակված գրականություն, ձայնագրություններ և չուղարկված նամակներ, ինչպես նաև ռազմական քարտեզներ և հրետանային հաշվարկների կազմակերպման հրահանգներ:

Արդեն 1993թ. օգոստոսի վերջին ղարաբաղյան ռազմադաշտի Ֆիզուլիի և Ջանգելանի ուղղություններում հայտնաբերվել էին ազգային տարազներով աֆղան մոջահեդների դիակներ: Հայ ազատամարտիկների վկայությամբ մոջահեդները կռվում էին համառորեն, բայց էական ոչնչով չէին կարողանում օգնել նահանջող ադրբեջանցիներին: Չնայած որ պաշտոնական Բաքուն փորձում էր ժխտել աֆղանցիների ներկայությունը հանրապետությունում, աղբյուրները մատնանշում էին Ադրբեջանում 1,5 -2 հազար աֆղանցիների ներկայությունը: Ընդ որում, ռազմաճակատում միաժամանակ գտնվում էին ոչ ավելի քան 200-300 մոջահեդ: Աֆղանցիները կռվում էին ըստ սահմանված կարգացուցակի՝ շաբաթվա մեկ օրը գտնվում էին դիրքերում, իսկ մնացած օրերին հանգստանում էին:

Մոջահեդների հիմնական մասը տեղակայված էր Ղարաբաղյան ռազմաճակատի հարավային ուղղությամբ՝ իրանական սահմանի մոտ: Աֆղան ռազմագերիներից մեկը՝ Բախտիար Վերբալաի Բաբերզային Մազարի-Շարիֆ քաղաքից, մասնակցել է Ղարաբաղյան ռազմաճակատի ռազմական գործողություններին Ֆիզուլիի ուղղությամբ: Նրա խոսքերով, ադրբեջանական հրամանատարությունը աֆղան վարձկաններից յուրաքանչյուրին խոստացել էր 5.000-ա-

կան ԱՄՆ դոլար պարգև պայմանագիրը լրանալուն պես: Գտնվելով Ադրբեջանում՝ վարձկաններն առաջին ամսում հազար մանաթ հոնորար էին ստանում, որը մեկ դոլարից մի փոքր ավելի էր:

Պետք է նշել, որ աֆղան վարձկանների պայմաններն ավելի գոհացուցիչ էին, քան ադրբեջանական զորամասերինը: Աֆղանները ապրում էին առանձին վայրերում և հազվադեպ էին շփվում ադրբեջանցի զինվորների հետ: Դրա համար կային մի քանի պատճառներ.

Առաջին. ադրբեջանցի զինվորները չէին պահպանում շարիաթի կանոնները և ալկոհոլ օգտագործելուց զերծ չէին մնում: Իսկ աֆղանները խստորեն հետևում էին Ղուրանում գրված առօրյա ծիսակարգերին:

Երկրորդ. քանի որ ադրբեջանական զորքերում կռվում էին նաև սլավոն վարձկաններ, որոնց աֆղացիները կոչում էին «շուռավի», վերջիններիս հետ տեղի էին ունենում բախումներ, որոնք հաճախ ավարտվում էին երկկողմ կորուստներով:

Երրորդ. Ադրբեջանի զինվորական ղեկավարությունը խուսափում էր աֆղանների մասնակցության վերաբերյալ ավելորդ բացահայտումներից, ուստի, և փորձում էր մեկուսացնել նրանց ադրբեջանական բանակի հիմնական համակազմից:

Չնայած Բաքուն մինչ օրս ժխտում է աֆղան զինվորների մասնակցության փաստը ղարաբաղյան պատերազմում, պաշտոնական Ստեփանակերտը բավականաչափ նյութեր ունի, որպեսզի ցրի բոլոր տեսակի կասկածները այս խնդրի շուրջ:

Նկատի ունենալով վտանգների զարգացումը և հետագա գործողությունների անընդհատ և աստիճանական ծավալումը և հակամարտության միջազգայնացումը՝ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ստիպված եղավ նամակով դիմել Աֆղանստանի Իսլամական Հանրապետության նախագահ Բուրհանուդդին Ռաբբանիին և երկրի վարչապետ Գուլբեդդին Հեքմատիարին, որում իր մտահոգություն էր արտահայտել ղարաբաղյան հակամարտությունում՝ ադրբեջանական բանակի շարքերում, աֆղան մոջահեդների մասնակցության փաստի շուրջ:

ՀՀ Լևոն Տեր-Պետրոսյանին հասցեագրված պատասխան նամակում Աֆղանստանի ղեկավարությունն՝ ի դեմս Բուրհանուդդին Ռաբբանիի, քննադատել է աֆղան քաղաքացիների մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի ռազմական գործողություններին և հանդես է եկել խնդրի խաղաղ ճանապարհով լուծման օգտին:

Ռաբբանին մասնավորապես գրում է. «Աֆղանական կողմը գիտակցում է հայկական իշխանության մտահոգությունները: Ես ուզում եմ մեծ ափսոսանքով հայտնել Ձեզ և Հայաստանի ժողովրդին, որ, իրոք, արկածախնդիր մի քանի խմբավորումներ, իրենց ֆինանսական նպատակների հոգածության համար սրում են հասարակական և քաղաքական կայունութունը Աֆղանստանում, լարում են հարաբերությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև: Մի քանի վարձկաների մասնակցությունը, մոջահեդներ անվան տակ, չի կարող վատացնել Աֆղանստանի և Հայաստանի միջև հարաբերությունները»:

Ինչպես ասում են, մեկնաբանությունները ավելորդ են:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

«ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐ» ՋՈԿԱՏԸ

Արցախյան շարժման տարիները, հիրավի, շատ ծանր էին հայ ժողովրդի համար, սակայն միևնույն ժամանակ այն ապացուցեց աշխարհին, թե որքան շատ հերոսներ կարող է ունենալ մի փոքրաթիվ ժողովուրդ:

«Սասունցիներ» ջոկատի քաջարի նվիրյալների անցած ճանապարհը լի էր վտանգներով, հետաքրքիր ու անհավատալի շրջադարձերով....:

«Սասունցիներ» ջոկատի հիմնական խնդիրն էր պաշտպանել Հայաստանի հարավային դարպասը՝ Մեղրին: Տղաների մեջ էրգրից փոխանցված նախնիների կարոտի, վրեժի կանչը վերածվեց 1988թ. ազգային զարթոնքի հետ միասին: Հայրենի հողը պաշտպանելու համար նրանք սկսեցին զենք-զինամթերք հայթայթել: «Սասունցիներ» ջոկատի հրամանատարը ԵՊՀ դասախոս Ալֆրեդ Ներսիսյանն էր՝ Աֆօն:

1989թ. «Սասունցիներ» ջոկատի տղաների մի մասը Լենդրուշ Տոնոյանի գլխավորությամբ մեկնեցին Մեղրի, իսկ մյուսները Աֆօյի ղեկավարությամբ՝ Բերդաձոր: Տեղի ինքնապաշտպանական խորհրդի՝ Առնոլդի, Անդրանիկի և Հրաչիկի խորհրդով խումբը տեղափոխվեց Եղցահող, որն ուներ 30-35 ընտանիք:

1990թ. փետրվարի 18-ին երկրապահ կամավորականների հետ կազմակերպվեց միասնական ու կանոնավոր հարձակում Նյուվադիի վրա: Գյուղը պաշտպանում էին խորհրդային բանակի զինվորները՝ ժամանակակից տեխնիկայով զինված: Հարձակման երկրորդ օրը ականների պայթյունից զոհվեցին Աֆղանցի Կարենը, Վարդանը, վիրավորվեցին յոթ մարտիկ, որոնց թվում՝ Աֆօն:

Խորհրդային բանակի զինվորները Նյուվադիում մնացին մինչև 1991թ. օգոստոսի 8-ը: Նրանք դեռ չէին հասցրել թուրք բաշիբոզուկների հետ դուրս գալ գյուղից, երբ հետևեց «Սասունցիների» շեշտակի հարվածը: Գյուղն ազատագրվեց և վերանվանվեց Նռնաձոր:

1992թ. «Սասունցիները» մեկնեցին Արցախ: Նպատակակետը Ասկերանն էր: Ազերիների ձեռքին էին Փարուխն և Խրամորթ գյուղերը: Ջոկատը, շարժվելով Քարայլխի ուղղությամբ, միացավ Փարուխի և Խրամորթի ինքնապաշտպանական խմբերին և համատեղ գործողություններով կասեցրեց թշնամու առաջխաղացումը դեպի Ասկերան:

1992թ. փետրվարի 25-ն էր: Այդ օրը Զորավար Անդրանիկի ծննդյան օրն էր, ինչպես նաև աստեղային ժամ՝ «Սասունցիների» համար, քանի որ հրամանկար Հրազդանի, Մալաթիայի և Սևանի ջոկատների հետ համատեղ մտնել Խոջալու: Գործողությանը մասնակցելու էին նաև «Արամո», «Արաբո», Սմբատ Հակոբյանի և Արցախի ջոկատների տղաները: Որպես հարձակման ազդանշան պետք է ծառայեր ամունալով լցված վագոնի պայթյունը, որն ինչ-ինչ պատճառներով տեղի չունեցավ: Փոխարենը, մթության մեջ լսվեց «Սասունցիների» երգի ձայնը և թնդաց Սասնա «Քոչարին»...: Էրգրից եկած սովորության համաձայն, տղաները պարեցին հաղթական «Քոչարին»: Հարձակումը, որը շատ գրագետ էր մշակվել, պսակվեց հաղթանակով: Թուրքերն առավոտյան ծնկի եկան: Ազատագրված Խոջալուն լավ նվեր եղավ ինչպես Զորավար Անդրանիկին՝ ծննդյան առթիվ, այնպես էլ հայ ժողովրդին՝ հպարտանալու իր նվիրյալ մարտիկների քաջությամբ, ճկուն մտքով ու փառահեղ հաղթանակով:s

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՈՍՏՈՒՄԸ ԴՐԺԵԼՈՎ՝ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՄԱՐՏԱԴԱՇՏ

Համլետ Ադիբեկի Գալստյանը ծնվել է 1949թ. մարտի 28-ին, Երևանում: Ջեյթուն համայնքի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, որն ավարտելուց հետո վերադարձել և աշխատանքի է անցել «Ալմաստ» գործարանում: Հետո որպես վարորդ՝ ավտոբուսի պարկում: Ամուսնացած էր ,ուներ երեք դուստր: 1988թ. սկսվեց Ղարաբաղի ազատագրական պայքարը: Համլետ Գալստյանը մարտական գործողությունների առաջին իսկ օրվանից իր ավտոբուսով, սեփական նախաձեռնությամբ, սննդամթերք էր տեղափոխում Երասխավանում մարտնչող հայորդիներին: Իսկ որոշ ժամանակ անց, որոշեց զենքը ձեռքին մտնել մարտադաշտ և միացավ մարտիկներին՝ հանուն միասնական գաղափարի…: 1988թ. գարնանը Համլետ Գալստյանը կամ ինչպես մարտական ընկերներն էին ասում՝ Համոն մտավ ՀԱԲ (Հայոց ազգային բանակ) և միացավ «Արաբո» ջոկատին, որի հրամանատարն էր Մանվել Եղիազարյանը:

Ձախից երկրորդը Համլետ Գալստյանն է

Վրա հասավ 1988թ. ավերիչ երկրաշարժը: Համլետը մեկնեց աղետի գոտի: Իսկ մարտադաշտում թնդանոթները չէին լռում: Տասը օր անց նա վերադարձավ մարտադաշտ:

Համլետ Գալստյանի պայքարի մարտական ուղին սկսվում է Եղեգնաձորի Խաչիկ գյուղի պաշտպանությունից: Գյուղը ռմբակոծվում էր թշնամու կողմից. 1990թ. մարտի 28-ը անձրևոտ օր էր, տղաները գյուղացիների տված յափնջիները ուսերին անկոտրում հակահարված էին տալիս: Համլետը մի պահ դադարեցնում է կրակելն ու ընկերոջը հարցնում է, թե ամսի քանիսն է: Ընկերն ասում է. «Մարտի 28-ը»: «Տղե՛րք, էսօր իմ ծնունդն է»,- գոռում է Համլետը և սկսում մեծ ոգևորությամբ անընդմեջ կրակել: Այսպես, թաց խրամատում, նա նշեց իր 41-ամյակը:

Մեկ տարի երեք ամիս նա մասնակցեց Խաչիկ գյուղի պաշտպանությանը:

1990-ի ապրիլին Սովետական Միությունը, շարժման մասնակիցներին անարխիստներ կոչելով, փորձեց ձերբակալել: Տղաներն իրենց զինամթերքով թաքնվեցին Երևանում, այդ ընթացքում նրանք ավելի կատարելագործվեցին ու վերազինվեցին: Աշնանը Համլետը մարտական ընկերների հետ մեկնում է Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպարը և նրան հարակից գյուղերն ազատագրելու: Երեք օրվա թեժ մարտերից հետո նրանք ազատագրում են այդ գյուղերը և հանձնում Նոյեմբերյանի շրջանին: 1991թ. գարնանը Համլետը մասնակցում է Մարտունաշեն և Գետաշեն գյուղերի պաշտպանական մարտերին: Հետո տուն գալով՝ նա ցավով է հիշել ու պատմել, որ Գետաշենի ծերերը դուրս չէին գալիս, փորձում էին ամեն գնով պաշտպանել իրենց հայրենի օջախները: Սիմոն Աչիգոզյանը՝ «Դեղը», Գետաշենում կռվում էր տանիքից և չնայած ընկերների ցած իջնելու անընդմեջ պահանջներին, նա ցած չի իջել և շարունակել էր կրակել ու հետո էլ հայրենասիրական երգեր երգել: Սակայն նրա մի երգը կիսատ է մնացել տանիքի ուղղությամբ ընթացող թշնամու տանկի կրակոցից…: Տղաները հետ են քաշվում անտառ, որտեղ էլ մոլորվում են: Մի շաբաթ անց հանդիպում են մի գյուղի: Որոշում են պարզել, թե ինչ գյուղ է: Տղաներից երկուսն իջնում են գյուղ, թակում մի տան դուռ: Դուռը բացող կինը, տեսնելով զինված մարդկանց, սկսում է բղավել: Տղաները անմիջապես վերադառնում են ու ընկերներին տեղեկացնում, որ հայտնվել են թշնամու երախում: Նրանք անմիջապես առաջ են շարժվում: Շարունակելով ճանապարհը՝ նրանք հասնում են Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղը, որտեղ բնակիչները հոգ են տանում նրանց մասին: Որոշ ժամանակ գյուղի հարակից անտառներում տղաները պարտիզանական կռիվներ էին մղում:

1991-ի ամռանը Համլետը եկավ տուն, նրան փոխարինեցին ընկերները: Սակայն նա չէր հասցրել մի քիչ հանգստանալ, երբ լուր ստացավ, որ Շահումյանն անցել է ադրբեջանցիների հսկողության տակ: Համլետի զայրույթն ահավոր էր, որ իրենց այդքան ջանք գործադրած պաշտպանությունից հետո կարող էր այն հանձնվել թշնամուն: Ինչո՞ւ: Այս փաստն անպատասխան ու անհասկանալի մնաց շատերի համար…

1992թ. հունվարին Համլետը մեկնեց Ստեփանակերտ: Անդադար ռմբակոծվող մայրաքաղաքին ուղղված թնդանոթները լռեցնելու համար տղաները գրավեցին Ղուշուլար, Մայլիբեյլի, Ղարդաղլու գյուղերը: Փետրվարի 16-ին՝ Ղարդաղլուի գրավման ժամանակ, ընկան էդուարդ Մելքումյանը՝ «Արջը» (ում պատվին էլ Ղարդաղլուն հետագայում կոչվեց Արջաձոր), Արթուր Գրիգորյանը և ջոկատի ռադիստը՝ Սերգեյ Գրիգորյանը: Ջոհերին և վիրավորներին տեղափոխեցին Երևան: Սերգեյին և Արթուրին հողին հանձնելով՝ օրեր անց Համլետը կրկին վերադարձավ մարտադաշտ:

«Արաբո» ջոկատը

Մասնակցեց Խոջալուի և Շուշիի համար մղվող ազատագրական մարտերին:

Մայիսի կեսերին, երբ եկավ տուն, տեսնելով կնոջ ու դուստրերի արցունքներն ու աղաչանքները, նրանց խոստացավ չվերադառնալ մարտադաշտ: Մայիսի 25-ին մասնակցեց ավագ դստեր «Վերջին զանգի» արարողությանը և հաջորդ օրը, դրժելով ընտանիքին տված խոստումը, վերադարձավ ճակատ:

1992թ. հունիսի 29-ի վաղ առավոտյան Համլետը 76 հոգուց բաղկացած ջոկատով մեկնեց մարտի: Սակայն այդ մարտն այդպես էլ անավարտ մնաց. ջոկատի հետ կապը անսպասելի կերպով ընդհատվեց: Մարտակերտի շրջանի Հասանշայա և Լևոնարխ գյուղերի միջև գտնվող կամրջի մոտ ջոկատն անհետացավ և կարծես՝ անէացավ առավոտյան ցողի հետ… «Արաբո» ջոկատից ոչ մի մարտիկի դի չհայտնաբերվեց: Եվ դա այդպես էլ առեղծված մնաց շատերի համար…

Համլետ Գալստյանի ընտանիքը չի կորցնում հույսը և սպասում է, որ նա կգա և կրկին ուրախությամբ կլցվի իրենց օջախը, բայց ավա՜ղ, տարիները անցնում են և իրենց հետ մեկտեղ տանում այն հույսն ու հավատը, որն հետզհետե անէանում է նրանց սրտերից:

Փա՛ռք քեզ, Ջեյթունցի Համո…

ՄԿՐՏԻՉ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Նոր արժեքավոր հրատարակություն

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ.
«ԱՆԴՐԱՆԻԿ. ՍԻԲԻՐԱԿԱՆ ՎԱՇՏԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ»

Գիրքը նվիրված է Զորավար Անդրանիկի վերջին զորքի պատմությանը, որը 1918-ի մարտին կազմավորվել էր ռուս սպաների հրամանատարությամբ Սիբիրից ժամանած արևմտահայ ռազմագերիների երթային վաշտի հիմքի վրա և իր արժանի ավանդն էր բերել Հայաստանի Հանրապետության կայացման գործին: Աշխատանքը մի ամբողջական գործ է հայոց հերոսամարտի կարևոր էջերից մեկի մասին, որտեղ նկարագրված են սիբիրական վաշտի ոդիսականի մանրամասները: Հրատարակությունը՝ «Ոսկան Երևանցի» տպ., Երևան, 2006թ.:

Սիբիրական վաշտի հրամանատարներից Անատոլի Գրիգորևիչ Կոլմակովի «Պատմական հայկական վաշտը» ակնարկաշարը լույս է տեսել Բաքվի «Նաշե վրեմյա» ռուսերեն թերթի 1919թ. փետրվար-ապրիլ ամիսներին, ապա Ռուբեն Սիմոնյանի թարգմանությամբ՝ առաջին անգամ հայերեն «Հրազդան» թերթի 1989թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների համարներում:

Գրքում լայնորեն օգտագործված են նյութեր ակնարկաշարից, որոնցից էլ ներկայացնում ենք մի հատված՝ նվիրված հայ կամավորների խաղացած վճռորոշ, դրական դերին Իրկուտսկի քաղաքացիական կռիվների օրերին:

«1917 թվի դեկտեմբերի 8-17-ը սարսափելի օրեր էին Իրկուտսկի համար: Արկերը դղրդալով պայթում էին՝ ընկնելով պատուհաններից ներս, հարվածում տներին՝ իրենց ճանապարհին խորտակելով ամեն բան: Գնդացիրները ճարճատում էին բոլոր փողոցներում: Ռումբերն աղմուկով պայթում էին ողջ քաղաքում: Քաղաքացիները խելակորույս վազում էին փողոցի մի կողմից մյուսը, ընկնում փոթորկոտ կրակի տակ և հենց նույն տեղում էլ արնաշաղախ տապալվում: Շատ էին այդպիսի արնաշաղախ դիակները:



Երբ մարտը սկսվեց, կրակում էին միայն բարձր կետերում դրված թեթև մարտկոցները: Բայց ահա եկան Կրասնոյարսկի, Աչինսկի, Մարինսկի կայազորների զինվորները, կարմիրգվարդիականները՝ Չերեմխովոյի, Անջերսկի, Սուջենսկի քարածխի հանքավայրերից, տաժանակիրները՝ Ներչինսկից և Տուրուխանսկից: Եվ նրանք, բոլորը միավորված, վեց դյույմանոց հրանոթներից սկսում են ամեն կողմից հրետակոծել քաղաքը: Մի բուռ յունկերները և կազակների հարյուրյակը, իրենց տրամադրության տակ ունենալով մի քանի գնդացիր, այդ բոլոր օրերին պաշտպանվում էին կատաղորեն: Բայց ահա քաղաք մտան բոլշևիկները: Հուսահատ ձեռնամարտ սկսվեց: Ամբողջ օրերով շարունակվում էր սվինամարտը: Ութ օր զոհվածների դիակները ընկած էին փողոցներում: (Ըստ սիբիրյան աղբյուրների, զոհերի թիվն անցնում էր 1.500-ից - Ռ. Ս.): Իշխանությունն իրենց ձեռքը վերցրին բոլշևիկները: Տաժանակիրները, մարդասպանները, տարբեր կարգի գողերը (որոնք ժամանակավոր կառավարության հրամանագրով արժանացել էին համաներման - Ռ. Ս.), ինչպես մորեխ, հարձակվեցին խաղաղ բնակիչների տների վրա և սկսեցին անխղճաբար թալանել, հրդեհել, սպանել, կանանց բռնաբարել, պոկել նրանց ականջօղերը, մատները կտրել մատանիներով: Թալանը բազմաթիվ սայլերով տանում էին փողոցներով:

Եվ ահա Իրկուտսկի համար այդ մղձավանջային օրերին հանկարծ ինչ-որ տեղից հայտնվեցին գորշ շինելներով, լավ կարգապահ, թուխ, սևաչք, սևամազ մարդիկ և համարձակորեն օգնության իրենց ազնիվ ձեռքը մեկնեցին քաղաքացիներին: Դա մի վաշտ էր 210 հայ ռազմագերիներից կազմված, որոնք ինքնակամ մեզ էին հանձնվել թուրքերի հետ մարտերի ժամանակ և կառավարության կողմից աքսորվել Սիբիր, ասես որպես շնորհակալություն՝ Ռուսաստանի նկատմամբ ունեցած համակրանքի: Նրանք մեզ մոտ գերություն, ցուրտ, սով տարած մարդիկ էին: Սկզբում իրկուտսկցիները թերահավատորեն դիմավորեցին նրանց: Բայց կասկածանքի սառույցն աստիճանաբար հալվեց: Ութօրյա մարտերի ժամանակ (պիտի լինի 10-օրյա - Ռ. Ս.) նրանք, անտեսելով ողջ քաղաքում շարունակվող հրանոթային փոթորկոտ կրակը, անվախ կատարում էին քաղաքացիներին, հիմնարկները, բանկերը և Իտալիայի, Բելգիայի, Ամերիկայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Ճապոնիայի և Չինաստանի հյուպատոսությունները պաշտպանելու իրենց կամավոր պարտականությունը: Վաշտն իր պահակներով զբաղեցրեց երկաթուղային կայարանը, որպեսզի թույլ չտրվի քաղաքից տանել թալանը:

Քառասունհինգ աստիճանանոց սառնամանիքին, անտեսելով վատ հանդերձանքը, նրանք անխոս կատարում էին իրենց ծանր պարտականությունները ինչպես քաղաքի պաշտպանության, այնպես էլ խուզարկությունների ժամանակ: Ուր պահանջվում, նրանք ներկայանում էին անհապաղ, և վայ նրանց, ովքեր բռնվում էին հանցանքի վայրում: Որպես այդ մարդկանց ազնվության մասին խոսող փաստ՝ հատկանշական է նրանց կողմից անգամ իշխանություն ունեցող երկու կոմիսարների ձերբակալումը, որոնք իրար մեջ բաժանելիս էին եղել հափշտակած երեք հարյուր հազար ռուբլին: Վաշտը տեղ հասցրեց ամբողջ գումարը և դա զանգվածների այն բարոյազրկման պայմաններում, որն այն ժամանակ տիրում էր քաղաքում: Ուրախություն եկավ մարդկանց դեմքերին, և նրանք սկսեցին համարձակ քայլել փողոցներով, քանի որ հանձինս հայկական վաշտի նրանք տեսնում էին իրենց պաշտպաններին: Պատահում էր, որ մեր զինվորիկը գնում էր փողոցով, նրան հանդիպում է ինչ-որ կին, մտնում է զինվորի թևը և ասում. «Կարապետ, գնա՛նք մեր տուն ճաշելու»: Իսկ մեր Կարապետը միայն ժպտում է ուրախ և վեհանձնորեն շարունակում իր ճանապարհը: Նրան հանդիպողները բարեկամաբար խոնարհվում են: Յուրաքանչյուր իրկուտսկցի նրանց գրեթե անուններով գիտեր և իր պարտքն էր համարում սովորել հայերեն երկու բառ. «Գնա՛նք ճաշելու»: Եվ հայկական վաշտը իրկուտսկցիների հետ ապրում էր որպես մեկ ընտանիք: Ե՛վ գիշեր, և՛ ցերեկ բոլորի դռները բաց էին նրանց առաջ:

Ահա վաշտը գնում է փողոցով, իսկ ինչ-որ մեկը հարցնում է.

- Սրանք, ի՞նչ է, հագուստը փոխած յունկերնե՞ր են:

- Ո՛չ, սա մեր հայկական վաշտն է, հպարտորեն պատասխանում է իրկուտսկցին:

- Ախր, տեսնում եմ, որ բոլորը չափից դուրս թխամազ են,- ասում է եկվորը:

Եվ անգամ բոլշևիկները գնահատեցին հայերի ազնիվ աշխատանքը և բոլոր ուժերով ձգտում էին նրանց օգնել դժվարին ծառայության մեջ: Եվ այսպես վաշտը երկու ամիս անխոս տարավ իր դժվարին գործը: Իրկուտսկի համար աստիճանաբար ինչ-որ չափով հանգիստ օրեր եկան, իսկ Կովկասից հեռագրեր ստացվեցին, կոչեր՝ «բոլոր հայերին անհապաղ մեկնելու հայրենիքի պաշտպանության համար»:

ՄԻՍԱՔ ԹՈՌԼԱՔՅԱՆ (1888–1968)

Տրապիզոնի Կյուչանա գյուղում է ծնվել Միսաք Թոռլաքյանը: Ըմբոստ ու խիզախ բնավորությամբ նա դեռ պատանի հասակից մասնակցել է հայ ազատագրական, հակաթուրքական պայքարին:

1914թ. զորակոչվել է թուրքական բանակ: Սարիղամիշի ճակատամարտում (12. 1914 - 01. 1915) կրած կործանիչ պարտությունից հետո թուրքական բանակի հայ զինվորները զինաթափվեցին, ուղարկվեցին շինարարական գումարտակներ, որտեղ էլ նրանց զգալի մասը գնդակահարվեց իր իսկ փորած խրամատներում: Միսաքին հաջողվեց փրկվել, առանձին խումբ կազմել (Պոնտոսում) և պատուհասել թուրք դահիճներին: Միաժամանակ Միսաքը ձեռնամուխ է եղել եղեռնից փրկված հայ բեկորները քիկունք փոխադրելուն:

Այնուհետև Միսաքը կամավորական 6-րդ ջոկատի, իսկ հետո՝ նորաստեղծ Հայկական կորպուսի (հրամանատար՝ գեներալ Թ. Նազարբեկյան) կազմում մասնակցել է մի շարք մարտերի, այդ թվում՝ Բաշ-Ապարանի ճակատամարտին (1918թ. մայիսին):

1920թ. Միսաքին նկատում է «Նեմեսիս» ծրագրի ղեկավար ու կազմակերպիչ, արևմտահայ հայտնի գրող Շահան Նաթալին: Միսաքը, ընդգրկվելով վրիժառու խմբի մեջ, մեկնում է Կ. Պոլիս:

1921թ. հուլիսի 18-ին Կ. Պոլսում հրատարակվող «Ճակատամարտ» թերթի խմբագրատան առջև Միսաքը գնդակահարեց մուսավաթական Ադրբեջանի ներքին գործերի միհիստր Պեհուտ խան Ջիվանշիրին՝ 1918թ. սեպտեմբերին Բաքվի 30.000 և 1921թ. մարտի 23-ի Շուշիի 35.000 հայերի ջարդերի կազմակերպիչներից մեկին: Մ. Թոռլաքյանը ձերբակալվում է և դատվում Կ. Պոլիսը գրաված դաշնակիցների կողմից: 1921թ. նոյեմբերի 22-ին անգլիական դատարանը ազատ է արձակում Մ. Թոռլաքյանին, հաշվի առնելով Ջիվանշիրի հանցանքը, Միսաքի արարքը բնորոշում է որպես արտակարգ հուզմունքի վիճակում կատարված սպանություն:

Մ. Թոռլաքյանն անցնում է Ռումինիա: Այնուհետև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցում է Դրաստամատ Կանայանի հայափրկիչ գործին:

1945-48թթ. նորից մեկնում է Ռումինիա, իսկ հետո՝ անցնում ԱՄՆ: Կյանքի վերջին քսան տարին անցկացրել է Լոս Անջելեսում: Գրել է հուշեր («Օրերուս հետ», 1953թ., Լոս Անջելես.):

Միսաք Թոռլաքյանը մահացել 80 տարեկան հասակում: Մինչ մահը նրան է այցելում և օրհնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՕՐՀՆՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻՆ

1968թ. մայիսի 21-ին՝ ժամը 13-ին, ԱՄՆ-ում ճամփորդող Տ. Տ. Վազգեն Ա-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Լոս Անջելեսի Մոնտեբելլոյի «Քնեռլի» հիվանդանոցում բուժվող ազգային հերոս Միսաք Թոռլաքյանին:

Վեհափառ Հայրապետը հիվանդի մահճակալի մոտ աղոթեց նրա առողջության և շուտափույթ ապաքինման համար: Վեհափառի այցելությունն ու աղոթքը մեծապես մխիթարեցին 80-ամյա վրիժառուի հայրենակարոտ սիրտը: Այդ մասին հիացմունքով ու երախտագիտությամբ գրեցին ԱՄՆ-ի հայկական թերթերը: Իսկ ահա Լոս Անջելեսում թուրք հյուպատոսը բողոքեց, որ հոգևոր առաջնորդը օրհնում է ահաբեկչին: Սակայն դա ամենևին էլ չխանգարեց, որ հինգ օր հետո Բոստոնում, երբ նշվում էր Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակը, Վեհափառ Հայրապետի շքախմբում հայտնվեր մեկ այլ նվիրյալ՝ բոստոնաբնակ Արշավիր Շիրակյանը: Այդ նրա բազկից էին զարկվել 1915թ. ցեղասպանության ծրագիրը հաստատող Սաիդ Հալիմը, ջարդարար Ջեմալ Ազմին....

Հայրապետական օրհնություն ստանալու համար Սուրբ Հակոբ եկեղեցու մշակութային սրահ էին եկել 800-ից ավելի երիտասարդներ, ուսանողներ, ազգային և հոգևոր գործիչներ:

Վեհափառ Հայրապետն ուշագրավ պարզությամբ խոսում է հայ ցեղի առաքինությունների, հայի քրիստոնեական հավատքի ուժի ու խորության մասին, բազմաթիվ տպավորիչ օրինակներով բոլորի սրտի մեջ հայ լինելու ազգային հպարտություն է արթնացնում. «Սիրեցե՛ք հայոց լեզուն և հայոց պատմությունը, եղեք հավատարիմ և ազնիվ քաղաքացիներ, ինչպես մեր նվիրյալ և սիրելի զավակը՝ ձեր համաքաղաքացի Արշավիր Շիրակյանը...»,- այսպես է ավարտում իր օրհնության ու պատգամը Վեհափառ Հայրապետը:

Ո՛չ ԱՄՆ-ում թուրքական դեսպան Շյուքրի Էլեքդաղի բողոքները, ո՛չ էլ խորհրդային դեսպան Դուբինինի զգուշացումները չկարողացան արգելել արիասիրտ Վեհափառին, որ նա օրեր անց, արդեն լինելով Արգենտինայում՝ Բուենոս Այրեսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, հոգեհանգստի արարողության ժամանակ հայրենիքի նահատակների շարքում հիշի Արգենտինայի հողում հանգչող մեծանուն վրիժառու և փայլուն մտավորական Արամ Երկանյանին...

ՀԱԿՈԲ ՄԱՆՋՅԱՆ

Մանրապատում

ՐԱՖՖՈՒ «ԽԵՆԹԸ» ԵՎ ՍԵՎՔԱՐԵՑԻ ՍԱՔՈՆ

Խանասորի արշավախումբը

Խանասորի արշավանքի նախապատրաստման ժամանակ հանրահայտ ֆիդայի Սևքարեցի Սաքոն էջմիածնի Ղուրուջորան գյուղում հանդիպում է մեծահամբավ Վարդանին (Սամսոն Տեր- Պողոսյանին՝ Րաֆֆու «Խենթին»):

- Նախապատրաստվում է արշավանք դեպի էրգիր, հարկավոր է պատժել թուրք և քուրդ ջարդարարներին, միացի՛ր մեզ,- հորդորում է Սաքոն:

- Չեմ կարող, ես խիստ զբաղված եմ,- հրաժարվում է ջրբաշխի (միրաբի) եկամտաբեր պաշտոնը զբաղեցնող Սամսոնը:

- Կյանքի մի դրվագում հերոսություն կատարած մարդը կատարյալ հերոս չէ... հարկավոր է ամբողջ կյանքում լինել այդպիսին,- դառնացած ասում է Սևքարեցի Սաքոն՝ ամենքի կողմից սիրված ու հարգված հայորդին...

ՆԺԴԵՀՅԱՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐ

Սխալ է, ավելին՝ ոճիր է կարծել, թե բոլոր ճշմարտությունները մարդու պես մահկանացու են, թե նրանք էլ մեզ պես ծնվում են, ապրում, սպառվում, մեռնում:

Ո՛չ, ո՛չ, ճշմարտություններ կան, որոնք անմեռ են, հավիտենական, ինչպես ինքը՝ ժամանակը:

Այդ կարգի ճշմարտություններից են նրանք, որոնք վերաբերում են հայրենիքին, մահվանը, հաղթանակին, առաջնորդին, պարտականությանը և այլն:

Մեծ մտածող և հայրենասեր Գարեգին Նժդեհի գաղափարները արդիական են նաև այսօր:

Փորձենք ներկայացնել Նժդեհի մի շարք գաղափարներ և դրանք անցկացնենք ժամանակի շնչով:

Նժդեհը հայությանը բաժանում է զգայա-գիտակցական երեք շերտի.

1. Տականք , 2. Ցեղ, 3. Ժողովուրդ

Տականքը հայության ազգուրաց տարրն է, նրա աղբը, թերմացքը: Սա Ցեղի ներքին թշնամին է՝ լծված արտաքին թշնամու ռազմակառքին. անդիմագիծ՝ որպես հայ և զզվելի՝ որպես մարդ. հայության հանդեպ ոչ մի պարտականություններ չճանաչող, բայց մշտապես իրավունքներից ճամարտակող:

Նա ազգային պատկանելիություն չունի, և եթե խոսում է հայերեն, ապա միայն այն պատճառով, որ հաղորդակցվելու այլ ձև դեռ չի գտել: Նյութակրոն, որի համար գերագույն արժեքը դրամն է: Հայրենիք չի ճանաչում և առաջնորդվում է «որտեղ հաց, էնտեղ կաց» սկզբունքով:

Այո՛, տականքներ բոլոր ժամանակներում եղել են և միշտ էլ կլինեն: Ուղղակի դժբախտությունը նրանում է, որ դրանց թիվը գնալով մեծանում է: Դա հայության այն մասն է, որ ոչինչ չտալով միայն պահանջում է: Նժդեհը նշում է, որ սրանք հայերեն են խոսում միայն այն պատճառով, որ հաղորդակցվելու այլ ձև դեռ չեն գտել: Հիմա պատկերը մի փոքր այլ է, որովհետև հնարավորությունները շատ են: Այսօր մեր դպրոցներում երկու օտար լեզու է ուսուցանվում: Լա՛վ է, նույնիսկ շա՛տ լավ: Ասում են քանի լեզու գիտես, այնքան մարդ ես: Սակայն պետք չէ օտար լեզուն գերադասել մայրենիից: Խորհրդային տարիներին մոդային էր ռուսերեն խոսելը՝ «ինտիլիգենտ» երևալու համար, հիմա՝ անգլերենը: Անգամ մեր շրջապատն է անվանափոխվում. խանութներն ու սրճարանները կրում են օտարահունչ անվանումներ և դրանց մուտքերը «զարդարում» են անգլիական տառերը:

Ըստ Նժդեհի՝ ցեղը հայության ընտանիքն է, սերունդը, որի գերնպատակն է՝ իր տեսակի հավիտենականացումը հայրենիքում: Նա՛ է իր մեջ կրում Հայկականությունը և այն փոխանցում սերունդներին: Ցեղի համար անփոխարինելի է հայրենիքը, նրա անկախությունը՝ թթվածնի պես անհրաժեշտ: Ցեղն է մարտնչում ու նահատակվում՝ հայության պատիվը փրկելիս:

Տվյալ պարագայում գործ ունենք հակառակ երևույթի հետ: Հասարակության այն մասը, որը Նժդեհը Ցեղ է անվանում, ցավոք սրտի, հասարակության փոքրամասնությունն է կազմում, սակայն նույնիսկ այդ փոքրամասնության կամքը և անսպառ հայրենասիրությունը միշտ կարողանում է հաղթահարել ցանկացած խոչընդոտ և հասնել նպատակին, իսկ այդ նպատակը մեկն է՝ «Հզոր Հայրենիք»: Դեռևս վաղ անցյալում հասարակության այդ հատվածն էր, որ երկրի օրհասական պահին իր ձեռքը վերցրեց երկրի ճակատագիրը և փառքով դուրս եկավ այդ պայքարից՝ հայրենիքի համար նվաճելով այդքան երկար սպասված անկախությունը, և այդ շերտն էր, որ Արցախյան հերոսամարտի անհավասար պայքարում թշնամուն ևս մեկ անգամ ապացուցեց հայի հավերժ լինելու իրավունքը (կամքը):

Ժողովուրդը հայության չկողմնորոշված, տատանվող տարրն է: ***Այն ամբոխամետ է, եթե ավելի տականքի ձայնն է լսում, քան՝ Ցեղի:***

Ժողովուրդն ապրում է առօրյայով, ցեղի հավիտենականով: Նա՝ օրվա մտածումներով, սա՝ անցյալի հիշողությամբ, ապագայի հաստատուն հավատով և օրվա հարատև պայքարով միաժամանակ:

Ժողովուրդն առաջնորդվում է հատվածական, Ցեղը՝ համահայկական շահերով: Ժողովուրդը դասակարգերի, դավանանքների ու կուսակցությունների խառնամբոխ է. Ցեղի մեջ չկան տիրող և հպատակ դասակարգեր, կրոնական հարանվանություններ, քաղաքական ուղղություններ - կա՛ն միայն հայեր:

Ժողովուրդն արդարություն և ապրելու իրավունք աղերսող է, Ցեղը՝ դրանք նվաճող ու հաստատող:

Ժողովուրդը կարող է հարմարվել իր անփառունակ վիճակին, Ցեղը չի հանդուրժում ստրուկի շղթաները. նրա համար սրբագրելի են աշխարհի հայավնաս վճիռները:

Վտանգի պահերին ժողովուրդը մատնվում է խառնաշփոթի ու խուճապի, Ցեղը բնազդորեն գտնում է ելքը: Նա ընդունակ չէ կանխատեսելու վտանգը, սա՝ նախազգում է այն:

Ժողովուրդը մեծարում է միջակություններին, Ցեղը՝ միայն իր հանճարներին: «Ժողովուրդը դպիրներ է ծնում, Ցեղը՝ մարգարեներ»:

Նա արժեքներ պահել ու գնահատել գիտի. այսօր մեկին հերոս է դարձնում, վաղը՝ ոտնատակ անում. կամ երեկվա սրբությունները՝ ամբոխային կուրությամբ այսօր ոչնչացնում: Ցեղն իր արժեքների հավիտենական կրողն է, իր սուրբ մեռելների պաշտամունքը հավերժացնողը:

Ժողովուրդը տառապում է անլիարժեքության բարդույթով, Ցեղը համակ է հպարտանքի զգացումով և լի՝ վճռականությամբ:

«Ժողովուրդն ընդունում է օտար մշակույթը ապազգայնանալով, Ցեղը՝ ազգայնացնում է իր ընդունածը»:

Եվ որքան հայության մեջ բարձր է ցեղի տեսակարար կշիռը, այնքան նա ապրում է ցեղորեն, այնքան հզոր ու կենսունակ է նա՝ որպես Ազգ: Իսկ ցեղի տեսակարար կշիռը պիտի բարձրացվի ժողովրդի հաշվին՝ նրան Դարձի բերելով, դեպի Ցեղը կողմնորոշելով:

«Այս ժողովուրդը պետք է ցեղե՛նք... այ՛ս է ցեղակրոնության գերխնդիրը:

ՎԱՐԴԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԵԹԷ Կ'ՈՒԶԷՔ ՀԱՅ ՄՆԱԼ, ՄԻԱԿ ՏԵՂԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է, ԻՍԿ ԵԹԷ ՀԱՅԱՍՏԱՆ Կ'ՈՒԶԷՔ, ՄԻԱԿ ՃԱՄԲԱՆ ՊԱՅՔԱՐՆ Է

«ՎԱՆԻ» ՊԱՏԳԱՄԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Սիրելի հայ ժողովուրդ,

Մենք հպարտ ենք «Վան» գործողութիւնը յաջողցնելնուս եւ աւելի հպարտ, որովհետեւ այս գործողութեամբ բովանդակ հայութիւնը յաղթանակեց:

Բանտէն կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որպէսզի միանա զինեալ պայքարին, քանի ան միակ ուղին է մեր բռնագրաւեալ հողերուն՝ Արեւմտեան Հայաստանի վերադարձին:

Հայ ժողովուրդը այլեւս պէտք է արթնայ իր խոր քունէն եւ սկսի իսկական պայքարի, որն է զինեալ պայքարը:

Գալով մեզի, մենք «Վան» գործողութիւնը հերոսներ ըլլալու համար չգործադրեցինք, այլ պարզապէս քանի որ հայ ենք, եւ հայը ունի իրաւունք մը, որը թրքական ֆաշիզմը իր ճանկերուն մէջ է առած:

Սիրելի հայ ժողովուրդ,

«եթէ կ'ուզէք հայ մնալ, միակ տեղը Հայաստանն է, իսկ եթէ Հայաստան կ'ուզէք միակ ճամբան պայքարն է»:

Մեր խօսքը կ'ուղղենք ՀԱՀԳԲ-ի մեր ընկեր-ընկերուհիներուն, որոնց հետ աշխատած ենք յառաջ տանելու համար հայ ժողովուրդի պայքարը, շարունակեցէք ձեր զինեալ պայքարը մինչեւ վերադարձը մեր բռանագրաւեալ հողերուն, շարունակեցէք ձեր հարուածները թուրք ֆաշիստ պետութեան եւ անոր հետ գործակցող կայսերապաշտ բոլոր ուժերուն դեմ:

Մենք բանտ ենք, սակայն այս բանտը մեզի համար պալատ մըն է, որովհետեւ հայ ժողովուրդին եւ անոր իրավունքներուն համար է, որ կը գտնուինք այս երկաթ սենեակներէն ներս: Մենք լաւ ենք, բայց անհանգիստ, որովհետեւ չենք կրնար պայքարիլ ներկայիս (անշուշտ զէնքով պայքար):

22 Փետրուար 1982

«Եղիա Քէշիշեան»
Անձնասպանական Քոմանտո

Տղաները դատարանի դահլիճում

Սփիւռքի մէջ գտնուող հայեր տեղ մը հասած են, ուր այլեւս յստակ որոշում մը պէտք է տան եւ անոր համեմատ գործեն՝ կամ մղել ժողովրդային երկարաշունչ զինեալ ազատագրական պայքար եւ կամ ձուլուիլ մեր գտնուած երկիրներուն ժողովուրդներուն մէջ: Մենք ուրիշ բան ընելիք չունինք:

Մենք կհաւատանք, որ ամբողջ հայ ժողովուրդը մեր կողքին կը գտնուի եւ մեզի կը քաջալերէ. մենք կը հաւատանք, որ մեր պայքարին շնորհիւ մեր ժողովուրդը աւելի եւ ավելի պիտի յեղափոխականանայ եւ կարելի պիտի չըլլայ ըսել այլեւս Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի պայքար, այլ պիտի ըսուի ամբողջ հայ ժողովուրդի պայքար:

Քոմանտոյի ղեկավար
Վազգէն Սիսլեան

Այսօր հայ երիտասարդութեան համար գործ պէտք է եւ ոչ թէ խօսք. գործ մը, որ հիմնուած ըլլայ քաղաքական յստակ եւ առողջ գիծի վրայ:

Իւրաքանչիւր հայ անկեղծ հայրենասէր, այլեւս չկրնար բաւականանալ Մայր հայրենիքի արձանագրած յաջողութիւններով ոգեւորուելով: Մեզի եվ մեր հողերէն դուրս գտնուող հայերուն համար սուրբ է վերածնած մեր հայրենիքը, բայց նոյնքան եւ նոյնիսկ ավելի սուրբ բռնագրաւուած մեր հողերը, առաց այդ հողերու ազատագրութեան համար պայքար տանելու Սովետական Հայաստանը պաշտելը այլեւս կեղծաւորութիւն կը նկատեմ. գոյութիւն ունեցող հայրենիքը անկեղծօրէն սիրողը պէտք է աւելի սիրէ անազատ հայրենիքը եւ պայքարի անոր համար:

Քոմանտոյի փոխ-ղեկավար
Գէորգ Կիւզելեան

1915-ի Մեծ եղեռնէն եւ 1920-ի Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Սփիւռք դարձած հայութեան դիմաց դրուեցաւ մէկ հիմնական հարց. այդ հարցը ջարդով եւ բռնագաղթով պարպուած եւ բռնագրաւուած հայկական հողերու հարցն էր:

1975-ին ծնունդ առաւ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակը եւ սկսաւ կատարել այն, ինչ որ պէտք է կատարուէր 55 տարիներու ընթացքին:

Ահաւասիկ, ինչու ես միացայ Հայ Գաղտնի Բանակի շարքերուն եւ որոշեցի պայքարիլ անոր ընդմէջէն: Այսօր պարտականութիւնը ինծի կը կանչէ ճակատ՝ կատարելու համար իմ պարտքս ժողովուրդիս եւ հայրենիքիս հանդէպ: Տեղեակ եմ, թէ ինծի վստահուած գործը դժուար է եւ կը կատարեմ իմ համոզումներուս համաձայն, գիտնալով, թէ մեր հողերը պէտք է ազատագրուին եւ այդ հողերը կ'ազատագրուին միայն պայքարով, զինեալ պայքարով: Որովհետեւ իրաւազրկուած ժողովուրդներու իրաւունքները չեն տրուիր, այլ ուժով կ'առնուին:

Քոմանտոյի անդամ
Յակոբ Ջուլֆաեան

Ես գիտեմ, որ ինծի յանձնուած պարտականութիւնը ծանր է եւ այդ գործին մէջ ես կրնամ իմ կյանքս զոհել: Այս գիտակցութիւնը ինծի աւելի հաւատք եւ ուժ կու տայ, որովհետեւ ես համոզուած եմ, որ առանց զոհողութեան ոչ մէկ բան կը ստացուի. եթէ կ'ուզենք արդիւնքի մը հասնիլ, պէտք է զոհուինք, վերջնական յաղթանակը մեր իւրաքանչիւրին զոհողութեան գումարումով է, որ պիտի ստանանք: Ճիշդ այս պատճառով, ես կոչ կ'ուղղեմ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի իմ ընկերներուս, որպէսզի շարունակեն պայքարը հայ ժողովուրդի սիրոյն եւ ոչ մէկ զոհողութեան առջեւ կանգ առնեն:

Հայաստանի ճամբան երկար կը թուի ըլլալ, սակայն ան կը մօտենայ, երբ գիտնանք ճիշդ ձեւով պայքարիլ եւ զոհաբերուիլ: Ճամբան փշոտ է, սակայն յաղթանակը մերն է անկասկած:

Քոմանտոյի անդամ
Արամ Պասմաճեան

ՊԱՇՏՊԱՆ ԼԵԿԼԵՐԿԻ ՁԱՌԸ

«Վան» գործողության դատավարության ժամանակ

Պաշտպանի ելույթը ներկայացվում է կրճատումներով:

Պարոն նախագա՛հ, պարոնայք խորհրդականնե՛ր, տիկնայք եւ պարոնայք երդվյալնե՛ր, միտք ունի՞ արդյոք մի անգամ եւս վեր կենալ եւ ասել այն, ինչ ձեզ հայտնի է դատավարության առաջին օրից: Ես պաշտպանում եմ հպարտ կանգնած չորս երիտասարդներին եւ գիտեմ, որ նրանց միջոցով պաշտպանում եմ բզկտված ու խոշտանգված մի ժողովրդի, որն այժմ մեղադրյալներին է նայում եւ իր լավագույն զավակները համարում:

Ինչո՞ւ: Հենց այդ հարցին, ըստ երեւույթին, պիտի պատասխանեք դո՛ւք: Ես ոտքի եմ ելել ամենավերջում եւ շատ բնական եմ համարում, որ պաշտպանականով հանդես են գալիս ինչպես հայ, այնպես էլ ֆրանսիացի փաստաբաններ: Նախ՝ նկատի ունեմ էմիլ Ասլանյանին, որը ներկայացնում է ինքնահաստատումը գտած հայերի սերունդը եւ խոստովանում է, թե մինչեւ ո՛ր աստիճանի այս երիտասարդների պայքարը իրենն է, նկատի ունեմ Րաֆֆի Փեշտիմալջյանին, որի խոսքը, ինչպես բոլոր հայերինը, հուզիչ էր, քանի որ պատմում էր մոր, նրա հուշերի, արյան մասին, որը մինչեւ հիմա առկա է իրենց ընտանիքում: Նույնը կարելի է ասել Պատրիկ Դեւեջյանի մասին, որին, չնայած մեր բազում տարաձայնություններին, այսօր եղբայրաբար միացնում է տառապած ժողովրդի համար մղվող դժվարին պայքարը: Կուզեի անպայման նշել նաեւ Ֆրանսիս Թեյջանին՝ մարդկային հիմնարար իրավունքի, եւ Ժան-Պիեռ Մինյարին՝ արժանապատվության մասին խոսելու համար:

Ինձ մնում է, սրտի՛ լեզվով խոսել: Թերեւս, բայց ես խնդրում եմ չորսին էլ ազատել ոչ միայն զգացական, այլ նաեւ բարոյահոգեբանական, քաղաքական նկատառումներով:

Թեհլերյանին արդարացրին:

1922-ին Բեռլինում վեհանձն դատավորներ կային, ինչպես այժմ Ֆրանսիայում կան: Դուք դատելու եք մարդկանց: Մարդկանց՝ իրենց արածի համար, բայց մարդու արածը միայն փաստական կողմ չունի: Յուրաքանչյուր արարք ինքը՝ մարդն է: Չորս մեղադրյալին դուք դատելու եք այս մտայնությամբ, շատ լավ իմանալով, որ հայ ժողովուրդն այստեղ ներկա է, սպասում է ձեր վճռին:

Ինչո՞ւ են չորս երիտասարդները հայտնվել այստեղ: Ինչո՞ւ են նրանք ապրում հին հուշերով եւ վաթսունութ տարի անց թուրքական կառավարությանը մեղադրում այն ամենի համար, ինչ արել է Օսմանյան կայսրությունը: Ինչո՞ւ են նրանք մարդ սպանել: Ինչո՞ւ պետք է ազատ արձակել նրանց:

Ո՞ւր են իրենց տները: Մերձավոր Արեւելքի ահավոր պատերազմում, որտեղ մարդիկ բախվում են մի փոքրիկ թաղամասի համար, որտեղ ժողովուրդներն ու համաշխարհային պատմությունը գոյատեւում են ռումբերի ներքո՝ դաժան պայմաններում, որտեղ երեխաները տասնհինգ տարեկանից զենքերը ձեռքին կռվում են սոսկ իրենց գյուղը պաշտպանելու համար, հայերին հասկացնում են, որ Լիբանանն իրենցը չէ, եւ նրանք հասկանում են, որ աշխարհում գոյություն ունի մի ազգ, որին պատկանում են միայն իրենք:

Ո՞րն է հայերի գոյության նախապայմանը, իհարկե, նախ՝ երեքհազարամյա պատմությունը: Այս ժողովրդին անընդհատ ասպատակել են ամեն կողմից, վաչկատուն ցեղերը՝ սրի քաշել, հայը ենթարկվել է մերթ այս, մերթ այն տերությանը, սակայն երեք հազար տարի անընդմեջ գոյատեւել է բնօրրանում՝ այն լեռների ներքո, որոնց իշխում է Արարատը՝ Հայաստանի խորհրդանշանը: Հայերն ապրել են իրենց կրոնով, եկեղեցիներով, ծեսերով, մշակույթով, երգով ու պարով, արհեստներով, հոգու խորությամբ, բարի համբավով, բացառիկ այբուբենով, բնանկարի ինքնատիպությամբ, անկրկնելի այգաբացներով: Ի՞նչ է եղել այդ ամենը: Համաշխարհային հանրագիտարանը վկայում է. «Արեւելյան Անատոլիան հիմնականում բնակեցված է կիսաքոչվոր քրդերով, գյուղատնտեսության արդիականացման համընդհանուր ծգձգումը այն դարձրել է ամբողջ Թուրքիայի ամենաթերզարգացած երկրամասը»: Մինչդեռ ամենահարուստն է եղել:

Ուրեմն, ի՞նչ տեղի ունեցավ: Ինքներդ եք հասկանում՝ ես չեմ ուզում վիճել թուրք պատմաբանի հետ, հիշատակել պարոն Մորգենթաուի՝ Թուրքիայում Միացյալ Նահանգների դեսպանի հուշերը, որը, երբ ջանացել է փրկել հայերին, Թալեաթ փաշան կանխել, ասել է. «Դուք ամերիկացի հրեա եք, ինչո՞ւ եք հետաքրքրվում այդ մարդկանցով»: Հարկ չկա թերեւս անդրադառնալ նաեւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ Լեփսիուսի զեկուցագրերին, այդ տարիներին Թուրքիայում եղած լրագրողների անթիվ վկայություններին եւ հատկապես համայնական հիշողությանը, որի փաստերը համընկնում են պատասխանում՝ «Ցեղասպանություն եղե՞լ է» հարցին: Եթե չի եղել, ո՞ւր գնացին այն երկրամասի բնակիչները, որն այսօր Արեւելյան Անատոլիա է կոչվում, այս սրահի ունկնդիրները որտեղի՞ց են եկել: Նրանք եկել են դարի ամենամեծ ողբերգությունից, դուք լսեցիք մեկի, երկուսի, երեքի, չորսի պատմությունները: Որքան վատ եմ զգում ինձ, որ ստիպված եղա ամբիոնից իջեցնել այն ծերունուն, որն իր տառապանքները հրապարակայնորեն պատմելու համար վաթսունութ տարի սպասել էր: Իջեցրի, որովհետեւ, տիկնայք եւ պարոնայք երդվյալնե՛ր, ձեզ թվում էր, որ դուք այդ ամենն արդեն լսել եք: Մտածե՛ք, ուրեմն, հայ համայնքի՝ բռնագաղթի զրկանքները սկզբից մինչեւ վերջ կրած մարդկանց մասին, բռնագաղթ, որը գիտականորեն էր կազմակերպվել ու իրագործվել՝ ամենեւին էլ ո՛չ այն բանի համար, որ հայերը թիկունքում վտանգ էին ներկայացնում, Դաշնակիցներին էին պաշտպանում: Ինձ համար կարեւորը զոհերն են՝ տղամարդիկ, կանայք ու երեխաները: Վերապրողների պատմություններից պարզ է դառնում, որ տղամարդիկ ավելի բախտավոր են եղել, որովհետեւ առաջինն են սպանվել, մնացածները աքսորվել են: Ճանապարհին կանայք բռնաբարվել են, երեխաները՝ խաչվել կամ գետը շպրտվել, ահա՛ մի ամբողջ ժողովուրդ բնաջնջելու գիտական ծրագիրը: Իրենց գյուղերից, տներից հանված անպաշտպան աքսորականներին ո՞ւր են քշել: Դեպի անապատ:

Այս ամբիոնից դուք լսեցիք բրդե կիսավերարկուով ծեր կնոջը՝ տիկին Մելինե Մանուշյանին, որը շատ հետաքրքիր նորություններ հաղորդեց ամուսնու՝ «ոճրախմբի» ղեկավար, «ահաբեկիչ» Միսաք Մանուշյանի մասին, այն նույն Մանուշյանի, ում Ֆրանսիայի հանրապետության նախագահը այժմ Ազգային Դիմադրական Շարժման հիասքանչ հերոսներից մեկն է համարում: Նա վերջին նամակում գրել է կնոջը. «Մելինե՛, որքո՛ւկս, ես մեռնում եմ՝ չունենալով ոչ մի ատելություն գերմանացի ժողովրդի նկատմամբ»:

Ինձ կարող են հակաճառել, որ այս տղաները զինվորներ չեն, Հայաստանը եւ Թուրքիան չեն պատերազմում, զինվորները միայն զենք կրելու, ամեն պահի սպանելու իրավունք ունեն: Նրանք կարող են փլատակների վերածել Դրեզդեն քաղաքը, Հիրոսիմայի վրա ռումբ նետելով, միլիոնավոր մարդկանց, այդ թվում եւ կանանց, երեխաների, սպանել: Իսկ Հայաստանը քանի որ այլեւս գոյություն չունի, «կանոնավոր» բանակ չի կարող ստեղծել:

Հիրավի, տարօրինակ տրամաբանություն է: Չէ՞ որ Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու գնդակահարեց հայ տղամարդկանց, կոտորեց ծերունիներին, կանանց ու երեխաներին, հատուկենտ վերապրող որբերին նավերը լցրեց, օտար երկրներ արտաքսեց: Դուք՝ թուրքերդ, կարծում եք, որ այդքանը բավական է, պատերազմն ավարտված է: Բայց արդյո՞ք այն ավարտված է հայերի հա-

մար, որոնցից խլել են բնօրրանը, որոնք ուզում են հարատեւել:

Ո՛չ, այս տղաները ահաբեկիչներ չե՛ն, հայ ժողովրդի զինվորնե՛րն են, այն ժողովրդի, որը դիվանագիտական ներկայացուցիչներ, պետությունների վրա ճնշում գործադրելու միջոցներ չունի, բայց ապրում է, գոյատեւում է մշակույթի, լեզվի, զավակների, ինչպես նաեւ հերոսների ու նահատակների շնորհիվ: Հատկապես՝ զինվորների՛, որոնց այսօր դուք դատում եք: Եթե անգամ դատապարտեք, հիշեցե՛ք, որ զինվորների՛ եք դատապարտում: Նրանք՝ չորս հանդուգն զինվորները, եկել են Ֆրանսիա ո՛չ միայն իրենց ժողովրդի իրավունքները ներկայացնելու, այլեւ պահանջելու համար, որ ազատ արձակեն քուրդ եւ թուրք քաղբանտարկյալների: Ճիշտ է, նրանք վտանգավոր իրավիճակ են ստեղծել, ճիշտ է, մի հոգի մահացել, մեկ ուրիշը վիրավորվել է, բայց չի՛ կարելի չընդունել, պարոն ընդհանուր պաշտպա՛ն, որ հյուպատոսարան մտնելիս սպանության մտադրություն չեն ունեցել: Ուստի, չե՛ք կարող պահանջել, որ Գյուզելյանին մյուսներից կրկնակի ծանր պատժի դատապարտեն: Տիկնայք եւ պարոնայք երդվյալնե՛ր, քիչ առաջ ես առաջարկում էի նրանց ազատ արձակել, այժմ էլ խնդրում եմ չորսի միջեւ տարբերություն չդնել: Նրանք կապված են եղել նույն գործողությամբ, այստեղ էլ կանգնած են կողք-կողքի: Եթե ուզում եք, նրանց զինվորներ համարեք, դատապարտեք մարտական գործողությունների համար, բայց տարբեր պատիժներ մի՛ տվեք:

Ճիշտ է, որ այս տղաները ռազմական գրոհ են ձեռնարկել, բայց մի՞թե Հայաստանը պատերազմելու իրավունք չունի: Դուք հիշո՞ւմ եք «Ես դատապարտում եմ» շարժանկարը, որտեղ հերոսը տեսնում է, թե ինչպես են մահացածները դուրս գալիս դագաղներից, ձայն տալիս իրեն: Այս չորս երիտասարդին էլ դիմել են Անապատի դիակները, իսկ նահատակ երեխաները ոտքի են ելել, նրանց ասել. «Ինչ-որ բան արեք, մենք չենք ուզում վերջնականապես մեռնել, մենք մահացած ենք, բայց ուզում ենք, որ դա որեւէ նպատակի, գոնե Հայաստանի ապագային ծառայի»:

Այո՛, չորս գրոհայինները մարտական գործողության են դիմել, որպեսզի այդ մասին խոսեն, աշխարհն իմանա, որպեսզի դուք՝ Ֆրանսիայի երդվյալներդ, լսեք այն, ինչն արդեն լսեցիք:

Եղիա Քեշիշյանին Պարսկաստանում երկու օր առաջ գնդակահարեցին (կարելի՞ է ասել, որ այս երիտասարդները խիզախ չեն), Լեւոն Էքմեքճյանին 1983 թվականի հունվարի 30-ին կախեցին Անկարայում, բայց դուք հավատո՞ւմ եք, որ հետագա գործողությունները կանխեցին: Ես կարող եմ ուրիշների՝ Ստեփան Զատիկյանի, այլ գրոհայինների մահապատիժները հիշատակել ու նորից համոզված պնդել, որ ոչ մի արդյունքի չեն հանգեցրել:

Նման պատիժները ի զորո՞ւ են կաշկանդել մի ժողովրդի, որը ոտքի է ելել, որովհետեւ անձնական եւ ազգային պարտականության պարտադրանքները միախառնվել են եւ հենց այդ պատճառով ամեն ոք պատրաստ է զոհել կյանքը: Չհավատաք, որ եթե որեւէ մեկը բանտ ընկնի, ինչ-որ բան կփոխվի: Ձեր պատիժը ո՛չ մի դեր չի խաղա, սոսկ քաղաքական նշանակություն կունենա: Սովորական դատապարտությունը անհարիր է այս գործին, այլ է քաղաքական դատավարությունն իր մեկնաբանություններով, նշանակությամբ, բացահայտած ճշմարտությամբ:

Ինձ կարող են հիշեցնել նաեւ, որ Թուրքիան մի ծանրակշիռ ուժ է: Իհարկե, դա այդպես է, բայց եթե միջազգային հարաբերությունները դրան պիտի հանգեցնեն, ապա նման հիմնավորումով ցեղասպանության ժխտումը ի վերջո կառավարություններին ինքնավստահություն կներշնչի, որ իրենց ամեն ինչ կարելի է: Եվ ամենեւին պատահականություն չէ, որ «Միջազգային ներման» հանձնաժողովի՝ Եվրախորհրդին հղած զեկուցագրում Թուրքիան երեքից հինգ էջ է զբաղեցնում, որոնք ես ունեմ իմ տրամադրության տակ: Ինչպես պատահականություն չէ այն հանգամանքը, որ Ֆրանսիան, Նորվեգիան, Շվեդիան, Դանիան, ելնելով Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համաձայնագրից, Թուրքիայի հետեւյալ խախտումների համար բողոք են հղել եվրոպական հանձնաժողովին:

Նրանք, ովքեր անպատիժ են մնում, կամ փորձում են մոռացության մատնել այն, ինչ արել են, ու ամբողջ աշխարհը մոռանում է, կարծում են, թե իրենց ամեն ինչ կարելի է: Անկասկած, բազում պատճառներից մեկը, որը Թուրքիային դարձրել է այնպիսին, ինչպիսին կա, աշխարհի կողմից ցեղասպանությունը մոռանալն է: Այժմ Թուրքիան միևչեւ իսկ իր քաղաքացիներին է կոտորում, տանջում:

Թուրքիան, դարձյալ կրկնենք, այս ատյանին հղած հեռագրերով ոչ թե պահանջում է դատապարտել հայ գրոհայիններին, իր դիվանագետներին պաշտպանել, ահաբեկչությունը մերժել, այլ՝ հավաստել, որ ցեղասպանություն տեղի չի ունեցել:

Մենք, ճիշտ հակառակը, ակնկալում ենք, որ դուք ընդունեք՝ ցեղասպանություն եղե՛լ է, հայ ժողովուրդը նահատակվե՛լ է, հայ ժողովուրդը իրավասո՛ւ է զինվորներ ունենալու, իր հողե՛րը պահանջելու: Ներկա բոլոր հայերը դրան են սպասում: Ի հարկե, մենք ուրախ ենք, որ հայերն այստեղ են, փոխադարձաբար իրար ճանաչում են: Համենայն դեպս, ես չեմ կարող նրանց չհանդիմանել՝ ինչո՞ւ էիք այսքան երկար լռում, իմ հայ բարեկամնե՛ր, ինչո՞ւ էիք այդ մասին միայն իրար հետ խոսում: Ինչո՞ւ ձեր երեխաները, որոնց նույնպես շատ լավ ծանոթ ենք, ամաչում էին արտահայտվել, ասես դարասկզբի նախճիրը ձեր արատը լիներ, մինչդեռ դժբախտությունն է, միաժամանակ՝ հպարտությունը:

Դուք հարստանալու համար չեք լքել ձեր երկիրը, այլ՝ կոտորվել, ստիպվա՛ծ եք եղել գալ այստեղ: Ֆրանսիան ձեզ ընդունել է, եւ դա մեր պատիվն է: Ամեն դեպքում, դուք դժվարությամբ նվաճեցիք ձեր զբաղեցրած դիրքերը, եւ միայն ձեր զավակները տեսան ձեր արցունքները, տառապանքը:

Ինչո՞ւ էիք սպասում այս դատավարությանը, որպեսզի Անրի Վերնոյն ասի. «Առկա է բոլոր նրանց ցասումը, ովքեր մղձավանջային մի երեկո Ուրֆայի եկեղեցուց հայերի մահերգը լսեցին եւ տեսան, թե ինչպես բոլորը ողջակիզվեցին»:

Չեմ կարող չանդրադառնալ նաեւ Շարլ Ազնավուրի խռովահույզ նամակին, որը դարձյալ այս դատավարության կապակցությամբ, հարկ է համարել իր խոսքը ձեզ հղել. «Մեր երիտասարդները ինքնության որոնման, անորոշության, արմատախիլ եղած լինելու, խուլ ականջների հանդիպելու պատճառով ներողամտության իրավունքն ունեն: Ֆրանսահպատակ լինելով հանդերձ՝ նրանց չեմ կարող մեղադրել: Ինքս ո՛չ դատավոր եմ, ո՛չ քաղաքագետ, այս տողերը գրում եմ, ինչպես սիրտս է թելադրում, եւ երջանիկ հանգուցալուծման հույս եմ փայփայում: Ես ազգությամբ հայ եմ, մի անգամ գոնե, մտածում եմ, որ մենք արժանի ենք դրան»:

Մեր դատասրահը լեփ-լեցուն է հայերով, շատերը ամբիոնից ելույթ ունեցան: Եվ որքան էլ նրանք քաղաքականապես տարանջատված լինեն, հետեւյալ առումներով միասնական են՝ մենք ցեղասպանության՝ դարի առաջին դժնդակ ցեղասպանության զոհերն ենք, մեր հողերը խլել են մեզնից, մենք ուզում ենք ետ ստանալ: Ինչ վճիռ էլ որ դուք կայացնեք, չորս երիտասարդները մեր հերոսներն են:

Այստեղ ներկա, Ֆրանսիայի համայնքի երկու հարյուր հիսուն հազար, աշխարհի վեց միլիոն հայերը այժմ լսում են ֆրանսիական արդարադատության ձայնը:

Հայ եղբայրնե՛ր, դուք այլեւս միայնակ չեք, ձեր ժողովուրդը կվերագտնի իր բույնը: Չորս երիտասարդները այստեղ կանգնած են եւ գիտեն, որ ֆրանսիացի ժողովուրդը իրենց անմեղ է հռչակելու:

Թարգմանությունը՝
ԳՐԻԳՈՐ ՉԱՆԻԿՅԱՆԻ

ԿՈՄԻՏԵ 300
ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Բրիտանական հատուկ ծառայության նախկին աշխատակից Ջոն Կոլեմանի երկարամյա հետազոտությունները նրան բերեցին ամբողջ աշխարհի մասշտաբով սոցիալական, պետական և քաղաքական պրոցեսների գլոբալ պլանավորման և կառավարման հրեշավոր մտադրության իրողություն լինելու եզրահանգմանը: Մարդկության և առանձին անհատների գիտակցության վրա համընդհանուր վերահսկողության կազմակերպման մեխանիզմ և այդ ծրագրի իրականացման գործիք հանդիսանում է Կոմիտե 300-ը՝ որպես համաշխարհային կառավարման ժամանակակից կազմակերպչական ձև: Իր «Կոմիտե 300: Անտեսանելի կառավարության գաղտնիքները» գրքում Կոլեմանը բացում է մեր երկրում կործանարար «ռեֆորմների» ակունքները և դրանք իրականացնող «ճարտարապետներին» և նախաձեռնողներին քողարկող վարագույրը:

Ջոն Կոլեմանը գիրքը գրել է 1993-ին, ռուսերեն թարգմանությունն իրականացրել է «Վիտյազ» հրատարակչությունը՝ 2000-ին:

Ներկայացնում ենք հատված Կոլեմանի գրքից.

150 տարվա պատմություն ունեցող Կոմիտե 300-ի կազմի մեջ ընդգրկված են ամենավառ ինտելեկտուալներից մի քանիսը, որոնք միավորվել են ստեղծելու ամբողջովին տոտալիտար և բացարձակորեն ղեկավարվող «նոր» հասարակություն: Իրականում այն բոլորովին էլ նոր չէ. բոլոր գաղափարները քաղված են սատանեական կուլտերից: Այդ հասարակությունը ձգտում է միասնական համաշխարհային կառավարության, որը բավականին լավ նկարագրված է նրա հանգուցյալ անդամներից մեկի՝ Գ. Ուելսի Կոմիտեի կողմից պատվիրված աշխատության մեջ: Ուելսը այն համարձակորեն անվանել է «Բացահայտ դավադրություն: Համաշխարհային հեղափոխության պլանները» (H. G. Wells. THE OPEN CONSPIRACY PLANS FOR A WORLD REVOLUTION):

Դա մտադրության համարձակ հաստատում էր, բայց երևի թե այնքան էլ չէ, որովհետև ոչ ոք չհավատաց Ուելսին, բացի «Մեծագույն հզորներից», «Անենէրբե»-ի անդամներից և նրանցից, որոնց այսօր մենք կանվանեինք «Ինսայդերներ» (ինսայդեր- կազմակերպության գաղտնիքներին տեղյակ անդամներ): Ահա մի մասն այն ամենից ինչ առաջարկում էր Ուելսը»:

«Ես կարծում եմ, որ բացահայտ դավադրությունը սկզբում կդրսևորվի որպես ինտելիգենտ և որոշ դեպքերում հարուստ մարդկանց գիտակցված կազմակերպություն, որպես շարժում, որն ունի հստակ սոցիալական և քաղաքական նպատակներ, ընդհանուր համաձայնությամբ արհամարհում, անտեսում է գոյություն ունեցող ղեկավար քաղաքական ապարատի մեծ մասը, կամ տարբեր էտապներում այն օգտագործում որպես պատահական գործիք – պարզապես, որոշակի ուղղությամբ շարժում մի խումբ մարդկանց, որոնք շուտով զարմանքով կնկատեն ընդհանուր մի նպատակ, դեպի որը շարժվում են իրենք: Բոլոր հնարավոր միջոցներով նրանք կաշխատեն ազդեցություն ունենալ կառավարության վրա և ղեկավարել այն»:

«Ինչպես և Ջորջ Օրուելի գիրքը՝ «1984», Ուելսի աշխատանքը ևս հանդիսանում է Միասնական Համաշխարհային Կառավարության համար մասսաների քարոզչություն:

Եթե ընդհանրացնենք Կոմիտե 300-ի մտադրություններն ու նպատակները, կարելի է հանգել հետևյալին.

Միասնական Համաշխարհային Կառավարություն և միատեսակ դրամական համակարգ՝ մշտական, ոչ ընտրովի, ժառանգաբար նշանակված օլիգարխներով, որոնք ղեկավարներ են ընտրում միայն իրենցից՝ ֆեոդալական համակարգի ձևով, ինչպես եղել է միջին դարերում: Այդ Միասնական Աշխարհում բնակչության թիվը սահմանափակվելու է մեկ ընտանիքի երեխաների թվաքանակի կրճատմամբ, հիվանդությունների, պատերազմի և սովի ճանապարհով, մինչև որ մոլորակի ողջ բնակչությունից մնա մեկ միլիարդ մարդ՝ խիստ և հստակ գործունեության ոլորտներում ապահովվող ղեկավար դասի բարեկեցությունը:

Միջին դաս չի լինելու՝ միայն իշխողներ և ծառաներ: Բոլոր օրենքները միասնականացվելու են համաշխարհային դատարանների իրավաբանական համակարգերի շրջանակներում, օգտագործվելու է օրենքների միևնույն օրենսգիրքը, որի իրականացմանը հսկելու է Միասնական Համաշխարհային Կառավարության ոստիկանությունը, իսկ Միասնական Աշխարհի միավորված ռազմական ուժերը ստիպողաբար կներդնեն օրենքները բոլոր նախկին պետություններում, որոնք այլևս բաժանված չեն լինի սահմաններով: Համակարգը հիմնված է լինելու բռնատիրական պետության բազայի վրա. ով կհպատակվի և կծառայի Միասնական Համաշխարհային Կառավարությանը, կստանա իբրև պարգև կյանքի համար գոյության միջոցներ, ով կընդբոստանա՝ պարզապես կդատապարտվի սովամահության կամ կհայտարարվի օրենքից դուրս՝ թիրախ դառնալով յուրաքանչյուրի համար, ով կկամենա սպանել նրան: Անձնական հրազենային կամ սառը զենք ունենալը արգելված է լինելու:

Թույլատրված է լինելու միայն մեկ կրոն՝ Միասնական Համաշխարհային Կառավարության Եկեղեցու ձևով, որը, ինչպես մենք կտեսնենք, իր գոյությունը սկսել է 1920-ից: Սատանիզմը, լյուցիֆերականությունը և սև մագիան ընդունվելու են՝ որպես օրինական ուսումնական առարկաներ, մասնավոր կամ եկեղեցական դպրոցների միաժամանակյա արգելմամբ: Բոլոր քրիստոնեական եկեղեցիները ոչնչացվելու են, իսկ քրիստոնեությունն ինքը՝ Միասնական Համաշխարհային Կառավարության օրոք դառնալու է անցյալ:

Որպեսզի հաստատվի այնպիսի վիճակ, որի դեպքում չի լինելու անձնական որևէ ազատություն և ըմբռնում ազատության վերաբերյալ, վերացվելու են այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են՝ կառավարման հանրապետական ձև և ժողովրդի անկախության անկապտելի իրավունք: Ազգային արժանապատվությունը և ցեղային պատկանելիությունն արմատախիլ են արվելու, իսկ անցումային շրջանում ցեղային ծագման մասին նույնիսկ հիշեցումը դառնալու է ծանր պատիժների պատճառ:

Յուրաքանչյուր մարդու ներշնչվելու է, որ նա Միասնական Համաշխարհային Կառավարության ստեղծագործությունն է: Բոլորի վրա նշվելու են նույնականացման համարներ, որոնց առկայությունը շատ հեշտ է լինելու ստուգել:

Նույնականացման այդ համարները ներդրվելու են Բելգիայում, Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի համակարգչի համահավաք ֆայլում, դեպի որը ցանկացած ժամանակ ազատ և ակնթարթային մուտք են ունենալու Միասնական Համաշխարհային Կառավարության բոլոր հիմնարկությունները: ԿՀՎ-ի, ՀԴԲ-ի, Նահանգների տեղային ոստիկանությունների, ԱՄՆ-ի Հարկային վարչության (IRS), Արտակարգ իրավիճակների վարչության, Սոցիալական ապահովագրության վարչության ամփոփիչ ֆայլերը բավականին ընդլայնվելու են և լինելու են ԱՄՆ-ի ամեն մի բնակչի

անհատական տվյալների հիմքում:

Ամուսնությունները դրվելու են օրենքից դուրս, և ընտանեկան կյանքը, այնպես, ինչպես մենք հասկանում ենք հիմա, չի լինելու: Երեխաներին փոքր տարիքից վերցնելու են ծնողներից և նրանք դաստիարակվելու են հսկիչների կողմից՝ որպես պետական ունեցվածք: Կանանց հոգեբանությունը խեղաթյուրվելու է՝ «կանանց էմանսիպացիայի» մշտական ներգործությամբ: Ազատ սեքսը լինելու է հարկադրական:

Քսան տարեկանից բարձր կնոջ կողմից ընդունված կանոնների խախտումը խստորեն պատժվելու է: Երկու երեխայի ծննդից հետո կնոջը սովորեցնելու են ինքնուրույն աբորտներ անել. համապատասխան տվյալները լինելու են Միասնական Համաշխարհային Կառավարության շրջանային համակարգիչներում՝ յուրաքանչյուր կնոջ անհատական դոսյեում: Եթե կինը երկու երեխա ունենալուց հետո նորից կհղիանա, նրան ստիպողաբար կուղարկեն հիվանդանոց՝ աբորտ իրականացնելու համար և այդ ժամանակ կիրականացվի նաև նրա ստերիլիզիացիան:

Լայնորեն տարածված է լինելու պոռնոգրաֆիան, կինոթատրոններում պարտադիր կերպով ցուցադրվելու են պոռնոֆիլմեր, ներառյալ՝ միասեռամոլական: «Ուժերը վերականգնող» թմրանյութերի օգտագործումը լինելու է պարտադիր, յուրաքանչյուրի համար սահմանվելու է թմրանյութերի նորմա, որը կարելի կլինի գնել Համաշխարհային Կառավարության խանութներից ողջ աշխարհում: Պարտադիր օգտագործման համար լայն տարածում են ունենալու նաև գիտակցությունը փոխող թմրանյութերը: Դրանք ավելացվելու են խմելու ջրին և սննդին՝ առանց մարդկանց համաձայնության և գիտության: Ամենուրեք բացվելու են նարկոբարեր՝ Համաշխարհային Կառավարության գաղտնի գործակալների կողմից ղեկավարվող: Այդ զվարճավայրերում մարդ-ստրուկները կանցկացնեն իրենց ազատ ժամանակը: Այդպիսով, էլիտայից դուրս թողնված մասսաները իջեցվելու են վարժեցված կենդանիների մակարդակի և պահվածքի՝ զուրկ սեփական կամքից, հեշտ ենթարկվող և ղեկավարվող:

Տնտեսական համակարգը կառավարվելու է օլիգարխների դասի կողմից, որը թույլ է տալու արտադրել միայն այնքան սննդամթերք և կենցաղային արտադրանք, որքան պետք է ստրկական մասսաների աշխատանքային ճամբարների գործունեության համար:

Ողջ հարստությունը կենտրոնացված է լինելու Կոմիտե-300-ի էլիտար անդամների ձեռքում: Յուրաքանչյուր մարդու ներշնչվելու է, որ նրա գոյատևումը լրիվ կախված է իշխանությունից: Աշխարհը ղեկավարվելու է Կոմիտե-300-ի գործադիր որոշումներով, որոնք անմիջապես օրենքի ուժ են ստանալու:

Լրիվ վերացվելու է արդյունաբերությունը՝ ատոմային էներգետիկ համակարգի հետ միասին: Միայն Կոմիտե-300-ի անդամները և նրանց ընտրյալներն են իրավունք ունենալու տնօրինելու երկրային ռեսուրսները: Գյուղատնտեսությունը նույնպես, բացառապես, գտնվելու է Կոմիտե-300-ի ձեռքում, սննդամթերքի արտադրությունը խստորեն վերահսկվելու է: Երբ

այդ մեթոդներն արդեն սկսեն պտուղ տալ, մեծ քաղաքների բնակչությունը բռնի կտեղափոխվի հեռավոր շրջաններ, իսկ նրանք, ովքեր կհրաժարվեն հեռանալ, կոչնչացվեն Համաշխարհային Կառավարության փորձարարական մեթոդով, որը Կամբոջայում իրագործեց Պոլ Պոտը:

Անբուժելի հիվանդների և ծերերի էֆտանազիան (անցավ մահացում) պարտադիր է լինելու: Քաղաքների բնակչությունը քանակով չի անցնելու նախապես սահմանված մակարդակը: Որակավորված աշխատողները կտեղափոխվեն այլ քաղաքներ, եթե քաղաքը, ուր նրանք ապրում են, արդեն գերբնակեցված կլինի: Մնացած՝ ոչ որակավորվածները կուղարկվեն դեռևս լրիվ չբնակեցված քաղաքներ՝ այնտեղի թվաքանակային նորման լրացնելու համար:

Առնվազն չորս միլիարդ «անօգուտ սնվողներ» կոչնչացվեն մինչև 2050-ը՝ սահմանափակ պատերազմներով, մահացու արագընթաց հիվանդությունների կազմակերպված համաճարակներով և սովով: Էլեկտրաէներգիայի, սննդի և ջրի քանակը կպահվի ոչ-էլիտայի կյանքը հազիվ պահպանելու մակարդակի վրա միայն: Առաջին հերթին դա վերաբերվելու է Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի սպիտակամորթներին, դրանից հետո միայն մյուս ռասաներին: Կանադայի, Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի բնակչությունը կկրճատվի ավելի արագ, քան երկրագնդի այլ տարածքներում, մինչև որ երկրագնդի ողջ բնակչությունը կհասնի ղեկավարվող մակարդակի՝ մեկ միլիարդի: Դրանից 500 միլիոնը կլինեն չինացիներ և ճապոնացիներ, քանի որ նրանք արդեն շատ դարերով ենթարկվել են կարգավորման և սովորել են առանց առարկության հնազանդվել իշխանություններին: Ժամանակ առ ժամանակ արհեստականորեն ստեղծվելու է սննդի, ջրի և բժշկական օգնության անբավարարություն, որպեսզի մասսաներին հիշեցվի ամբողջովին Կոմիտե-300-ի բարի կամքից նրանց գոյության կախվածությունը:

Արդյունաբերության այնպիսի ճյուղերի վերացումից հետո, ինչպիսիք են՝ շինարարականը, ավտոմոբիլայինը, մետալուրգիականը, ծանր մեքենաշինականը. բնակարանային շինարարությունը կսահմանափակվի, իսկ արդյունաբերության պահպանված ճյուղերը գտնվելու են նատոյական «Հռոմեական ակումբի» հսկողության տակ: Նույնը վերաբերվելու է նաև բոլոր գիտահետազոտական և կոսմիկական հետազոտման բնագավառներին, որոնք խիստ սահմանափակվելու են և դրվելու Կոմիտե-300-ի ենթակայության տակ: Նախկին երկրների տիեզերական զենքը կոչնչացվի միջուկային զենքի հետ միասին:

Բոլոր հիմնական և օժանդակ դեղագործական նյութերը, բժիշկները, ատամնաբույժները և մյուս բուժաշխատողները կգրանցվեն կենտրոնական համակարգչային բանկի տվյալներում, և դեղորայք կամ բուժօգնություն չի տրամադրվի առանց տեղական հատուկ հսկիչների թույլտվության, որոնք պատասխանատու են լինելու յուրաքանչյուր քաղաքի, գյուղի, ավանի համար:

Միացյալ Նահանգները կբնակեցվեն օտար մշակույթների պատկանող մարդկանցով, որոնք վերջնականապես կճնշեն Սպիտակ Ամերիկան. մարդիկ, որոնք գաղափար չեն ունենալու այն ամենի մասին, ինչը պաշտպանում է ԱՄՆ-ի Սահմանադրությունը և որոնց համար ազատության և արդարության հասկացողությունները ոչ մի նշանակություն չեն ունենալու: Գլխավոր մտահոգությունները նրանց համար լինելու են սնունդը և կացարան ունենալը:

Բացի «Միջազգային հաշվարկային» բանկից և Համաշխարհային բանկից, մյուս բոլոր կենտրոնական բանկերի գործունեությունն արգելվելու է: Մասնավոր բանկերը հայտարարվելու են օրենքից դուրս: Պարգևատրումը

արված աշխատանքի համար իրականացվելու է միասնականացված ձևով. Համաշխարհային Կառավարության նախապես հաստատված սանդղակով: Արգելվելու է աշխատավարձի բարձրացման ցանկացած պահանջ, ինչպես նաև՝ որևէ շեղում աշխատավարձային միասնականացված ստանդարտային սանդղակից, որը նույնպես հաստատված է լինելու Համաշխարհային Կառավարության կողմից: Օրենքը խախտողները կպատժվեն անմիջապես: Ոչ էլիտայի ձեռքում չի լինելու առձեռն որևէ գումար կամ դրամ: Բոլոր հաշվարկները կատարվելու են քարտերի օգնությամբ, որոնց վրա նշված է լինելու նրա տիրոջ անհատական համարը: Ցանկացած մեկը, ով կխախտի Կոմիտե-300-ի կանոնները և սահմանված կարգը, կպատժվի քարտի ժամանակավոր սառեցմամբ՝ կախված արարքի բնույթից և ծանրությունից: Երբ այդ մարդիկ ցանկանան գնումներ կատարել, հանկարծ կիմանան, որ իրենց քարտերը մտցվել են սև ցուցակ, և իրենք չեն կարող որևէ ծառայություն կամ մեթոդ ստանալ: «Հին» դրամներ, այսինքն, հնագույն կամ նախկին ժողովուրդների արծաթյա դրամներ վաճառելու փորձը դիտվելու է որպես մահապատժով դատապարտելի ծանր հանցագործություն: Պահանջվելու է որոշակի ժամանակահատվածում հանձնել բոլոր հին դրամները՝ ատրճանակների, հրացանների, պայթուցիկ նյութերի և ավտոմեքենաների հետ: Միայն Համաշխարհային Կառավարության էլիտային և բարձրաստիճան անձանց է թույլատրվելու ունենալ սեփական զենք, փող և ավտոմեքենա:

Եթե մարդ լուրջ հանցագործություն է կատարել, նրա քարտը կբռնագրավվի առաջին իսկ հսկիչ կետում, որտեղ այն կներկայացվի: Դրանից հետո այդ մարդն այլևս չի կարողանա ստանալ սնունդ, ջուր, բնակատեղ, մասնագիտացված բժշկական օգնություն և պաշտոնապես կճանաչվի վտարյալ: Այդպիսով, կձևավորվեն մերժվածների մեծ խմբեր, որոնք կաշխատեն ապրել այնպիսի տեղերում, որտեղ գոյության միջոցներ հայթայթելը անհրաժեշտ կլինի: Նրանց վրա կհարձակվեն և կորսան առաջին իսկ հնարավորության դեպքում: Վտարանդիներին որևէ ձևով օգնող անձիք նույնպես կոչնչացվեն: Որոշակի ժամանակահատվածում ոստիկանությանը կամ զինվորականներին հանցագործի չհանձնվելու դեպքում, նրա փոխարեն բանտային ժամկետը կլրացնի նրա ազգականներից որևէ մեկը, առանց որոշակի ընտրության:

Մրցակից խմբերի և խմբակցությունների միջև կհրահրվեն տարաձայնություններ, ինչպես օրինակ, արաբների և հրեաների միջև, աֆրիկյան ցեղերի միջև, և նրանց կթույլատրվի պատերազմել ՆԱՏՕ-ի և ՄԱԿ-ի հսկիչների հսկողությամբ: Այդպիսի տակտիկա կկիրառվի նաև Կենտրոնական և Հարավային Աֆրիկայում: Այդ կործանարար պատերազմները կշարունակվեն մինչև Համաշխարհային Կառավարության վերջնական հաստատումը, և դրանք կկազմակերպվեն բոլոր մայրցամաքներում և տարածաշրջաններում, որտեղ ապրում են էթնիկական և կրոնական տարբերություններով մարդկանց մեծ խմբեր, այնպիսիք, ինչպիսիք են՝ սիկխիները, պակիստանյան մուսուլմանները և հնդկական հինդուիստները: Էթնիկական և կրոնական հակասությունները կուժեղացվեն և կսրվեն, իսկ որպես դրանց կարգավորման միջոցներ՝ կհրահրվեն դաժան կոնֆլիկտները:

Բոլոր լրատվական ծառայությունները և տպագրական միջոցները կգտնվեն Համաշխարհային Կառավարության հսկողության տակ: «Զվարճությունների» տեսքով պարբերաբար կկազմակերպվի ուղեղների լվացում, որն արդեն կիրառվում է ԱՄՆ-ում և դարձել է արվեստ: Ոչ օրինապահ ծնողներից խլված երեխաները կստանան հատուկ դաստիրակություն, որը նպատակաուղղված կլինի նրանց դաժանացնելուն. երկու սեռի երիտասարդներից էլ կուսուցանվեն՝ Համաշխարհային Կառավարության աշխատանքային ճամբարների համակարգերի կալանավայրերում պահակություն անցկացնելու նպատակով»:

Ռուսերենից թագմանեց ՆԱՆՆԵՆ

ԽՍՅՈՒՆ

Ես խորշում եմ այն բոլոր վարդապետություններից և հոսանքներից, որոնց գաղափարախոսությունները կամ գործունեությունն ուղղված են, առհասարակ, «ազգ» երևույթի ու, մասնավորապես, հայ ազգի դեմ:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Այսօր աշխարհաքաղաքացիության պղտոր միջավայրում դաստիարակվածներն ազգասիրությունն, ասել է՝ հայրենասիրությունը, հետամնացություն են համարում: Սակայն դեռևս անտիկ աշխարհի ամենազարգացած ժողովուրդներից հույները իրենց ժամանակների գերլայնախոհ մտքի տեր, խիզախ այրերին, որպես երկրի ու ժողովրդի կողմից վեհ ու բացառիկ երախտիքի տուրք, շնորհում էին ՀԱՅՐԵՆԱՍԵՐ բարձրագույն տիտղոսը:

Այսօր հայտնվել են Երկիր մոլորակի ժողովուրդների ու պետությունների սերտաճեցման, համահավասարեցման ծգտող, նորովի փրկիչներ, որոնք, ի հեճուկս փոքր երկրների կենսական շահերի, ամեն կերպ ուզում են ստեղծել լոկ մեկ համահավաք կենտրոնից ուղղորդվող միաբևեռ համաշխարհային տնտեսական տիրապետություն:

Ոչ հեռու անցյալում Խորհրդային Միության կազմում հարկադրաբար հայտնված տարբեր ժողովուրդների, մշակույթի, ազգային ինքնատիպ զարգացման բնականոն ընթացքը խոտորող ամենասնանկ երևույթը համահավասարության գաղափարախոսությունն էր՝ «Արդարություն, եղբայրություն, հավասարություն» լոզունգով…

Սակայն հետագայում հասարակական նորմալ կյանքի օրինաչափությունները ապացուցեցին, որ վերոհիշյալ կարգախոսներն ընդամենը մութ ու կործանարար ուժերի կողմից աշխարհի փոքր ու թույլ զարգացած երկրների ժողովուրդներին նետված խայծ էին:

Թեև խորհրդային կայսրության փլուզման և ժողովուրդների արժանապատվության գիտակցմամբ մասամբ պատճեշվեց մանկուրտացման այդ ամենակործան գաղափարախոսությունը, սակայն, ի դժբախտություն մեզ, ցայսօր, այլ պատմուճաններով, այլ դիմակներով կերպարանափոխված, ամենուր վխտում են մարդասիրական այլ կարգախոսներով հանդես եկող, հնի հետնորդներ՝ նորովի փրկիչները…

Վերջիններիս և բազմապիսի այլ «մարդասիրական» ծրագրերի ու հոգեփրկիչ աղանդների առկայության պայմաններում չափազանց անհրաժեշտ է ազգի ինքնապահպանության խնդիրը: Այո՛, չափազանց անհրաժեշտ է, քանզի վերոհիշյալների միակ նպատակն է ամենայն խարդավանքներով ու խաբեությամբ համահավասարեցնել բոլոր ազգերին (հատկապես՝ քաղաքակիրթներին), որոնց էթնիկ հիմքերն ու Բարձրյալի պարգևած մնացյալ վեհ հատկանիշներն անանցանելի արգելափակոցների նման խոչընդոտում են նրանց աշխարհակործան գործունեությանը:

Եվ ահա, որպեսզի մենք չդադարենք քաղաքակիրթ ազգ լինելուց, որպեսզի չվերածվենք պարզագույն կենսազանգվածի, պարտավոր ենք ամենուր, ամեն պահ, ամեն կերպ խուսափել աշխարհագործական ուժերի մահաբեր խայծն ըմբոշխնելուց:

ԿԱՐԼՈՍ ԵՂԻԶԱՐՅԱՆ

«ՀԱՅ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԴԱՇՏԸ»

Դոկտոր Պոլ Ռորբախի հարցաքննությունը

2. Որպես վկա՝ դատարան է հրավիրվում դոկտոր Պոլ Ռորբախը: Մոտ ութ տարի նա աշխարհագրական և քաղաքական տնտեսագիտության պրոֆեսոր է եղել Բեռլինի առևտրական մի վարժարանում, որը, բարձրագույն դպրոց չլինելով հանդերձ, իրավունք ուներ գիտական տիտղոսներ շնորհելու: Մի քանի տարի առաջ դոկտոր Ռորբախը թողել էր վարժարանը՝ ճամփորդելու, աշխարհագրության և համաշխարհային վաճառականության (մարքեթինգի) համար զանազան նյութեր հավաքելու և աշխարհի առևտրական աշխարհագրության մասին գիրք գրելու նպատակով: Դոկտոր Ռորբախը համաշխարհային գիտական շրջաններում արդեն հայտնի էր ինչպես իր հոդվածներով, այնպես էլ հրատարակած գրքերով, որոնք ժողովրդագրական մեծ արժեք ունեին: Դատարանում փաստաբան Մըքգեմենթը ներկայացնում է դոկտորի գրքերը.

«Through Turn and Armenia» (Berlin, 1898), «From the Caucasus to the Mediterranean» (Leipzig, 1901), «Travales in Western Asia» (Berlin, 1903), «To Bagdad and Babylon» (Berlin, 1907), «The Bagdad Railway» (Berlin, 1908), «Armenia and the Armenians» (Berlin, 1919):

Եվրոպայում, Չինաստանում, Կենտրոնական Ասիայում, Եգիպտոսում, Պաղեստինում, Միջագետքում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, Կենտրոնական և Հարավային Աֆրիկայում, Բելգիական Կոնգոյում ուսումնասիրություններ անցկացրած գիտնականը լրջորեն ուսումնասիրել է հայերին: Դա վկայում է դատարանում անցկացված հարցաքննությունը:

Դատական նիստ վարող (նախագահող) Ջորջ Վուլուըրթին հարցնում է Ռորբախին.

- Ասեք, ինչպիսի՞ պատեհություն եք ունեցել հայ ժողովրդի հետ շփվելու:

- Մի քանի անգամ ճանապարհորդել եմ Հայաստանում, իսկ նախապատերազմական Հայաստանը թուրքական, ռուսական և պարսկական Հայաստանների էր բաժանվում,- պատասխանում է դոկտոր Ռորբախը: -Հայերի ամենազարգացած մասը Ռուսաստանի քաղաքացի է: Եվ ես, որ կարողանում եմ խոսել ռուսերեն, շփվել եմ կիրթ, զարգացած մարդկանց եկեղեցականների, օրենսգետների, առևտրականների հետ: Քանի որ Ռուսական Հայաստանի երկրորդ լեզուն ռուսերենն է, ես կարողացել եմ շատ տեղեկություններ հավաքել հայերի մասին:

- Ռուսահայաստանի հայ հպատակները զանգվածաբար խոսո՞ւմ են ռուսերեն:

- Ամեն ոք:

- Քանի՞ անգամ եք ճամփորդել Հայաստանում, քանի՞ անգամ եք այցելել Հայաստան:

- Նախ՝ 1897-ին, հետո՝ 1898-ին, ապա՝ 1901-ին և վերջին անգամ՝ 1911-ին:

- Ասեք, ընդհանուր տևողությամբ որքա՞ն եք եղել Հայաստանում:

- Թերևս մեկ տարի:

- Հայաստանում գտնված ժամանակ շփվե՞լ եք մարդկանց հետ:

- Ամեն դասակարգի և տիպարի մարդկանց:

- Ասեք, հայերը ցրված ժողովո՞ւրդ են, աշխարհի բոլոր կողմերում հայեր կա՞ն:

- Այո: Ռուսաստանում, Թուրքիայում, Պարսկաստանում, Հունաստանում, Հոլանդիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Ամերիկայում հանդիպել եմ հայերի:

- Ձեր այցելած երկրներում հայերն ամուսնություններ կնքո՞ւմ են սպիտակների հետ:

- Այո, ամեն տեղ:

- Ի՞նչ եք նկատել, ի մասնավորի, ռուսների հետ կնքված միջամուսնական հարաբերություններում:

- Հազարավոր միջամուսնություններ կան կնքված: Ջգացումի որևէ տարբերություն չկա հայ և ռուս ժողովուրդների միջև:

- Մեկ կամ մյուս կողմից նախապաշարմունքներ չկա՞ն:

- Ոչ, բացարձակապես ոչ մի նախապաշարմունք: Ռուսական կայսրության մեջ կոմս, իշխան կամ մեծապատիվ հայեր կան, օրինակ Մելիքյանը, որը ռուսական ձևով հայտնի է որպես Լոռիս Մելիքով: Նա Ռուսաստանի կայսրության կոմս էր և նախարարապետ՝ Ալեքսանդր Բ.-ի օրոք և ամուսնացած էր ռուս կոմսուհու հետ: Նրանից զատ, ֆինանսների նախարարն էլ հայ էր՝ Աբազան:

- Գիտե՞ք որևէ ամուսնություն, որ գերմանացիներն են կնքել հայերի հետ:

- Այո: Իմ մոտ բարեկամն է հայ միսիոներ Ավետարանյանը, որ ամուսնացած է Ֆրոյլան Օերձինի հետ: Ճանաչում եմ նաև պրոֆեսոր Նեփին, որը էլզաս Լոթարինգիայի Ստրասբուրգ քաղաքի համալսարանի քաղաքական տնտեսագիտության պրոֆեսոր էր և այժմ, հանգստյան գնալով, ապրում է Լայպցիգում: Նրա կինը հայուհի է:

- Ասեք խնդրեմ, դոկտոր Ռորբախ, աշխարհի վրա կա՞ մի ժողովուրդ, որը խտրականություն է ցուցաբերում հայերի նկատմամբ՝ նրանց մաշկի գույնի պատճառով:

- Երբեք այդպիսի բան չեմ նշմարել:

- Իրենց բնակված երկրներում նրանք ի՞նչ դիրքի են հասել առևտրական և քաղաքական շրջաններում:

- Բավական մեծաքանակ առևտուրը, մասնավորապես Ռուսաստանում, հայերի ձեռքին է: Վաճառատների բազմաթիվ տերեր կան Մոսկվայում, Պետրոգրադում և Թիֆլիսում՝ Կովկասի մայրաքաղաքում: Ռուսաստանի համալսարաններում շատ պրոֆեսորներ հայ են: Մոսկվայում շատ նշանավոր ուսումնական հաստատություն կա, որն ուսումնասիրում է արևելյան լեզուները: Հայերն են հիմնել: Մի հայի՝ Լազարովի կողմից 1819 թվականին Մոսկվայում հիմնվել է Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը: Ռուսաստանում Արևելյան լեզուների պրոֆեսորներն այս Լազարյան ճեմարանից են ելնում:

- Ի՞նչ կարող եք ասել նրանց ընդունակ ժողովուրդ լինելու մասին: Ունակություններ ունե՞ն առևտրական գործառնություններով հաջողությամբ զբաղվելու համար:

- Նրանք շատ պատվական մարդիկ են ու մեծ ունակություններ ունեն առևտրով և գիտություններով զբաղվելու, հատկապես՝ լեզուներ ուսումնասիրելու համար:

- Ուրիշ խոսքով, կրթված հայն ընդհանրապես մեկից ավելի լեզուների է տիրապետո՞ւմ:

- Այո:

- Դոկտոր Ռորբախ, որքանով որ ուսումնասիրել եք հայերին և նրանց հետ շփվել աշխարհի բոլոր մասերում, Ձեր կարծիքով, հայը սպիտա՞կ մարդ է:

- Բացարձակապես սպիտակ:

Ապա վկային հարցեր տալու հերթը հասնում է մեղադրյալի դատապաշտպան, փաստաբան Մըքգեմենթին:

- Դոկտոր Ռորբախ, Ռուսաստանում հայազգի որևէ երևելի արվեստագետ կա՞:

- Այո, կան բանաստեղծներ, նկարիչներ, քանդակագործներ:

- Այվազովսկի անվամբ մեկին գիտե՞ք:

- Այվազովսկի՞: Այո: Խիստ նշանավոր մի նկարիչ է, Ռուսաստանի ամենից հայտնի նկարիչներից մեկն է: Հայերենով նա կոչվում է Այվազյան:

- Դատարանին պատմեցեք Վենետիկում և Վիեննայում հաստատված հայ եկեղեցիների մասին:

- Վենետիկի և Վիեննայի հայերի մեծամասնությունը պատկանում է հայ եկեղեցուն՝ քրիստոնեական եկեղեցու ամենահին ճյուղերից մեկին: Հայերի մեծամասնությունը պատկանում է ուղղափառ հայ եկեղեցուն (դոկտոր Ռորբախը, սխալմամբ, հայ լուսավորչական եկեղեցին ուղղափառ է անվանում- Ս.Գ.), բայց ոմանք ընդգրկված են հռովմեական կաթոլիկ եկեղեցուն: Հայ հռովմեականները մի մենաստան-վանք ունեն Վենետիկում և մի վանք էլ Վիեննայում՝ իր մեծ գրադարանով և շատ նշանավոր տպարանով:

Վիեննայի հայոց տպարանում լույս են տեսնում արևելյան լեզուներով ամենաբարդ գործերը Եվրոպայում:

Պրոֆեսոր Պոլ Ռորբախին այլևս հարցեր տալու անհրաժեշտություն չի գտնում դատարանը:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

ՈՂՔ ԸՆԹԵՐՑՈՂԱՑ... «ԵՎ ՁՈՒՐ ՄԻ ՀԱՐՑՐՈՒ»

«Ես ձեզ եմ ասում, կգա ոգու սով: Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ»: Մեծն Ավետիք Իսահակյանը թերևս պատկերացում անգամ չէր կարող ունենալ, որ գալիք սերունդները կլինեն այնքան ճարպիկ, ճկուն և ինչու չէ նաև «խելացի», որ, հանճար չունենալով. «հանճար» լինելու ելքը կգտնեն: Իհարկե, չէ՞ որ հայ ազգը պրպտող ու հնարամիտ ազգ է, և ամենակարևորը՝ ունեցել է տաղանդներ, որոնք կարող են «օգնության ձեռք մեկնել»:

Վերջին մեկ-երկու տարում «արդիական», «մոդայիկ» է դարձել Պարույր Սևակի մասին հուշագրությունները և, ընդհանրապես, նրա մասին գրելը (Գրիգոր Չալիկյան՝ «Անլռելի սիրահարը», Մետաքսե՝ «Սևակն իմ հուշերում», Հովիկ Չարխչյան «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» (2 հատոր), «Սևակի մահվան առեղծվածը»):

Ուշագրավ են վերջին երեք գրքերի կենսագրությունները: «Սուլամիթա» կամ ինչպես գրել է հեղինակը «Սևակի մեծ սերը» գրքի վերնագիրն իսկ հերքման է գալիս բանաստեղծի ստեղծագործություններից մեկը.

- Եվ զուր մի՞ հարցրու,
Թե որն է եղել իմ ամենամեծ սերը...
Սերերը, սե՛ր իմ,
Եթե մինչև իսկ անհավասար են՝
Անհավասար են, ինչպես... մատները,
Ո՞ր մատդ կտրես
Պիտի շատ ցավի կամ պակաս ցավի...

Սրան նաև լրացման են գալիս Պ. Սևակի գրչակիցների խոսքերը. «Սևակն, այո, սիրել է Սուլամիթային, բայց նա մի անհասկանալի անձ էր, որն իր կողքի կանանց երբեք մեկը մյուսից ավելի կամ պակաս չէր համարում»:

Բայց մի մոռացիր, որ ես, ճիշտն ասած,
Դեռ չեմ բաժանվել ոչ մի սիրածից,
Իրենք են փոխել անուններն իրենց...
Սակայն ո՛չ իրենց:

Չնայած նրան, որ գրքում արտահայտված որոշ զգացմունքներ ժխտում են բանաստեղծի խոսքերը, այդուհանդերձ «Սևակասեր ընթերցողը «գրկաբաց» ընդունեց գիքը, ասելով՝ «Բալզակի սիրո նամականին նույնպես տպագրվեց, ինչո՞ւ չի կարելի Սևակի նամականին տպագրել»: Այստեղ հարց է առաջանում. «Ընթեցողը կարողացա՞վ գիրքն ըստ էության ընկալել, թե՞ այստեղ էլ օտարներին նմանվելու մոլուցքն իր շեշտադրված խոսքն ասեց»:

Հենց այս և նման մոտեցումներն էլ նպաստեցին գրքի աննախադեպ պահանջարկին և բարձր գնին:

Հաջողությունն, անշուշտ, անհավատալի էր, օգտակարը հանդես եկավ հաճելիի հետ, այսինքն՝ փառքը՝ նյութականի: Սա չէր կարող իր հետքը չթողնել «երախտապարտ» հեղինակի վրա և նախատեսվեց մի նոր «Սևակի առեղծվածային մահը» գրքի հրատարակումը: Մի գիրք, որն ինտրիգային և հետաքրքիր է, բայց ոչ երբեք բովանդակալից, ճանապարհ հարթեց՝ առաջացնելով հետաքրքրություն, ուստի նաև բարձր գին: Մի գիրք, որը չի լուսաբանում ոչինչ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ եղած փաստերի ու կասկածանքների հանրագումար ու այդ ամենի հանձնումը թղթին:

Իհարկե, կարելի է գնահատել մեր սերնդի զարմանալի աշխատասիրությունն ու մտքի ճկունությունը, բայց մեզ սպասվում է վարպետի՝ Ավ. Իսահակյանի խոսքերի իրականացումը. «Դուք, որ հեգնեցիք ուժն ստեղծագործ՝ Ձեր նյութի հանդեպ կգա Ոգու սով»:

Ուրեմն, եկեք ընդառաջ գնանք բանաստեղծի՝ Պարույր Սևակի, ցանկությանը և զերծ մնանք կեղծ ու շինծու ծափերից:

Իսկ հիմա, իսկ հիմա
Ինձ ծափեր պետք չեն,
Ինձ պահեք, մարդիկ, ոչ թե ծափերով
Այլ Ձեր մարդկային մոտեցմամբ թաքուն...
Ինձ մի բամբասեք՝
Չարած մեղքերս աշխարհին տալով...

ԱՐՓԻՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կարիք չկա գոռալ. «Ես հայրենասեր եմ»,- հայրենասիրության աստիճանը պետք է երևա հայրենիքի համար արած գործի չափով:

Հիասթափության պահին միշտ պետք է հիշենք, որ հենց դա են ուզում մեր թշնամիները և նոր ուժով սկսենք պայքարել:

Պարտվելուց ավելի վատ է, երբ մեռնում է պայքարի ցանկությունը:

ԱՍԱԼԱ-Ն ՈՒԺ Է...

Ա_ռավոտյան կանուխ, դեռ աղջամուղջին
Ա_աստիկ ցրտից սառած, բայց միշտ արթուն պատրաստ
Ա_ՍԱԼԱ-ի մարտիկներն են հսկում Եռաբլուր պանթեոնից,
Լ_ացող մանուկներին ու մայրերին սգավոր
Ա սում են միշտ նրանք՝ երեսունինը քարե վեհ հուշարձան.
«Ն ույնն է այս աշխարհը արդեն հարյուր տարի,
Ուժ պետք է լինենք, մեկ բռունցք, մեկ ազգ,
ժ ամն է արդեն վաղուց արդար փոխհատուցման,
Է_նպես պիտի անենք, որ թուրքն ընդմիշտ զղջա»:

Այս բանաստեղծությունն էլ իմ փոքրիկ նվերը «Վան» գործողության հոբելյանին:

ՆԱՐԵԿ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ



...ՈՎ ԱՍԵԼԻՔ ՈՒՆԵՐ, ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼ

Արամ Ծատուրյան

Պարոն Ծատուրյան, մի փոքր պատմեք Ձեր մասին:

- Մենք ծագումով Մշո դաշտի Սարիղամիշ գյուղից ենք: Մեր պապերը այնտեղ են ծնվել: Եկել ու հաստատվել են Ալագյազի փեշի Մանթաշ գյուղում, երեք-չորս տարի անց իջել են դաշտ, տուն ու տեղ դրել: Ես ծնվել եմ 1933թ. Լենինականում: Սովորել եմ տեղի նկարչական ստուդիայում: Այնուհետև ընտանիքով տեղափոխվել ենք Երևան: 1949-ին ընդունվել եմ Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան, որն էլ ավարտելուց հետո ընդունվել եմ Գեղարվեստի ինստիտուտ (այժմ՝ ակադեմիա), վեց տարի անց գերազանցության դիպլոմով ուսումս ավարտել և 1960-ին արվեստի վարչության նշանակումով մեկնել եմ Լենինական Ա. Մռավյանի անվան թատրոնում որպես գլխավոր նկարիչ-ձևավորող աշխատելու: Տասը տարի անց՝ 1970-ին, ընտանիքով տեղափոխվել եմ Երևան: Մասնագիտությամբ գեղանկարիչ եմ, ինչն օգնել է ինձ զբաղվել թատերական ձևավորմամբ: Մոտ 40-42 բեմադրություն եմ ձևավորել թատրոններում: Երեք բեմադրություն եմ արել Վարդան Ածեմյանի հետ, համագործակցել եմ Երվանդ Ղազանչյանի, Համլետ Հովհաննիսյանի հետ:

- Ե՞րբ եք սկսել նկարել, ո՞րն է եղել Ձեր առաջին աշխատանքը:

- Նկարել եմ 1943-ից: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ընկերոջս՝ Ռաֆայել Եղոյանի հետ (ով հիմա ճարտարապետ է) դասից փախանք ու գնացինք նկարչական ստուդիա: Այնտեղ ընդունվելու նախապայման եղավ տնօրենի կողմից հանձնարարված նատյուրմորտը՝ մի կուժ ու մի խնձոր: Երկուսս լավ նկարեցինք: Հաջորդ օրն ևեթ գնացինք դասի: Այդ նատյուրմորտը իմ առաջին աշխատանքը եղավ: Հետագայում ստեղծվեցին ինձ համար շատ թանկ նկարներ. տատիկիս՝ Հռոմսիի, վաղամեռիկ բանաստեղծ, երկու գրքի հեղինակ, իմ մտերիմ ընկեր Լևոն Թորոսյանի, Ջորավար Անդրանիկի, Վիլյամ Սարոյանի, Վարդան Ածեմյանի, Շերենցի, Միեր Մկրտչյանի և էլի շատ ու շատ ուրիշների գեղանկարները: Ուսանող էի, երբ Միերին նկարեցի, երեք տարի միասին ենք ապրել հանրակացարանում:

- Ո՞րտեղ եք աշխատել որպես գեղանկարիչ-ձևավորող:

- Բեմադրական էսքիզներ հիմնականում արել եմ Լենինականի Ա. Մռավյանի անվան թատրոնում: Արտաշատի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի մեծ ճեմասրահի դեմ դիմաց գտնվող երկու մեծ պատերն եմ ձևավորել. Արտաշատ քաղաքի հիմնադրումը Արտաշես թագավորի կողմից և Նավասարդյան խաղեր. Վարդավառ, Զրտուք. (13մ երկարություն, 3,5մ բարձրություն): 1962թ. դեկտեմբերի 31-ին Ա. Մռավյանի անվան թատրոնն այրվեց իմ փակ ցուցահանդեսի հետ միասին, որ ներկայացրել էի Նկարիչների Միությանն անդամագրվելու համար: Բարեբախտաբար, հանձնաժողովը այդ դեպքից մեկ շաբաթ առաջ հաստատել էր իմ անդամությունը: Հրդեհից հիսուն գեղանկարչական աշխատանքներ և հինգ թատերական ներկայացման էսքիզներ այրվեցին: Հետագայում հիշողությամբ շատերը վերականգնեցի: Իմ առաջին ձևավորումը եղել է Սալիճսկու «Թմբկահարուհին», որի ռեժիսորը Վ. Ածեմյանն էր: Վ. Ածեմյանի «Փաունսը, Կիկոսը և ուրիշներ» բեմադրության համար 1966-ին ստացանք Հ. Թումանյանի անվան առաջին կարգի պատվոգիր:

- Ունեցե՞լ եք ցուցահանդեսներ, և ի՞նչ արձագանք են ունեցել դրանք:

- Հանրապետական և համամիութենական ցուցահանդեսներին մասնակցել եմ ստեղծագործական աշխատանքներով, հատկապես՝ հաստոցային գեղանկարչությամբ: Ունեմ թեմատիկ կոմպոզիցիաներ, դիմանկարներ, նատյուրմորտներ, պեյզաժներ, բայց հիմնականում շեշտը դրել եմ դիմանկարի վրա, հատկապես՝ ոչ իրական կերպարների, դրանք իմ սրտից բխած, նախասիրած, տարբեր տրամադրությունների արգասիք են և ոչ թե կոնկրետ անձիք: Ցուցահանդեսներ եմ ունեցել Կ.Պոլսում, էլ Քուվեյթում, Բեյրութում: Արձագանքները շատ դրական են եղել. կան ձայնագրություններ, թերթերում հոդվածներ: 1990-ականների ճգնաժամային տարիներին արտերկրյա այդ ցուցահանդեսների հիմնական նպատակը մեր գոյությունը պահպանելն էր:

- Այսօր արվեստասեր հասարակության շրջանում կա՞ ստեղծագործական մի թեմա ո՞ր մեծ պահանջարկ ունի:

- Այո, կա: Դա հայրենասիրության թեման է. մի աշխատանք ունեի «Թոնրատուն» էր կոչվում, հարսը խմոր էր հունցում, ծերունին էլ նստած էր...: Այդ նկարը Կ. Պոլսում կայացած ցուցահանդեսի հենց առաջին օրն առանց սակարկության վաճառվեց: Դրանից հետո շատ սփյուռքահայեր պատվիրեցին նույն թեման, ավելի քան տասներկու օրինակ արեցի: Թեման շատ հարազատ էր նրանց. այդ նկարում գտել էին իրենց կորցրած հայրենիքը, հարազատ օջախը, իրենց թոնրատունը, որը թուրքերը խլել էին: Այդ կարոտը նրանց խեղդում էր...: Մի ժամանակ մեծ պահանջարկ կար Անիի եկեղեցիների հանդեպ: 1965թ. եղա Անիում, պատրաստվում էի այնտեղ նկարել, սակայն ավերված Անին մի անասելի տխրություն իջեցրեց վրաս և ոչինչ նկարել չկարողացա...: Վերադարձա տուն, հոգիս ալեկոծող այդ ապրումներից

ազատվելու համար, օրեր անց սկսեցի նկարել. յոթ կտոր նկարեցի:

- Իսկ հիմա պատրաստվո՞ւմ եք ցուցահանդեսներ կազմակերպել:

- Ես այնքան աշխատանքներ ունեմ, որ կարող եմ ամեն օր ցուցահանդես կազմակերպել: Ավելի քան չորս-հինգ հազար նկարի հեղինակ եմ, այսօր հազարից ավելի նկար ունեմ գյուղի արվեստանոցում: Սակայն, ամեն ինչ կախված է միջոցներից: Այսօր փող ունեցողը ոսկին ու ադամանդը գերադասում է նկարից կամ գեղարվեստական որևէ աշխատանքից:

- Որո՞նք են Ձեր նկարների ստեղծման ներշնչանքի աղբյուրը:

- Բնաշխարհն ու ընկերներս: Դիմիտրով գյուղում ունեմ տուն, փոքրիկ այգի, լողավազան, մաքուր օդ, խաղողի գինի... ահա և ներշնչանքի աղբյուր: Ինձ շատ է օգնել պոեզիան, գրականությունը: Ես շատ եմ սիրում մեր գրականության մեծերին՝ Նարեկացուն, Քուչակին, Վարուժանին, Սիամանթոյին, Իսահակյանին, Սևակին: Առանց նրանց անհնար է ապրել: Նկարել եմ Վարուժանի «Հարճը» :

- Հայաստանի Հանրապետության անկախությունը ի՞նչ տվեց Ձեզ և հայ մշակույթին ընդհանրապես:

- Հայաստանի Հանրապետության անկախությունը ժողովրդին տվեց ազատություն, բայց արվեստագետին որոշակի դժվարությունների առաջ կանգնեցրեց: ՀՀ-ում արվեստագետը զգում էր, որ տեր ունի. նկարիչների միությունն էր կողքին, պետության հովանու ներքո էր ստեղծագործում: Հիմա արվեստագետը մի տեսակ անտերության է մատնված, այսինքն՝ ինքդ հոգա քո և քո աշխատանքների մասին և պետությունից ոչինչ մի ակնկալի, քանզի ոչ բյուջե կա, ոչ էլ գումար: Դրա համար էլ շատ տաղանդավոր նկարիչներ արվեստանոցներից վանվեցին, փողոց ու վերնիսաժ լցվեցին, մի մասն էլ հիասթափվեց, էլ չի նկարում: Բարեբախտաբար, այն շնորհալի նկարիչները, ովքեր ներքին կամք և ասելիք ունեին, դիմացան, շարունակեցին նկարել: «Դևը», որ նստած է քո մեջ և անհանգստացնում է քեզ, չես կարող հրաժարվել դրանից, պիտի նկարես, բավարարես նրա պահանջները: Ով ասելիք ուներ, շարունակեց ստեղծագործել:

- Ձեր գնահատմամբ ինչպիսի՞ն է հայ կերպարվեստն այսօր:

- Դժվարանում եմ ասել: Ոմանք նկարում են օրվա հացը վաստակելու համար, ոմանք էլ հիասթափվել են, չեն նկարում: Ոմանք էլ, անկախ ամեն ինչից, շարունակում են նկարել: Այսպիսին է վիճակը արվեստի բոլոր բնագավառներում: Փառք Աստծո, շնորհիվ իմ որդու, դստեր և թոռների, ես ապահովված եմ և կարողանում եմ ստեղծագործել:

Ցավով եմ նկատում, թե Գյումրիից որքան տաղանդավոր արվեստագետներ, քաղաքացիներ են հեռացել, սակայն հավատում եմ քաղաքի վերածնունդին. անթիվ տաղանդավոր մարդկանց շտեմարան Գյումրին շարունակելու է տաղանդներ ծնել...

ԴԻԱՆԱ ՄԱԿԻՆՅԱՆ

Արվեստագետի գեղանկարները տես՝ նաև գունավոր էջում:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԳՅՈՒԼԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՆԱԵՎ ԳՅՈՒՆԴՈՒՋ ԱՔԹԱՆԸ

Նա առաջարկում է Հայաստանի փոխարեն դատարան կանչել Ֆրանսիային եւ ԱՄՆ-ին

«Միլիեթը» նշում է, որ ցեղասպանության պնդումները միջազգային իրավարարության հանձնելու գաղափարի հեղինակը հենց Աքթանն է: Նա, ըստ թուրքական թերթի, իբրեւ «շատ համարձակ քայլ» բարձր է գնահատել Գյուլի հայտարարությունը եւ ասել է. «Հայերի պնդումների առնչությամբ դատարան դիմելու գաղափարը ես առաջ եմ քաշել դեռեւս 2000-ին ԱՄՆ Կոնգրեսում կազմակերպված միջոցառմանը: Բանը բանից անցել է: Ասելով, թե 1948-ին ՄԱԿ-ի ընդունած Ցեղասպանության կոնվենցիան հետադարձ ուժ չունի, հետեւաբար «անհնար է 1915թ. իրադարձությունները իբրեւ ցեղասպանություն բնութագրելը», չենք կարող ձերբազատվել այս հարցից: Դրանով ոչ միայն չենք ապացուցում մեր իրավացիությունը, այլեւ դյուրացնում ենք հայերի գործը: Ընդհակառակը, պետք է մարտահրավեր նետել եւ հայտարարել, որ դիմելու ենք միջազգային ատյաններին՝ պարզելու համար. համապատասխանո՞ւմ են արդյոք 1915թ. իրադարձությունները ցեղասպանությանը բնորոշ հատկանիշներին: Դա լավագույնս կանի Հաագայի մշտական իրավարար դատարանը: Քանի որ վեճը չենք կարող միայնակ հանձնել միջազգային իրավարարության, ուստի դատարան կհրավիրվի նաեւ Հայաստանը: Մեր իրավացիությունն աշխարհին ցույց տալու համար Հայաստանի փոխարեն պետք է դատարան կանչել Ֆրանսիային, միաժամանակ նախազգուշացնել ԱՄՆ-ին, որ նրան էլ կկանչենք, եթե Կոնգրեսը հայկական բանաձեւ ընդունի»:

Աքթանը նշելով, թե դատարանը քննության միջոցով կփորձի պարզել հայերի բնաջնջման դիտավորության հարցը, շարունակել է. «Մենք ձեռքի տակ ունենք շուրջ 1 մլն փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ դիտավորություն չի եղել: Թեեւ դատական գործընթացը կարող է տեւել 5-10 տարի, սակայն դա հենց այսօրվանից բարոյական առումով կապահովի մեր առավելությունը: Եթե դատարան կանչվելու դեպքում Հայաստանը կամ Ֆրանսիան հրաժարվեն ներկայանալ, ապա խայտառակ կլինեն աշխարհով մեկ: Իսկ ներկայանալու դեպքում կբացահայտվեն նրանց ստերը: Այսպիսով նրանք այլեւս գլխացավանք չեն պատճառի Թուրքիային»:

Ցեղասպանության ,հայկական պնդումներին հանձնումը միջազգային իրավարարությանն, ըստ Աքթանի, ենթադրում է.

1. ստեղծել հանձնաժողով՝ ստուգելու համար Թուրքիայի, Պոլսո հայոց պատրիարքարանի, Բոստոնում ՀՅԴ-ի, Հայաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Անգլիայի եւ Ֆրանսիայի արխիվներում պահպանվող փաստաթղթերի իսկությունը,
2. կատարել վիճակագրական աշխատանքներ՝ ուսումնասիրելու համար բնակչության էթնիկ կազմի փոփոխությունները,
3. ուսումնասիրել ռազմական տեղաշարժերն ու հայկական զինյալ խմբավորումների գործունեությունը,
4. ճշտել տեղահանության ընթացքում կատարված մահացության դեպքերի պատճառները,
5. ուսումնասիրել հիվանդանոցների տվյալ ժամանակահատվածի գրանցամատյանները,
6. դատաբժշկական եզրակացությամբ պարզել ընդհանուր գերեզմաններում թաղվածների ազգային պատկանելությունը:

Հ. ՉԱՔՐՅԱՆ, «Ազգ»,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋԱՐՄԱՆԱՀՐԱԾ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ Է ՄԻԱՅՆ ԲՈՒՍԱԲԱՆՆԵՐԻՆ

Հայկական բնաշխարհի հարուստ բուսականության հազվագյուտ նմուշների պահպանման Երևանի Բուսաբանական այգին ստեղծվել է 1928-ին՝ Հրազդանի ձորում: 1930-ականներին այն տեղափոխվել է իր ներկայիս վայրը: Բուսաբանական այգին բաժանված է 4 մասի, որոնցից յուրաքանչյուրում զետեղված են Կովկասի, Հյուսիսային Ամերիկայի, Արևելյան Ասիայի և Եվրոպայի ծառերն ու թփերը: «Այդ 4 բաժանմունքներիի հավաքածուների մեջ մտնում են 1600 տեսակ ծառեր ու թփեր, որոնք ստեղծված օրվանից մինչ օրս գոյություն ունեն և խնամքով պահպանվում են»,- նշում է Բուսաբանական այգու փոխ-տնօրեն, կենսաբանական գիտությունների թեկնածու Գագիկ Մովսիսյանը: Չնայած՝ հավաքածուի նմուշները մինչև օրս պահպանվել են, բայց 90-ականների ծանր տարիներն իրենց հետքը թողեցին այգու վրա. ոչնչացավ այգու ջերմատնային տնտեսության 90%-ը՝ մոտ 1200 տեսակ արևելադարձային բույս: Մեծ ջանքերի շնորհիվ կարողացան վերականգնել այդ բույսերի 300 տեսակը միայն, գարնանը դրանք դուրս են հանվում, իսկ ձմռանը՝ տեղավորվում տարբեր սենյակներում, որոնք մինչ այս տարի ջեռուցվում էին էլեկտրական սալիկների միջոցով:

«Բյուջետային ֆինանսավորումը մեզ չի բավականացնում: Մեր վիճակը բավական ծանր է: Տարեցտարի ամեն ինչ թանկանում է, իսկ բյուջետային գումարները մնում են անփոփոխ: Նախկինում 30 իրավապահ հերթափոխով հսկում էին այգու տարածքը, իսկ այսօր ֆինանսական սղության պատճառով պահակային տնտեսությունը չի գործում: Տարեկան մոտ 18 միլիոն դրամ է մեզ անհրաժեշտ պահակային տնտեսության համար,- ասում է Գ. Մովսիսյանը: Այսօր այդ հսկողությունն իրականացնում են երեք պահակներ, սակայն նրանք չեն կարողանում ամբողջությամբ վերահսկել 80 հա տարածք ունեցող այգին: Եվ այգում ալանթալան է լինում. «անցանկալի հյուրեր» են մտնում շենքեր, խառնում տարածքը, կոտրում ջերմոցների ապակիները, որոնք առանց այդ էլ անմխիթար վիճակում են, չեն ջեռուցվում, ոռոգման ֆիլտրները շարքից դուրս են եկել, ինչի պատճառով բազում դեկորատիվ բույսեր, որոնք գիտական տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում, ոչնչացել են: Այս ամենին գումարվում է նաև այգու աշխատակազմի օրեցօր կրճատումը: «90-ականներին ֆինանսների սղության պատճառով կրճատվել է այգու գիտական և բանվորական կազմը: Առաջիկայում պետք է կրճատումներ լինեն և, իբր, պիտի այգու ֆինանսավորումը բարձրացնեն: Փաստորեն, այդ ֆինանսավորումը լինելու է ի վնաս մեզ: Մեր ինստիտուտում 6-7 բաժին ունենք, յուրաքանչյուրում 2-3 աշխատող է մնացել, կրճատման դեպքում, էլ մարդ չի մնա»,- ցավով նշում է այգու փոխ-տնօրենը: Եթե պետության կողմից անհրաժեշտ ֆինանսավորում չլինի, ապա գիտական որոշ ուղղություններ կարող են ընդհանրապես վերանալ, քանի որ երիտասարդները ցածր աշխատավարձի պատճառով գիտությամբ չեն զբաղվում: «Պետությունը պետք է մտածի գիտության մասին և մեծացնի հատկացումները, որպեսզի երիտասարդ ուժերը ներքաշվեն գիտության մեջ»,-ասում է Գ. Մովսիսյանը:

Բուսաբանական այգու տնօրինությունն իր խնդիրների մասին բազմիցս բարձրաձայնել է, բայց ապարդյուն: Միայն այս տարի այգին ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի կողմից որոշակի ֆինանսական օժանդակություն է ստացել: Ըստ Գ. Մովսիսյանի՝ կային մարդիկ, ովքեր նախատեսել էին այգու տարածքում ինչ-որ շինություններ կառուցել: Սակայն այս նախաձեռնությանը դեմ հանդես եկավ ԱԺ պատգամավոր Մանուկ Գասպարյանը, հարց բարձրացրեց խորհրդարանում և, արդյունքում, ՀՀ նախագահի հրամանով այդ գործընթացը կասեցվեց, կառավարությունն էլ օժանդակություն ցուցաբերեց այգուն: Այդ գումարով կանաչապատվել են այգու այն հատվածները, որտեղ նախատեսված էր շինություններ կառուցել, ջեռուցվել են այգուն պատկանող այն շենքերը, որոնք 15 տարի անընդմեջ էլեկտրական սալիկների միջոցով էին տաքացվել, վերանորոգվում են ոռոգման գծերը:

Բուսաբանական այգու տնօրեն Ժիրայր Վարդանյանը մեծ աշխատանքներ է տանում այգին վերականգնելու ուղղությամբ:

Բուսաբանական այգում երկար տարիներ աշխատում է մի անձնվեր կին: Նրա շնորհիվ բացահայտվել են բազում ծաղիկների ու բույսերի տեսակներ: Բազում բույսեր նկարագրվել են նրա անունով: Նա կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայկական բուսաբանական ընկերության նախագահ էլիաևորա Յուլակի Գաբրիելյանն է: Ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը և ակադեմիկոս բուսաբան Արմեն Թախտաջյանի գլխավորությամբ խորամուխ է եղել բույսերի զարմանահրաշ աշխարհի գաղտնիքների բացահայտմանը: է. Գաբրիելյանը Բուսաբանական այգու «Բարձր բույսերի կարգաբանության և աշխարհագրության» բաժնի վարիչն է: Բաժինն ուսումնասիրում է Հայաստանում աճող բույսերի, ծառերի ու թփերի կազմը, հայտնաբերում նոր տեսակներ, բացատրում դրանց առաջացման պատճառները և այլն: Նման աշխատանքների համար շատ նյութ կա, քանի որ Հայաստանը հարուստ բուսականություն ունի: «Շատ հարուստ է մեր բուսաշխարհը. ամբողջ Կովկասում 6.000 տեսակ բույս է աճում, որից 3.500-ը՝ գողտրիկ Հայաստանում: Դա պայմանավորված է Հայաստանի աշխարհագրական դիրքով: Մեր երկիրը փոքր Ասիայից, Իրանից և մեծ Կովկասից եկող բույսերի հանդիպման վայրն է»,- ասում է է. Գաբրիելյանը: Նախկինում բարձր կլիմայի պայմաններում Կովկասյան լեռները պատված են եղել սաղարթախիտ անտառներով: Ժամանակի ընթացքում այդ անտառներն անհետացել են, և լեռները թաքստոց են ծառայել անտառների շվաքում աճող բույսերի համար: Նրանք, հարմարվելով տեղանքին, մնացել են լեռների փոքր կիրճերում, ապա հանդիպելով օտար բույսերի, առաջացրել են նոր տեսակներ: «Հայաստանում մենք կարող ենք անընդհատ հանդիպել գիտության տեսակետից ինչ-որ նորությունների, նոր տեսակների: Եվ այդ հարցերով մենք ենք զբաղվում»,- նշում է է. Գաբրիելյանը: Նրա ղեկավարած բաժինը միակն է մեր տարածաշրջանում՝ չհաշված Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի համանման բաժինները: Իր ղեկավարած բաժինը չի դադարեցրել աշխատանքները անգամ 90-ականների ծանր տարիներին: էլիաևորա Գաբրիելյանը նշում է, որ իրենց աշխատանքի արդյունավետությունը կապված է բուսաբան Ա. Թախտաջյանի անվան հետ, ով ժամանակին Բուսաբանության ինստիտուտի և այգու տնօրենն էր: Նրա շնորհիվ է, որ Կովկասի լավագույն հերբարիումներից մեկը Հայաստանում է: Հերբարիումը չորացած բույսերի հավաքատեղին է: Բուսաբանական այգու հերբարիումը 150-ամյա պատմություն ունեցող կես միլիոն չորացրած բույս ունի, որոնց մեծ հայաս-

տանյան ծագում ունեն: Բուսաբան Գաբրիելյանը մեծապես նպաստել է հերբարիումի հավաքածուի ընդլայնմանը. 50-ից ավելի երկրներ այցելած բուսաբանը միշտ իր հետ մի նոր բույս է բերել: Խորհրդային տարիներին հերբարիումը համագործակցել է արտասահմանյան 80 երկրների հերբարիումների հետ: Նրանցից ստացել են բույսերի կրկնօրինակներ և ինքն էլ իր հերթին նրանց ուղարկել է հայկական բույսերի նմուշները: Սակայն մեր օրերում նման արդյունավետ գործունեությունն անհնար է ֆինանսական միջոցների սղության պատճառով: Ընդհանրապես, ամբողջ աշխարհում հերբարիումները պահվում են գետնի տակ՝ միապաղաղ ջերմաստիճանի, որոշակի քանակությամբ խոնավության և այլ գործոնների առկայության պայմաններում: Սակայն մեր հերբարիումը ենթարկվում է ջերմաստիճանային կտրուկ տատանումների. ձմռանը հերբարիումում լինում է մինչև -20C, իսկ ամռանը՝ մինչև +40C: «Անկանոն ջերմաստիճանի պատճառով մենք շատ բույսեր՝ մեծ հարստություն կորցրեցինք,- ասում է Է. Գաբրիելյանը: Մեր այցելության ժամանակ նա իր աշխատասենյակում, թղթերով շրջապատված, վերջացնում էր «Հայաստանի Ֆլորա» գրքի 11-րդ հատորի աշխատանքները: Այս գրքի հատորները տպագրում է Գերմանիայի «Keolts Scientifik books» հրատարակչությունը: Այս հատորներում Հայաստանի բույսերն ու բուսաշխարհը նկարագրողներից մեկն էլ էլիանորա Գաբրիելյանն է: Նա այս տարի բազում նոր տեսակներ է գտել և ներկայացրել: Իսկ վերջին՝ 11-րդ հատորը հետաքրքիր է լինելու նրանով, որ ներկայացնելու է Հայաստանի հացազգիների ընտանիքը: «Բույսերը, ինչպես մարդիկ, ունեն ցեղ, ընտանիք: Օրինակ՝ 11 տեսակ թրաշուշան կա, նրանցից երկուսը ես եմ գտել: Ամենափոքրը անվանել եմ Հայաստանիկուս, այսինքն, միայն Հայաստանի բույս է: 16 տեսակ վայրի հիրիկ ունենք, նրանցից մեկի անունը էլեգանտիսիմա է, որը լատիներեն նշանակում է ամենաէլեգանտը, ամենանրբագեղը: Ահա այս կակաչի տեսակը ես եմ նկարագրել (ցույց է տալիս գրքում- Վ. Բ.): Շատ հազվագյուտ է լինում, որ կակաչը հոտ ունենա, սա հոտ ունի: Աճում է միայն մեզ մոտ՝ Մեղրիում և Արցախում»,- այսպես իր սիրելի ծաղիկներն է թվում տիկին էլիանորան: Նա ցույց տվեց նաև իր լուսանկարած երփներանգ ծաղիկների նկարները, որոնք աչք են շոյում իրենց հմայիչ գույներով: Սակայն այս ծաղիկները արժանանում են դժբախտ կյանքի. նրանց պոկում են, տրորում կամ կոտրում: Ամենամեծ վնասը հասավ այն ժամանակ, երբ հատեցին անտառները: Անտառը ջրահավաք, ջրապահպան դեր ունի, երբ այն վերանում է, ապա անհետանում է նաև այն ողջ բուսականությունը, որը թաքնված է նրա՝ անտառի ներքո, և վերածվում է անապատի: Ստացվում է, որ մենք մեր ձեռքով փչացնում ենք մեր երկրի հարուստ բուսաշխարհը:

Սորբոս էլիանորա

Հոտավետ վարդ կակաչ

Կուլտուրական բույսերի ցեղակիցների մասնագետ է. Գաբրիելյանը հայտնի բուսաբան Դանիել Զոհարու հետ համատեղ հրատարակել է նաև «Ֆլորա մեդիտերանեա» (Միջերկրական ծով) ամսագրում հրատարակել են աշխատություն նվիրված Հայաստանի և Նախիջևանի կուլտուրական բույսերի վայրի ցեղակիցներին, որոնց դերը շատ կարևոր է մշակովի բույսերի նոր սորտեր ստանալու համար, որտեղ ներկայացված են Հայաստանի և Նախիջևանի ուտելի բույսերը՝ ցորեն, գարի, աշորա, ոսպ, սիսեռ, ոլոռ և տարբեր համեմունքներ: Ներկայացված են նաև տիկին էլիանորայի կողմից կազմված մոտ 100 քարտեզ, ըստ վայրի բույսերի աշխարհագրական տարածման: Քարտեզների թիվը խոսում է մեր բուսականության հարստության մասին. աշխարհում գոյություն ունի վայրի ցորենի 4 տեսակ, որոնցից 3-ը աճում են Հայաստանում, իսկ մեկը՝ Վրաստանում և Իսրայելում: Տիկին էլիանորայի հավաստմամբ, մեր երկիրը հարուստ է վայրի բուսականությամբ, որից առաջանում է մշակովի բուսականությունը: Գիտնականները կարծում են, որ մի շարք մշակովի բույսեր իրենց ընտելացման քայլերը մեր երկրից՝ Հայկական բնաշխարհից են կատարել: Էլիանորա Գաբրիելյանը համոզված է, որ մեր երկրում աճող բոլոր ուտելի բույսերն ամենահամեղն են, լինի դա միրգ, բանջարեղեն, համեմունք, թե հացահատկեղեն: «Մեր համեմունքները միայն մեզ մոտ են այդպես համեղ: Օրինակ՝ համեմը շատ տարածված է արևադարձային երկրներում: Օտար երկրում ես միշտ առաջինը շուկա էի գնում, որ տեսնեմ, թե ինչ կա չկա: Միշտ համեմ էի գնում, բայց ոչ մի տեղ այսպես համեղ և հոտավետ համեմ չկար: Կամ մեր վարունգը, այսպես համով վարունգ աշխարհում ոչ մի տեղ չկա: Կուլտուրական ծիրան ամեն տեղ աճում է, բայց այսպես քաղցր, հյութալի և բուրումնավետ ծիրան՝ միայն մեզ մոտ: Ծիրանը մեզ մոտ շատ հնուց է եղել: Իզուր չէ, որ Լինեյը ծիրանի ցեղանունը կոչել է Արմենյակ, որը Հայաստանում է աճում»,- ասում է տիկին էլիանորան և մեր բույսերի համեղության գաղտնիքը պայմանավորում մեր երկրին ներհատուկ կլիմայով և աշխարհագրական դիրքով:

Էլիանորա Գաբրիելյանը «Հայաստանի Ֆլորան, բուսականությունը և ռեսուրսները» ամսագրի խմբագիրն է: Ամսագրում զետեղված բուսաբանության տարբեր ոլորտների նյութերը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով են: «Միջազգային մակարդակի ամսագիր է: Լոնդոնի «Que records» ամսագիրը միշտ վկայակոչում է մեր ամսագիրը:

Չնայած դժվարին պայմաններին՝ նա շարունակում է իր նվիրական գործը և նույնիսկ ափսոսում, որ երիտասարդները չեն հետաքրքրվում գիտությամբ: «Երիտասարդները չեն գալիս: Սարսափելի է, որ հայկական բնաշխարհի գեղեցկությունը չի հետաքրքրում մեր երիտասարդներին: Չէ որ բուսաբաններն անընդհատ շփվում են բնության և գեղեցիկի հետ, ինչը հրաշալի է: Սակայն, այսօր երիտասարդներին դա չի հետաքրքրում: Մեզանից հետո, չգիտենք, թե ինչ կլինի տասնյակ տարիների աշխատանքի՝ այս ամենի հետ: Գիտեք՝ Արմեն Թախտաջյանի հետ համատեղ ի՞նչ գանձեր ենք հավաքել (նաև գրականության տեսակետից): Մենք անգամ 17-18-րդ դդ. գրականությունն ունենք, որոնց միջոցով կարող ենք հանգիստ աշխատել: Բայց երիտասարդներ չեն գալիս»,- ցավում է բուսաբանը: Նրա այս անհանգստությունը փարատում է այն փաստը, որ ավագ դուստրը՝ Մարիամ Աղաբաբյանը, շարունակել է իր ուղին՝ դառնալով բուսաբան: Մյուս սփոփանքն էլ այն է, որ եթե ոչ հայրենիքում, ապա գոնե նրանից դուրս գնահատում են իր աշխատանքը, ինչի վառ ապացույցն այն է, որ Իսպանիայի գիտնականները նկարագրեցին Չինաստանում աճող արոսենի և անվանեցին էլիանորա Գաբրիելյանի անունով՝ Սորբոս էլիանորա: «Ես շատ շոյված էի, որ ինչ-որ մեկը, ինչ-որ տեղ գնահատել է իմ գործը»,- գոհացավ բուսաբանը:

ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԻՎԱՅՐ ՇՐՋՈՒՄՆ ՈՒ ԽԵՂԱԲԵԿՈՒՄԸ ՄԵՐ ՕՐԵՐԻ «ՊՈԵԶԻԱՅՈՒՄ»

Որոշ իմաստներով լավ եղավ, որ գրաքննությունը վերացվեց, և խոսքի ազատությունը հոլովեցին: Բայց դա չի նշանակում ո՛չ հայհոյախոսություն, ո՛չ զազրախոսություն, ո՛չ էլ անմտություն: Ինչո՞ւ է բանաստեղծը գրում.

«Մարգարիտները մեր՝ տեր Աստված, բաժին են հասել կուշտ խոզերին, մենք կարկամել ենք՝ ապավինած անհաղորդներին ու բոզերին»: (Ռ. Սարդարյան, «Կյանք հավելյալ», էջ 96):

Անմահ բանաստեղծի՝ Եղիշե Չարենցի հետ ի՞նչ կապ ու առնչություն ունի անմտության բոլոր սահմաններն անցնող հետևյալ քառատողը. «Իջավ խոջան, իջավ մոլլան, իջավ ռաբբին, հետո էլ ալլահն իջավ գնացքների թամբից» (Ռ. Սարդարյան, «Կյանք հավելյալ»):

Վաղամեռիկ, հրաշք պոետի՝ Դանիել Վարուժանի հետ ինչո՞վ է առնչվում նրան նվիրված հետևյալ գարշահոտ, անմիտ ոտանավորը. «Ժամանակը ծիու բաց երախ է, փոխակերպման այս քոհուբոհում, երկու մարմին բևեռվել են բեղմնավորման կայծկլտուն սպասումով» (էդ. Միլիտոնյան, «Ընտանեկան համերգ», էջ 34):

Ավելի սաստիկ անմտություն կարելի՞ է պատկերացնել, քան նույն հեղինակի «Անի» վերնագրված ոտանավորի ներքոբերյալ տողերը. «Պառկել է կմախքը անտեր, պարզել աշխարհին ոսկե ժանիք, ծնոտը կառչել լեռներից»:

Հայերեն չիմանալ, ճաշակ ու տրամաբանությունից զուրկ լինելով, չի կարելի պատճառաբանել հարստագույն մեր բառապաշարին, հայ գրականության վաստակաշատ գրողների ժառանգությունից հրաժարվելով, «երկերում» տեղ տալ հետևյալ անմիտ մակդիրներին՝ «չոր անձրև», «աղավնաձև անձրև», «ճաքճքած արեգակներ», «կավաշեն աշուն», «գիշերվա պատանի արեգակ», «վիշապ արև», «հալածական մեղր», «բացպորտ քամի», «բացկոնք սիրամարգ» և այլն: (Հ. Հովեյան, «Թափառական ամառներ», «Ծես»):

Կարելի՞ է խոսքի ազատությունը այս աստիճան խաթարել. «Պատի տակ նստել է պոեզիան՝ թափառական շան կարգավիճակով: Բանաստեղծներն էլ, ճիշտն ասած, իրենց վայել ուրիշ գործ են գտել շուկայական ու սեռական հարաբերությունների արանքում: Բայց, ավաղ, դեռ չկա «բոզ» անվամբ համատեղ սահմանափակ իրավունքով ձեռնարկություն: Վերջերս քաղաքապետարանը կարգադրեց կրակել թափառական շների վրա, պատահական գնդակից կզոհվի պոեզիան» (էդ. Միլիտոնյան, «Նոր թվարկություն», էջ 5-7):

Գրիչը հազիվ ձեռքում պահող մեկ ուրիշն էլ պոեզիայի մասին գրել է. «Բա ոնց ենք քրքրում աղբամանները, ի՜նչ աղբամաններ, իսկը պոեզիա» (Ն. Ավետյան, «Փնթի տողեր», էջ 37):

Պոեզիան քաղաքապետարանի արձակած պատահական գնդակից չի մեռնի, կմեռնի ձեզ նման «պոետներ»ի հղփացած, գարշելի վերաբերմունքից: Պոեզիան էլ աղբամանների են վերածում ձեզ նման դուրսպրծուկները:

ՍԻՐՈՒՀ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ-ԹԱՓԱԼՑՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՄԻ ՔԻՉ ՊՂՊԵՂ ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ՄԵՋ

ՉԱՓԻ ԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՆԳԱՄ ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Սանկտ-պետերբուրգցի հոգեբան էլ Թաքը ասում է. «Երեխան միակ անձնավորությունն է կյանքում, ում համար ինքնազոհողության գնալը արդարացված է: Բայց մինչ այդ զոհողությունը կատարելը հարցրեք՝ արդյո՞ք նա դրա կարիքն ունի»: Եվ իսկապես, հաճախ նման զոհաբերությունները թունավորում են ողջ ընտանիքի անդամների կյանքը: Օրինակ, ընտանիքը միայն «հանուն երեխայի» պահպանող կինը, վաղ թե ուշ արտահայտվելով այդ մասին, արժանանում է բոլորի բացահայտ կամ ոչ բացահայտ քննադատությանը: Ամուսինը իրեն խաբված է զգում, չսիրված ու անգամ... օգտագործված: Երեխաները, այսպես, թե այնպես, մեղքի զգացում են ապրում և մի օր էլ չարացած կարող են ասել. «Չանեիր...»: Նման մեղքի զգացումը բոլորովին էլ չի նպաստում սիրված լինելու զգացողության ձևավորմանը: Անկախ տարիքից այն քայքայիչ ազդեցություն կարող է թողնել երեխայի վրա: Նման զավակները հաճախ համարում են, որ իրավունք չունեն երջանիկ լինելու: Ծայրահեղ դեպքերում, հատկապես արու զավակների մոտ, համոզմունք կամ ներքին չգիտակցված դիրքորոշում է առաջացնում (ի դեպ, վերջինս ավելի վտանգավոր է, քանի որ դրա առկայությունը չի ընդունվում, ինչն էլ անհնար է դարձնում դրա վերացման ուղղությամբ պայքարի արդյունավետությունը), որ նրանք չպետք է երջանկացնեն մի այլ կնոջ:

Մենք հաճախ հպարտությամբ նշում ենք, որ հայ ընտանիքներում զգացմունքների արտահայտումը ամուսինների միջև բացահայտ չէ, քանի որ երիտասարդները, հարգելով մեծահասակներին, նրանցից օրինակ վերցնելով, ամոթից և այլ դրական հատկություններից ելնելով, երբեք, ասենք միմյանց չեն համբուրի, գրկի և քնքշանքի այլ արտահայտություններ ի ցույց չեն դնի այլոց ներկայությամբ: Մոտ երեք հարյուր ընտանիքների հետ 6 տարվա ընթացքում տարվող աշխատանքները այս երևույթի արմատները բացահայտել են, ցավոք նաև այլ բանում: Նախ՝ նման մոտեցումը հիմնականում պահպանվում է այն նորաստեղծ ընտանիքներում, որտեղ ծնողական զույգը (խոսքն ավագ սերնդի մասին է) միմյանց նկատմամբ կամ երբեք չի ունեցել, կամ էլ վաղուց կորցրել է ջերմ զգացմունքները: Անգամ, եթե մինչ ամուսնությունը քնքուշ զգացմունքները իրենց արտահայտությունն են գտել ջերմ խոսքերի, նվերների, հաճոյախոսությունների, ինչո՞ւ ոչ՝ գգվանքների տեսքով, ամուսնացած տղան կարծես իրեն անկարող է համարում պահպանել նույն վերաբերմունքը: Ավելին՝ նա ձևական կարող է կոշտ ու կոպիտ վարվել իր կնոջ հետ այլոց ներկայությամբ:

Իհարկե, վերջին պնդումն ամենևին չի նշանակում, որ տղայի ծնողներն անպայմանորեն խրախուսում են նման վարքագիծը: Այն կարող է ձևավորվել զանազան կարծրատիպերի ներգործության հետևանքով, որոնց արտահայտման վկան է եղել թե ընտանիքում, թե շրջապատում:

Ավելի մանրամասն կանգ առնենք նորաստեղծ և ավագ ծնողական ընտանիքի միջև հարաբերությունների կայացման հարցում մայրական սիրո ազդեցության վրա:

Մայրական սերը, ունենալով արյունակցական և համատեղ կեցության երկարատև կապ երեխայի հետ, շատ ուժգին է: Եվ հարսնացուին դժվար է

իր սիրով (հաճախ դեռ ոչ լիովին բացահայտված) հաղթահարել նման ուժգին մայրական սերը: Իրավիճակն ավելի է բարդանում ծնողների հետ համատեղ կեցության դեպքում: Ահա թե ինչու անհրաժեշտ է, որ երիտասարդները ամուսնական կյանքը սկսեն ծնողական ընտանիքից առանձին, հատկապես այն դեպքերում, երբ ծնողները վաղուց արդեն սառել են միմյանց նկատմամբ՝ չեն սիրում իրար, նրանց հարաբերությունները երջանիկ չեն: (*Եվ սա ամենևին էլ նոր ժամանակների, նորածևության արգասիք չէ. հիշեք աստվածաշնչյան «Սորա համար մարդը կթողնե իր մայրը և իր հայրը և կհարի իր կնոջը և մեկ մարմին կլինին» (Ծն. 2:24): Աստվածաշնչյան նույն հորդորն է բերում Խրիմյան Հայրիկը իր «Դրախտի ընտանիք» գրքում):* Այլապես, մայրական չափազանցված սիրո ներգործության տակ կարող է հեշտությամբ հանգչել ամուսնացած զույգի միջև եղած սերը: Այս պատճառով բազում ամուսնալուծություններ են տեղի ունենում:

Ինչո՞ւմն է բանը, և ինչպիսի՞ն է իրավիճակն արդի հայ ընտանիքներում (խոսքը մեծ ընտանիքների մասին է):

Ելնելով մայրական սիրուց և, անշուշտ, ամենաբարի մղումներից դրդված՝ մայրը սկսում է գիտակցաբար և անգիտակցաբար, տեղին ու անտեղին քննադատության արժանի արարքներ, համոզմունքներ, վարվելակերպ, ընդհուպ մինչև շարժուձև, դիմախաղ և այլ երևույթներ գտնել իր որդու սիրո առարկայի մեջ: Քննադատությունը, անկախ այն բանից, թե որքան է այն արդարացված ու հիմնավորված, քայքայիչ ազդեցություն է թողնում, հատկապես, եթե այն ամեն կերպ դարձնում են տղայի ուշադրության նյութ: Հարսը, որի զգացումը այսպես, թե այնպես իր ներուժով դեռևս զիջում է արյունակցական մայրական սիրո ուժգնությանը, հայտնվում է ծանր սթրեսային իրավիճակում: Ի դեպ, սթրեսի սանդղակով ամուսնությունը 3 տեղն է գրավում ամուսնու և այլ մտերիմների մահվանից հետո, քանի որ ենթադրում է մեծագույն ներքին ռեսուրսների գործադրման անհրաժեշտություն՝ նոր ապրելաոճի, նոր մարդկանց, սովորույթների հարմարվելու համար: Քննադատությունը, սթրեսը, սեփական նախաձեռնության իրականացման անհնարինությունը և, որպես հետևանք, դրանց ճնշումը կարող է քայքայիչ լինել: Եթե դրան գումարենք իրեն մշտապես պարտավորված ու ինչ-որ գործած-չգործած մեղքերի հետևանքով մեղավոր զգացող երիտասարդ տղամարդու զգացողությունը, և եթե այդ տղամարդը ինչ-որ կերպ՝ նյութապես, տնտեսապես (հուզականի մասին խոսելն ավելորդ է) կախվածության մեջ է ու դեռ համարում է, որ ինքն էլ պետք է ամրապնդի այդ քննադատություններն ու խրատները խոսքով կամ ուժով...: Անշուշտ, նման պայմաններում սիրո նվազեցումը դժվար հաղթահարելի երևույթ է:

Այս բարդությունները հասարակության մեջ երբեմն չափազանց տգեղ տեսք կարող են ստանալ.

Դեպքի *նկարագրություն.* *Երբ Արմինեն ամուսնանում էր, նա ընդամենը 2 ամիս էր ծանոթ Սարոյի հետ, չէր էլ կասկածում, թե ինչպիսի դժվարությունների է հանդիպելու: Թեև չի կարող ասել, թե սիրահարված էր, սակայն համարում էր նրան կայացած տղամարդ՝ նա ինքնուրույն էր, հաստատակամ, համենայն դեպս այդպես էր թվում: Հարսանյաց հանդես կամ նման այլ արարողակարգ չեղավ: Ինչպես ասում են՝ «սուս ու փուս» ամուսնացան: Ամուսնության հաջորդ օրը Սարոն նվեր էր պատրաստել Արմինեին: Երբ Սարոն փորձում էր օգնել Արմինեին հագնել նոր նվիրած կոշիկները, մայրը ներս մտնելով և նախատեց որդուն. «Հիմիկվանից երես ես տալիս, գլխիդ ես նստեցնում»: Ապշահար Արմինեն վազելով դուրս եկավ սենյակից, փակվեց լոգարանում և լաց եղավ: «Այդ օրվանից սկվեց մղձավանջը՝ երեկոյան Սարոն հարբած տուն վերադարձավ: Կռվեց մոր հետ: Մայրը մեկընդմեջ բղավում էր. «Ողջ կայնքս քեզ եմ տվել, քո համար եմ ասում, որ ինձ լսես, վաղը շնորհակալ կլինես, հլու հնազանդ կդառնա»:*

Արմինեն փորձեց անտեսել այդ դեպքը, առավել ևս, որ Սարոն համոզում էր, թե մոր ասածները միշտ «հալած յուղի» տեղ չի ընդունելու:

Սակայն... Ամեն օր Սարոյի մայրը, որը բացի այդ որդուց ուներ նաև վաղուց ամուսնացած երկու տղաներ, որոնք ապրում էին Հայաստանից դուրս, Արմինեի բոլոր արարքներից գոհ չէր: Հենց Սարոն տուն էր վերադառնում, խոհանոցի փակ դռան հետևից Արմինեն լսում էր. «Բա ճաշը էդպես են պատրաստում, բա լվացքը ոնց ա փռել, բա էս, բա են...»: Մի օր Արմինեն «սատկած շան պես» դանդաղաշարժ էր, մի օր «արագ-արագ գործ էր անում, գլխառադ անում թողնում»: «Քո հանգուցյալ հերդ մահս կտար, թե ես էդպես գործ անեի: Ողջ կյանքս քեզ եմ տվել, ուզում եմ երջանիկ լինես, քո համար եմ ասում, ես ի՞նչ այսօր կամ, վաղը էլ չեմ լինի» - մի օր լացելով, մի օր հեգնելով, մի օր էլ բարկացած ավելացնում էր հոգատար մայրը:

Թեև սկզբում Սարոն գալիս ու հանգստացնում էր լաց լինող Արմինեին, հետզհետե նա սկսեց կնոջից հեռանալ: Երեկոյան շատ ուշ էր վերադառնում, երբեմն հարբած և երկու կանանց էլ անտեսելով քնում էր: Մի օր բարկությունը թափում էր կնոջ վրա. «Հանգիստ գնա քնի, էսօր էլ եմ ծեծել»,- ասում մորը, որը ծիծաղելով իր սենյակն էր անցնում: Սակայն երբեմն մոր վրա էր հարձակվում այդ դեպքում Արմինեն մի կերպ փորձում էր հետ քաշել հարբած ամուսնուն:

Նման քաշքշուկների ընթացքում մի օր Արմինեն կորցրեց իրենց բալիկին, որը երեք ամսից լույս աշխարհ պետք է գար: Այդ ահավոր դեպքը կարծես սթափեցրեց բոլորին: Սակայն և եղավ Արմինեի համբերության վերջին կաթիլը: Նա լքեց ընտանիքը: Սիրո այն թույլ պաշարները, որ դեռ նոր պետք է ամրանային ամուսնական կյանքի ընթացքում մայրական սիրո չափազանցված, բայց և անառողջ արտահայտությունների հետևանքով սպառվեցին:

Հոգեբաններին և բժիշկներին հայտնի է «հոգեկան ինցեստ» հասկացությունը՝ այսպես կոչված հոգեբանական արյունապղծություն: Այս դեպքում մայրը օգտագործում է որդու նկատմամբ սերը, որպես տղամարդու նկատմամբ սիրո փոխարինիչ: Դա խոչընդոտում է որդու մոտ առնական բնութագրերի բացահայտմանը: Նա կամ մանկամիտ է դառնում. «կանացի տղամարդ», չի կարողանում հարմարվել կյանքում, նրան չի հաջողվում ընտանիք կազմել, կամ այն երջանիկ դարձնել: Կամ դառնում է ագրեսիվ, այդ թվում նաև նրան ջերմորեն սիրող մոր նկատմամբ, փորձելով ագրեսիայի, ալկոհոլի, թմրանյութերի միջոցով ինքնահաստատվել որպես տղամարդ:

ՆԱՐԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հոգեբան

ԱՐՄԵՆԻԶՄ ԵՎ ՀԱՅՔ

ԱՐՄԵՆԻԶՄԻ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ ԿԱՐԱՎԱՆԱՊԵՏԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՄԲ
Բ) ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ (1872 Կ. Պոլիս - 1954 Փարիզ)

«....բարոյապես մեռցնելու համար անտաղանդներն ու սնոտիները, գեղեցկութեանց մուրճ կը շարժուի արդարութեան հարուածներով....». Կոստան Զարեանին ուղղված Սիամանթոյի նամակից, գրված 1914 թ-ին ԺՆԵՒԻՑ: Տե՛ս, ավելի մանրամասն «Արեւմտահայ գրողների նամականի, Գրական ժառանգություն», գիրք 6-րդ, պրակ 1-ին, Երեւան, 1972, ԵՊՀ հրատ. էջ 298:

Ինչպես հստակ տեսանելի է, ըստ Չրաքեանի Չօպանեանը իր ժամանակի այն ՀԱՅ գրագետն է, մշակույթի այն կենտրոնական գործիչը, ում մեջ ՀԱՅԸ հնարավորություն է ունեցել գիտակցելու «ԻՆՔԶԻՆՔԸ», ուր այդօրինակ հոգեբնքացի հետեւանքը՝ ԱՐՄԵՆԻԶՄ-ը՝ որպես նպատակ ու ձգտում, ռեալ-իրական է՝ (մերօրյա դիտանկյուն) սոսկ այն դեպքում, երբ Չօպանեանի մեջ դրսեւորված ազգային ես-ը տեսնվել է ո՛չ այլոց մեջ (տվյալ դեպքում Չրաքեանի), այլ իր իսկ սեփական էությամբ:

Այս տեսակետից, երբ էմիլ Վերհարնը ասում է (որը հաստատում է Կ. Զարեանը), թե «Մենք ՀԱՅ ազգը ճանաչում ենք եւ սիրում Արշակ Չօպանեանով», ո՛չ միայն եվրոպացի հռչակավոր գրագետը չի չափազանցնում, այլեւ, ինչպես տեսանք, առաջին հերթին, Տիրան ՉՐԱՔԵԱՆԸ:[5]

Այս տեսակետից՝ անսխալականության եւ ճշգրտության մտածմամբ, Արմենիզմն ու հայրենապաշտությունը ունենալով որպես մեկնակետ, ձգտում եւ նպատակ, սպասելով Չօպանեանի «Սրտի երկերուն» շարքին՝ Դ. Վարուժանն իր մի նամակում այնպիսի գաղափար է հաղորդում, ըստ որի՝ «Երիտասարդ սերունդը ՉԵՉ յավետ երիտասարդ պիտի գտնէ եւ յաճոյքով պիտի կարդայ»,[6] որպիսի հոգեբնքացը մեկ այլ, օրեր անց գրված նամակի մեջ սեւեռվելով ընդհանրանա. Աբովեանի՝ չօպանեանական գրության կենսագրականի վրա, որը որպես գիտակցում՝ իր մեջ պարունակում է որոշ խոստովանանքի անհրաժեշտ տարրեր՝ առ այն, որ ինքը՝ Վարուժանն էլ՝ միջնորդավորվելով Չօպանեանի ձեռնարկումից, մտադիր է «իր իսկ վրայ վիպերգ մը գրել, հոգեբանական կտոր մը գուցէ»:[7]

Այսպես է նաեւ պատահում, որ գաղափար ու նյութ է կուտակվում, մասնիկներ են միանում (Աբովեան - Չրաքեան - Վարուժան, ուր իհարկե կապողը, կենտրոնականը Չօպանեանի ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏԱԿԱՆ ստեղծագործութիւն - ձեռնարկումն է), որպեսզի կոչվի ՈԳԻ, եւ որտեղ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ամբողջությամբ փոխանցված Վարուժանին, որպես նպատակ է, ուր որոնող միտքը կրկնապատկվելով, քառապատկվելով հղվել է «Եղբայր ենք ՄԵՆՔ» -ի եւ «Զեյթունի Երգեր»-ի հեղինակի՝ Մ. Պէշիկթաշլեանի չօպանեանական գիտակցմանը, որտեղ էլ իր հերթին, խոսք ասողը կրկին ՀԱՅ ՑԵՂԻ բանաստեղծ Դ. Վարուժանն է. «Պէշիկթաշլեանի նուիրուած երկը գեղեցիկ է ու մանաւանդ հիւթեղ եւ ում հանդեպ պաշտամունքով, քող որ Մկրտիչի ոսկորները գերեզմանին մէջ սփոփուեն: Հասարակութիւնը պիտի այդ գործը սիրէ, ընդունի, քանզի իւր արիւնն է այնտեղ անդրադարձուել»:[8] ...եւ խոսելով «ԱՆԱՀԻՏ» ամսագրի մասին, նույն երգիչը՝ նույն ոգով, չի տատանվում շեշտադրել այն գիտակցելին, ըստ որի՝ «ավելորդ է ըսել, թէ միակ ՀԱՅ հանդեսն է ան («ԱՆԱՀԻՏԸ»), որուն անհամբեր ինքը սպասում է, գուցե մէծ մասամբ... անոր համար, ..., որ Չօպանեանի հոգին հոն ավելի լայն պարզուած ինքը «կը գտնի»: Դա այդպես է,- համոզված է Հայ ՑԵՂԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ, որովհետեւ «ԱՆԱՀԻՏ»-ը իւր ծրագրով անհրաժեշտ է մեզ, ՀԱՅԻ մտային զարգացմանը, «մանաւանդ հիմա ազդեցութիւնը ուղղակի պիտի ըլլայ ժողովրդին վրայ ...», ուր դարերով ընդհատուած տոհմային փառայեղ քաղաքական թելը (Կ. Զարեանը նմանօրինակ դեպքում որակում է ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄՇԱԿՈՅԹ հասկացականով) ձեռք առնելու է եւ շարունակելու»:[9] ...իսկ այս ամենը Վարուժանի կողմից զուտ բանաստեղծական - հիացիկ ձեւում հիմնավորված է. «ՁԵՐ աշխատակից ՔՈՒՐԵՐՈՒՆ հետ ես ալ պիտի գամ ԱՆԱՀԻՏ-ին բագինին վրայ զոհ բերելու՝ ՍԻՐՏՍ», պատկերացմամբ:[10]

Այս տեսակետից նաեւ ներկա ՀԱՅԻ գիտակցության «դարպասների» առջեւ է գոյանում, բախելու փորձեր արվում, ..., ճանաչելու համար այն էականը, որ եթե ՆԱ՝ մերօրյա ՀԱՅԸ, չգիտակցի իր արդեն ստեղծած պատմական արժեքները, եւ այդ արժեքների կարավանապետերին, մենք չենք կարող որեւէ նոր տեղաշարժ ու շարժ իրականացնել, չենք կարող ՍՏԵՂԾԵԼ ինչ-որ նոր բան, ուր անցյալի արժեքների գիտակցումն անհրաժեշտ են մեզ թե՛ անհատական եւ թե՛ հասարակական ինքնագիտակցության բանական հիմնավորման տեսանկյունից:

Ինչպես հստակ տեսանելի է, Չօպանեանը ՀԱՅԻ մշակույթի այն առաջին պատմագրողներից է, որ իր գործունեությամբ կռուի է մտել ժամանակի եւ մահուան հետ (Նժդեհեան կերպ)[11] եւ իր գործունեությամբ ավազանել այդ օրերի մեր իմացականության ամբողջ ճիգը, գրական խորքը՝ ծառայելով նաեւ մեր դատի հետապնդմանը, համոզված է Յ. Օշականը,[12] քանզի «երկու մէծ զգացումներ կը լեցնեն Ա. Չօպանեանի ապրած տարիները, իրարմէ գերազանց խտութեամբ մը. գրականութեան ՍԷՐԸ ու իր ազգին ազատագրութեան պայքարը»:[13]

«ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԷՐ, - ինչպես դեռեւս «ծուլանալով» հիացել է Տ. Չրաքեանը, -ինչ դժուար բան ՁԵՐ գործերը ցուցակագրել, այսինքն՝ ՁԵՐ ազգանուեր աշխատութեանց ակնածալի շարքով, եւ մանաւանդ զայն մեծապես արժեւորող այն բարձր կարողութեամբ, որ թափանցելու, տեսնելու եւ գնահատելու ՁԵՐ հեղինակութիւնն է»:

Չօպանեանը հրապարակել է նաեւ հետեւյալ գրություններ. Գրիգոր Նարեկացիի, Ղ. Ալիշանի, Հ. Պարոնեանի, Գ. Սունդուկեանի, Շիրվանզադեի ու Րաֆֆիի, Համաստեղի... մասին, որոնք որպես գրական-քննադատական գործեր (էսսեներ ու գրադատականներ) լույս են տեսել «ԴԵՄՔԵՐ» երկհատորյակով: Այսօրինակ իր անդրադարձներով, նա առաջինն է եղել, որ խոսել է Վարուժանի եւ Սիամանթոյի, Մ. Զարիֆեանի ստեղծագործությունների բուն էական առանձնահատկությունների մասին՝ այդօրինակ նախամիջավայրային գրությամբ Չարենցին անվանելով «ՀԱՅ մեծագույն բանաստեղծներեն միեը»:[14]

Օտար հեղինակներից Չօպանեանը հոդվածներ է նվիրել Վ. Հյուգոյին, Բալզակին, է. Զոլային, Հ. Իբսենին, է. Վերհարնին, Ա. Պուշկինին, Ն. Գոգոլին, Լ. Տոլստոյին եւ Տուրգենեւին...:

ՎԱՐԴԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ԵՒ ՕԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

5. Տե՛ս, Կոստան Զարեան, «ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ», Երեւան, 2001, «Սարգիս Խաչենց», էջ 281:
6. Վարուժան Դ., ԵԼԺ, 3 հատորով, Երեւան 1987, հ. 3., էջ 370:
7. Նույն տեղում, էջ 371-372:
8. Տե՛ս, նույն տեղում, էջ 367:
9. Նույն տեղում, էջ 385-386:
10. Նույն տեղում, էջ 367:
11. Տե՛ս, Նժդեհ Գ., «Բանտային գրառումներ», Երեւան, 1993, էջ 24:
12. Տե՛ս, Օշական Յ., Համապատկեր Արեւմտահայ գրականութեան, տաս հատորով, Երուսաղեմ, 1952, Հ. 5, էջ 322:
13. Տե՛ս նույն տեղում, էջ 312:
14. Տե՛ս, «ԱՊԱԳԱ» (1924թ.) ամսագրում, «Հայ հանճարի նոր հաստատում մը»...:

ԴԵՂՁՈՒՏ

Հայոց Խոսրով Կոտակ արքայի գեղանազուկ դուստր Դստրիկը դարձել էր ջղագրգիռ: Ինքն էլ չիմացավ, թե ինչպես ընկավ հոգեկան խռովքի մեջ: Օրը ցերեկով սուզվում էր երազների մեջ, թվում էր, թե հրեշտակները ասեղնահարում են մարմինը և նա գոռում-գոչում էր ցավից: Ասես այսահար էր դարձել և ուր որ է խելքը կկորցներ:

Փակվել էր նաև Դստրիկի ախորժակը: Օրերով չէր կարողանում մի կտոր բան դնել բերանը: Կուլ չէր գնում նույնիսկ ախորժաբեր նգածաղիկը:

Արքայադստերը քաղաքամայր Դվինից փոխադրեցին Աղստևի մեղմաշունչ հովիտը: Արքունի բժիշկն ասում էր, որ այստեղ նա կապաքինվի: Արքայադստեր համար մի նոր տուն կառուցեցին, որ կոչվեց Դստրիկի դղյակ:

Գլորվեցին առաջին ու երկրորդ տարիները, բայց կենարար բուրմունքով լցված հովիտը չէր օգնում Դստրիկին: Ոչ նրա հոգու խռովքն էր անցնում, ոչ էլ՝ ախորժակը բացվում:

Հենց այդ ժամանակ արքունական տան այգեպանը՝ Խոսրով Կոտակին ասաց.

- Տեր իմ, ես գիտեմ, թե ինչով կարելի է բուժել գեղանազուկ Դստրիկին:

- Ինչո՞վ:

- Դեղձով:

- Ի՞նչ:

- Մի՛ զարմացիր, արքա, իմ պապը քո տատին բուժել է դեղձով:

Խոսրով Կոտակը սովոր չէր ոտքի վրա վճիռ կայացնել: Բայց այս անգամ անմիջապես համաձայնվեց:

Շաբաթը մի անգամ արքունի այգեպանը մի կողով դեղձ էր հասցնում Դստրիկի դղյակը: Եվ ամեն անգամ իր տարած դեղձի մասին այգեպանը բանաստեղծում էր.

- Արքայադուստր, նախ պետք է իմանալ, որ դեղձ նշանակում է դեղին սալոր: Սա նարինջ է՝ հայոց դեղձերի թագուհին, քեզ նման գեղանազուկ է, բուրմունքն էլ՝ զգլխիչ: Սրանք կտուցներ էլ ունեն: Տես ինչ ոսկեդեղին է, ոչ մի միրգ այսքան նրբաթավիշ մաշկ չունի: Համը հրաշալի է, հյութեղ պտղամիսը՝ դեղին, ու միսը կորիզից չի անջատվում: Այսպիսի դեղձերը կոչվում են հյուլիներ:

Մի շաբաթ հետո այգեպանը նոր կողով է բերում ու ասում.

- Սրա անունը ճուղուրի է, նարնջի պես հյութեղ ու բուրումնավետ, բայց՝ սպիտակամիս: Եվ գիտցիր, արքայադուստր, սա էլ է հյուլի, այսինքն՝ միսը չի անջատվում կորիզից: Իսկ այն դեղձերը, որոնց պտղամիսը անջատվում է կորիզից, կոչվում են պչղովի, նաև՝ ճղովի, նաև՝ փխկովի:

Այնուհետև այգեպանը բերում է սալամի վաղահասն ու սալամի ուշահասը: Եվ իր սովորության համաձայն ամեն անգամ իր ասածից առանձնացնում էր մի խոսք ու հատուկ շեշտում այն.

-Եվ գիտցիր, գեղանազուկ Դստրիկ, որ հայոց դեղձերի մեջ ամենամեծը սալամին է:

Բերում է նաև զաֆրան ու շերտավոր լոր:

Այգեպանը ջանում էր հայկական դեղձերի բոլոր տեսակները հրամցնել արքայադստերը և դեղձի մասին իր իմացածները հաղորդել նրան.

- Դեղձը կանխում է նաև փսխումը: Դեղձենու տերևների խաշուկը ճիճվաթափ դեղ է, իսկ ծաղիկներից պատրաստված օշարակը՝ լուծողական: Լուծի դեմ ամենավստահելի դեղը չրի եփուկն է: Եվ գիտցիր նաև, որ հայոց դեղձերի մեծ մասը թավոտ է, և փոքր մասը՝ լերկ, մի մասը քաղցրակորիզ է, մի մասը՝ դառնակորիզ: Եվ ամենալավը դեղնաթույր, կրճկրճան պտղամսով դեղձն է:

Ուշ աշնանը այգեպանը Դստրիկի համար ալանի է տանում:

- Եվ գիտցիր, գեղանազուկ Դստրիկ,- ասում է այգեպանը,- ամեն մի հայուհի, արքայադուստր լինի, թե գեղջկուհի, պիտի չրի և ալանիի մասին ամեն բան իմանա:

Չիրը կորիզահան արած ու չորացրած դեղձն է, իսկ ալանին՝ կեղևն ու կորիզը հանած դեղձաչիրը, որի մեջ լցնում են ծեծած ընկույզ, տափակացնում, չորացնում արեգունի տեղում և ձմեռն անուշ անում,- ապա այգեպանը մի պահ ընդհատում է իր խոսքը և դիմում Դստրիկին,- իսկ դու երբևիցե ալանիի համար դեղձ կլպե՞լ ես:

Արքայադուստրը բացասաբար շարժում է գլուխը: Այգեպանը չի կշտամբում և եզրափակում է իր խոսքը:

Չիրն ու ալանին հայկական մառանի աղն են:

Այգեպանի այս վերջին հանդիպումից մի շաբաթ անց բանբերը Դստրիկի դղյակից շտապում է Դվին և Խոսրով Կոտակին հաղորդում ցանկալի լուրը.

- Արքայադուստրը ապաքինվել է: Եվ հոգու խռովքն է անցել, և ախորժակն է բացվել:

Արքայադուստրը պահել էր իր կերած բոլոր դեղձերի կորիզները: Նրա ցանկությամբ արքունի այգեպանը դրանք տնկում է Դստրիկի դղյակի չորս կողմը: Կորիզները ծլում ու արմատակալում են և Աղստևի հովտում ծաղկում է դեղձենու մեծ այգի: Սկզբում այն կոչվեց Դստրիկի դեղձուտ: Հետո Դստրիկը մոռացվեց և վայրը կոչվեց Դեղձուտ: Հենց այստեղ էլ տասներկու-տասներեքերորդ դարերում կառուցվեց Դեղձուտի Ճարտարապետական նշանավոր հուշարձանը, որի կենտրոնական շինությունը վարդագույն տուֆից է և հեռվից նմանվում է ծաղկած դեղձենու: Իսկ շուրջը վարդագույն դեղձենիներն են, որոնց առաջին կորիզները տնկել է տվել արքայադուստր Դստրիկը:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Սոսյաց անտառ», 1988թ.

«...Եթե վշտերից կքված, հոգնաբեկ՝ մեկը նվաղի,
Թող ամրապնդված հառնի վերստին
Հառաչանքների այս հաստարանով՝ հուսալով ի քեզ»:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

(«Մատյան ողբերգության», Բան Գ, Գ)

«Նարեկա վանքից վանական», բանաստեղծ և երաժիշտ Գրիգոր Նարեկացին հեղինակ է «Մատյան ողբերգության» սքանչելի երկի, մեղեդիների, տաղերի ու կանոնախրատական-դավանաբանական երկերի, մեկնությունների և ճառի: «Նրա լավագույն տաղերն ու մեղեդիները և «Մատյան ողբերգության» պոեմը հայ միջնադարյան քնարերգության մեջ նոր փուլ են նշանավորել՝ արտացոլելով մարդու հոգևոր-իմացական և զգացմունքային աշխարհը, անհատի բարձր փիլիսոփայական ներթափանցումները կյանքի գաղտնիքների մեջ»[1]:

Նարեկացու կենսագրության մասին հայտնի է, որ ապրել է 947-1003թթ., ծնվել է Վանա լճի ափին գտնվող Նարեկ գյուղում, կրթություն է ստացել Նարեկավանքի վանահայր, իմաստասեր-աստվածաբան Անանիա Նարեկացու մոտ: Գրիգոր Նարեկացին իր կյանքն անցկացրել է վանական միջավայրում, ազատ ժամանակ առանձնացել է Նարեկավանքից հյուսիս գտնվող լեռան ճգնարան քարայրում: Ըստ հիշատակարանի՝ մահացել է «Մատյան ողբերգությունն» ավարտելուց հետո:

Նարեկացու կանոնախրատական-դավանաբանական բնույթի երկերն են՝ «Յաղագս զղջման եւ արտասուաց», «Կարգ եւ կանոն աղօթից», «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ», «Համառօտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան», որոնցից առաջինը որոշ ձեռագրերում մեզ հասել է նաև Անանիա Նարեկացու անունով: Սակայն Նարեկացու մատենագրության գլուխգործոցն անշուշտ «Մատյանն» է: 95 գլխից բաղկացած երկն աղոթքի ձևով արտահայտված խոսք է՝ ուղղված Աստծուն («Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծոյ»): Այն անվանվում է նաև «Նարեկ» և նրան վերագրվում է նաև բուժիչ զորություն, ժողովրդի մոտ եղել է հավատ, որ գրքի ընթերցումով հնարավոր է փրկվել չար ոգիներից և զանազան ախտերից:

Նարեկացու «Մատյան»-ը աղաչանք ու աղերսանք է, խոստովանանք ու փառաբանական երգ, մաղթանք ու տենչանք: Երկում խտացվում են մեղքերից և արատներից տառապող մարդկության փրկության ճիգերը, ինքնամաքրման ճանապարհը, որը տանում է կատարյալ մաքրության, սակայն վերջինիս համար պահանջվում է մեղքերի ու վատ արարքների ամենաանխնա խոստովանություն և դատապարտում: Մարդկային մեղքերն օրավուր աճում են, որը հուսահատեցնում է, սակայն կա փրկության հույս, որը կապված է քավության և ինքնամաքրման հետ, որն էլ իր հերթին տանում է դեպի Աստված, հնարավորություն է ընձեռում միանալ, հասնել լույսին: Նարեկացու աստվածաբանությունն ուսումնասիրող հեղինակներից մեկն ասել է. «Ոչ ոք Նարեկացու պես չի պահանջել ապրելու իրավունքը»:

Ըստ Նարեկացու՝ մարդկային մարմինը կավ է, ուր բեկված է աստվածային լույսի ճառագայթը: Հոգին կատարելագործվում է մարմնի մեջ կրքերի հաղթահարմամբ: «Նարեկացու աշխարհընկալման ելակետերից մեկն էլ նրա մարդասիրությունն է: Նարեկացու մարդասիրությունը հանգում է մարդու բարոյական կերպարի վերափոխմանը՝ մարդկության սերնդաշարի հոլովույթում: Եթե բնության փոփոխությունները մշտապես վերադառնում են իրենց շրջապտույտին, ապա, ըստ Նարեկացու, մարդու և մարդկության բարոյական կեցությունը մշտապես գտնվում է Աստծուն ձգտելու և աստվածանալու շարժման մեջ: Ուստի, մարդու հոգու մեջ խավարը փոխվում է լույսի, չարը՝ բարու, ատելությունը՝ սիրո, փոթորիկը՝ խաղաղության, լքվածությունը՝ հույսի, երկյուղը՝ վստահության և այլն, որովհետև Աստված չունի այլ նպատակ, քան քավել, փրկել, կենսագործել, լուսավորել, վերստին հաստատել և «Ի խորոց անդնդոց ի լույս բերկրութեան ածել, եւ ի հեղձմանէ ծափանաց մեղաց, ընդ արդարս փառք բազմեցուցանել» [2]:

«Մատյան»-ում մաքրագործման ուղի անցնելու և «հոգու մեջ անփոփոխ կերպով Տիրոջ պատկերը նկարելու» Նարեկացու կոչը հիշեցնում է 4-րդ դարի մատենագիր, խորհրդապաշտ-աստվածաբան Եվագր Պոնտացու «Հարիւրաւորք վեցերորդք» երկի աստվածաբանության հիմնական գաղափարները՝ մարդն Աստծո պատկերն է, խորհրդապաշտի ուղին պետք է ուղեկցվի աշխարհուրացումով և հոգու նյութազերծման միջոցով կատարելագործումով, որը տանում է Աստվածությանը հաղորդակցվելուն:

Նարեկացու մատենագրությունը խորը և անհատակ ծովի է նման, որը համառոտ ներկայացնելը չափազանց դժվար է: Մենք փորձ կատարեցինք ներկայացնել մի փոքր մասնիկը միայն:

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրականություն.

1. «Քրիստոնյա Հայաստան», Հանրագիտարան, էջ 240,
2. Ա. Ղազինեան, «Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական Արուեստը»:



ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ

Ինչպես հայտնի է, 2007-ից միջնակարգ դպրոցների շրջանավարտների պետական ավարտական քննություններն աստիճանաբար կանցկացվեն կենտրոնացված համակարգով: Կառավարության երեկվա որոշմամբ ամրագրվել է, որ հայոց լեզու, հայոց պատմություն, մաթեմատիկա և օտար լեզու առարկաները պարտադիր են համարվում միջնակարգ դպրոցի բոլոր շրջանավարտների համար: Բուհերում կրթությունը շարունակել ցանկացող շրջանավարտները կարող են պարտադիր ընտրովի առարկայից բացի ընտրել եւս մեկ՝ նախընտրած մասնագիտությանը համապատասխանող առարկա: Վերոնշյալ որոշմամբ «Հիմնական դպրոցի ավարտական քննություններ» բաժնում ավելացվել է հայոց պատմություն առարկան:

ԱՐԱ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ, «Ազգ»

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐՀՈՒՐԸ

Սկիզբը՝ թիվ 10-րդ համարում

10

Հազիվ, դողդոջուն գլուխս ժայռակոփ մահճից վերցնելով,
Հենվեցի՝ թիկնելով քարեղեն խրճիթիս վեմերից մեկին:
Փոքր ինչ սպասելով ճոճքի ավարտին.
Ընկողմնեցի մի քիչ, ու կամեցա սակավ ինչ աչքերս բացել ննջման թմբիրից:

11

Կես-քուն, կես- արթուն, հանկարծ թնդյունով
Մի ձայն երկնային լսելիքս բախեց գագաթի կողմից:
Խզվելով լուծվեցին զիստերս, ջլերս ու հոդերս բոլոր,
Մերձ էի՝ կիսամեռ գլորվելու խորխորատը վիհի:

12

Այստեղ երեսն երկնի տարածության երկու կես եղավ,
Իջան ամպերով երկնաբնակ անմարմինների հոգիները խմբով:
Ու ինձ վերցնելով կարկամած վախից, անմռունչ դիակի նման այստեղից,
Բարձրացրին տարան Մասիսի երկսայր գագաթին տափարակ մի բեմ:

13

Ժամեր էին անցնում, արեգակն էլ ծագելով, ավելի էր պայծառանում,
Մինչ ես վերացած՝ ձորերով կուսական լեռան կիրճերի սլանում էի անհանգրվան:
Մեկ՝ գահավիժում, լեռան բարձունքից ընկնողի նման,
Մեկ՝ վեր սլանում, իբրև ոգեղեն՝ նրանց հավասար:

14

Ոգեղենների գնդերից խոժոռ՝ քաղցրահայաց ալևոր
մի հեզ՝ ավագը նրանց, ինձ դիմեց ասաց.
«Մո՛տ արի, ով դու պանդուխտ, որդի՛դ հոգեծին»
Ասաց և հառնեց, մոտեցավ բռնեց կանգնեցրեց ոտքի,
Իր ալեզարդ գիրկն ինձ առնելով, աղեխորով հարցուփորձ էր անում լալով:

15

«Ասա ինձ, որդյակ: Ի՞նչ է սա, անզարդ
արտասովոր մի փայտի կտոր,
Բայց լուսափայլմամբ ճառագայթների ողողել է
ողջ լեռը լույսով ահավոր:
Մեր տապանից չէ փայտն այն, քառաթև է ձևով,
Անհաս է խելքիս, տեսողությանս անմատչելի ու անհպավոր:

Գրաբարից թարգմանեց ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԸ

ԱՐՑԱԽԻՆ

Արցախ աշխարհ, հպարտ ու նեղ,
Ապավեն ես դու կանգնել,
Այնքան շքեղ հեքիաթ պատկեր,
Աստված քեզ է կամեցել:

Բնությունը քո դրախտին
Չի կարելի կրկնել,
Հպարտ կանգնած քո լեռներին,
Պետք է միայն խոնարհվել:

Օ՛հ իմ Արցախ, հայի երկիր,
Դու չես կարող ծնկի գալ,
Արյուն թափած հերոսների
Անունները մոռանալ:

Արցախ, դու ես հայի պարծանք
Այնքան երկար երազած
Հաղթանակ է, քո անունը,
Թշնամին է պարտված:

Դու թանկ մի քար ադամանդ ես
Հայի ձեռքը զարդարող,
Նա չի կարող քեզ կորցնել,
Կանգնել խոնարհ գլխիկոր:

Արցախ, ձայնս դու լավ լսիր,
Մով սարերում գեղանի,
Ես իմ սիրտն եմ կորցրել,
Որը երբեք չեմ գտնի:

Եղիր օրրան հերոսներիդ
Անուններին լուսավոր,
Ու միշտ մնա պարծանք հայի,
Պատմության մեջ դարավոր:

ՆԵԼԼԻ ԱԶԳԱԼԴՅԱՆ
Լեոնիդ Ազգալդյանի քույրը

ԹԵՈԴԻԿԻ ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄԸ

(Սկիզբը՝ թիվ 9-10-րդ համարներում)

3. Թեոդիկի եղեռնապատումում, ուր ներկայացված հայ մշակույթի մեծանուն դեմքերի (Դ. Վարուժան, Սիամանթո, Ռ. Սևակ, Ռ. Զարդարյան, Ա. Հարությունյան, Գ. Բարսեղյան, Տ. Չյոկուրյան), ինչպես նաև մյուսների կենսագրապատումներում ակնհայտ է Մեծ եղեռնի զոհերի ողբերգությունը: Այստեղ բնավ էլ չի կարևորվում նրանց տարիքը, քանզի նրանք բոլորն էլ լեցուն են եղել ստեղծազոր ու կենսատու լիցքերով և հավատամքով. հայ ոգու հավատամքով. «Մենք չենք գտներ բան մը, որ այնքան մերը ըլլա՝ որքան գիր ու գիրք: Գիր ու գիրք միայն շոշափելի ու զգալի ձևեր ու երևույթներ չեն, այլ ասոնց մեջ է խոսուն ամբողջ ցեղը, իր մտքի և ընդունակութեանց պատիվը»: Հրանդի **(Մելքոն Կյուրճյան)**, իբրև ազգային-քաղաքական գործչի և Թուրքիայի պառլամենտի անդամի, այս խոսքերը ապրելու նշանաբան և շնչառու կենսակերպ են եղել: Քաղաքական գործունեությանը զուգահեռ տարիներ շարունակ դասավանդելով գրաբար և հայ դպրություն, ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ գավառներում, Հրանդը «իշխանապերճ հայերենով մը» աշխատակցում էր հայ մամուլին՝ անդրադառնալով ոչ միայն ազգային հրատապ բազում խնդիրների, այլև գավառներում հայ ազգային կացությանը և իրականությանը: Ուշագրավ են Հրանդի «Պանդուխտի կյանքեն» խորագրով պատկերների շարքը: Իրականության խորքային դիտարկումներով ստեղծված ժամանակագրությունը, մինչեղեռնյան հայ կյանքի և հայ հոգու «ազգայնացած մտածումներու» շքեղ հանդիսարան լինելուց զատ, հայրենապաշտության ջատագովում էր: «Գրաբարի դասագիրք» «Մեսրոպ և Սահակ անուն հայ նշանագիրներու պատմությունը» աշխատությունները խիստ արժևորելի են, քանզի անխոնջ գործչի անմնացորդ սիրո և նվիրումի արգասիք են՝ հասարակական հնչեղություն և համակրանք վայելած:

Հրանդը նվիրյալների այն փաղանգից էր, ովքեր ունեին հստակ գիտակցումն այն բանի, որ հասարակական գործունեությունը պետք է ոչ միայն ազգանպաստ շեշտադրումներ ունենա, այլև ձևավորի հայրենապաշտ մի սերունդ, որ ազգի, հայրենիքի նվիրաբերմամբ առաջնորդվի և գիտակցական կյանքում ընտրի այն ճանապարհը, որը սկսվում և վերջանում է հայրենյաց փառքի ոգեկոչմամբ:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՃԸՆՑԻՆԵՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ
(17-ը մարտի - 15-ը հոկտեմբերի, 1920թ.)

Հայ ժողովրդի ազգագրական ինքնատիպ մի խումբը վաղ ժամանակներից բնակություն էր հաստատել Լեռնային Կիլիկիայի գեղատեսիլ բնության գրկում, որը կոչվել է Հարգան կամ Հաճըն: Վերջինս, ըստ ժողովրդական ստուգաբանության, «աճել, բնակիչներով շատանալ, բարգավաճել» բառերից է ծագել:

Հաճընցիներն այնտեղ դարերով ապրել են խաղաղ ու ստեղծագործ կյանքով: Ժողովրդական վարք ու բարքի, նրանց զբաղմունքների մասին հակիրճ, բայց չափազանց բնութագրական են մեր գրառած բազմաթիվ ու բազմազան նյութերից հետևյալ երգի տողերը.

Հէճնօ տէղը եայլօ է, *Հաճընը ամառանոց վայր է,*
Հէճնցիք թում աղօ էն, *Հաճընցիք բոլոր աղա են,*
Ջույը, ֆէղը համէվ էն, *Ջուրը, հողը համով են,*
Աչկինտէքը քէլէշ էն, *Աղջիկները սիրուն են,*
Ջրիէլնէրը իգիթ էն, *Ջահելները կտրիճ են,*
Գէնջէրը ղունտուրաջի էն, *Երիտասարդները կոշկակար են,*
Ըխտիյօրնին ղալայիջի էն, *Ծերերը կլայեկ են,*
Պառվէնին քայմօն կու մանէն: *Պառավները իլիկ կմանեն:*[*]

1915թ. Հայոց ցեղասպանության ընթացքում Հաճընի հայերը տեղահանվեցին և նրանց մեծ մասը Դեյր-էլ-Զորի անապատում նահատակվեց:

Անդրադառնալով պատմական իրադարձություններին՝ հարկ է նշել, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916թ., դաշնակից տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներքին պայմանավորվածությամբ (Սայքս-Պիկո), Թուրքիայի պարտության դեպքում, 2.600.000 հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հովանավորությանը: Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները Հայկական Ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնվել էին, որ եթե հայ կամավորները կռվեն Թուրքիայի դեմ, հաղթանակից հետո հայերին կտրվեն քաղաքական լայն հնարավորություններ, և հայ կամավորները կդառնան նորակազմ Ինքնավար Հայկական Կիլիկիայի քաղաքապահ զինվորներ:

Ուստի, թուրքական բանակից, աքսորի ճամփաներից ու տարբեր վայրերից, նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները (մուսալեռցի, այնթապցի, մարաշցի, քեսաբցի, հաճընցի, հուսեյնիկցի, չնգուշցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի և այլն) զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արևելյան (Հայկական) լեգեոնը: Հայ կամավորները, իրենց անմեղ նահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում թուրք-գերմանական զորքերին՝ նվաճելով Արարայի փայլուն հաղթանակը Նաբլուսի մոտ (Պաղեստին): Պատմական այդ իրադարձությունները ևս իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել ժողովրդական թուրքալեզու երգերի մեջ.

Եվ իրոք, հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական և բրիտանական հրամանատարության դրվատանքին: Գեներալ Ալենբին 1918թ. հոկտեմբերի 12-ին Հայ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար

Բիրէր-բիրէր սայդըմ դէօրթ սէնէ օլդու, *Մեկիկ-մեկիկ հաշվեցի չորս տարին,*
էրմէնի ասքէրի Նաբլուսու ալդը. *Հայ կամավորները Նաբլուսը գրավեցին.*
էրմէնի ասքէրի բին բէշ յիւզ քիշի. *Հայերը հազար հինգ հարյուր հոգի էին.*
Ինգիլիզ, ֆրանսըզ շաշդը բու իշէ: *Անգլիացին, ֆրանսիացին ապշեցին:*

փաշային հղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայկական զօրամաս ունենալուս համար: Նրանք կռուեցին փայլուն կերպով եւ մեծ բաժին ունեցան յաղթանակի մէջ»:

Պատերազմից հետո կնքված Սևրի պայմանագրով Կիլիկիայի վրա հաստատվելու էր Անտանտի երկրների հսկողությունը, և թուրքական զորքերն իբր արդեն դուրս էին բերվելու Կիլիկիայից: Դեյր-էլ-Զորի, Ռաս-ուլ-Այնի և այլ կենդանի գերեզմանոցներից հրաշքով փրկված, ուժասպառ, հյուծված և ունեզրկված հայ աքսորականները աստիճանաբար գալիս, տեղավորվում էին Կիլիկիայում: Նրանք, ապագայի նկատմամբ վառ հույսով ու հավատքով, սկսում են վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները: Սակայն թուրքերին հաջողվում է լեզու գտնել դաշնակից տերությունների հետ և ստիպել ֆրանսիացիներին՝ իրենց խաղաղապահ զորքերը դուրս բերել Կիլիկիայից:

Ֆրանսիական զինվորական վարչությունը ոչ միայն լուրջ միջոցներ չի ձեռնարկում հայերի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ, այլև տեղերում իշխանությունը թողնում է թուրք զինվորական պաշտոնյաների ձեռքին, և նրանք չեն զինաթափվում:

Չճանաչելով Սևրի պայմանագիրը և օգտվելով ֆրանսիական զինվորական վարչության անվճռականությունից և թուլությունից՝ թուրքական զորքերն ու տեղի չեթեներն իրենց զենքն ուղղում են Կիլիկիայի հայության դեմ:

1920թ. հունվարից թուրքական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերը: 22 օր տևող կատաղի մարտերում Մարաշ քաղաքի հայերը կոտորվում են ու մոխրացվում:

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գոզան օղլու Դողան բեյն իր բազմահազար զորքով պաշարում է Հաճընն քաղաքը, որի 35.000 հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էին միայն 6.000:

Դողան բեյ դէ գէլդի, գիրդի Հաճընա…
Եազըխ օլդու սանա, ղօջա՜ Հաճընն…
Օրադա ղափըշքըլար բիզիմ մալըմըզը…
Այսաղ ալքընա գիթթի սահիբսի՜զ էրմէնի:

Դողան բեյն էլ եկավ, մտավ Հաճընը…
Ափսո՜ս եղավ քեզ, իսկա՜ Հաճընն…
Այնտեղ թալանեցին մեր ունեցվածքը…
Ոտնատակ գնաց անտե՜ր հայը:

Հակառակորդի կարծիքով՝ «Կիլիկիոյ հայկական միջնաբերդը՝ Հաճընը, հիմնովին կործանելն ու բնաջնջելը մէկ ժամուայ գործ էր եւ աննշան յարձակումով մը պիտի կրնան թաղել 6.000 հայութիւնը»: Սակայն հաճընցիները լի էին վճռակամությամբ: Նրանք իրենց կառավարիչ, փաստաբան Կարապետ Չալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը: Պաշտպանության հրամանատար են ընտրում Զորավար Անդրանիկի զինակից սպա Սարգիս Ճեպեճյանին: Կազմակերպում են 4 վաշտ, 60 հեծյալից բաղկացած հեծելախումբ: Հաճընն ու իր շրջակայքը բաժանում են պաշտպանական 4 շրջանի: Փորում են խրամատներ և կառուցում այլ ամրություններ, մարտական տրամադրությունը համակում է բոլորին: Ամենուրեք հնչում են ազատատենչ երգեր.

Հառա՛ջ, հառա՛ջ, հաճընցինե՜ր,
Մեր ոխերիմ թուրքն է եկե,
Հառա՛ջ, կռվի՛նք՝ ի զե՜ն, ի զե՜ն,
Տեսնենք թշնամին ի՞նչ կուզե:

Սարգիս Ճեպեճյան

Զենք կրելու ընդունակ 16-50 տարեկան 1.200 տղամարդկանց բաժանվում է եղած-չեղած 132 հրացանը: Հետագայում ձեռք է բերվում նաև 300 հրացան, սակայն այդ ևս խիստ անբավարար էր բոլշևիկյան անսպառ ռազմամթերքով զինված թուրքական բանակի դեմ կռվելու համար:

Ահա թե ինչու զենքի խիստ կարիք զգացող հաճընցիներն անհամբերությամբ սպասում էին Ադանայի Ազգային միության միջոցով դրսից ակնկալվող օգնությանը, որի շնորհիվ ոչ միայն զենք ու զինամթերք, այլև կռվող նոր ուժեր պիտի հասնեին: Վերջապես երկնքում հայտնվում է բաղձալի օդանավը.

Օդանավն եկավ մեծ ավետիսով,
Մեր սրտերը լցվան ուրախ հույսերով,
Թափառին բոլոր մարտիկներն անզեն.
Անոնք հոգիով թուրք ջարդել կուզեն:

Եղբայրներն արդեն նամակ գրեցին.
«Կռվեցե՛ք, եղբա՜րք, կհասնինք»,- ըսին,
Սակայն ի՜նչ խաբար, օրերնիս անցան.
Հազար հոգիեն երկուք չերևցան:

Եվ հաճընցի «անզեն մարտիկների» վիճակը դառնում է հուսահատական, քանի որ ֆրանսիական զինվորական ներկայացուցիչները վարում էին երկդիմի քաղաքականություն. թեպետ խոստացել էին ինքնապաշտպանության համար տրամադրել սննդամթերք, զենք ու զինամթերք, սակայն իրենց խոստումը ոչ միայն չեն հարգում, այլև թուրքերին տեղեկացնում են հայերի ինքնապաշտպանության կազմակերպման մասին.

Ապրիլ կամ՝ մեռնիլ, կտրի՜ճ հաճընցի,
Գրավենք՝ ըսին, թե ոչ՝ կմեռնինք,
Գրավենք զմեզ թնդանոթն ահեղ,
Թող հաղթանակը տանինք փառահեղ:

Հաճընցի ազատամարտիկները մեծ դժվարությամբ գրավում են թշնամու հսկա թնդանոթը, սակայն արկեր չեն գտնում, որ կրակեն ու պաշտպանվեն: Սովը նեղում է հաճընցիներին. ժողովուրդը ստիպված սկսում է ուտել կատու, մուկ, շուն, կաշի, ծառի կեղև, տրեխ: Թշնամին նորանոր թնդանոթներով ու անհամար կանոնավոր զորքով համալրում է իր ուժերը: Ութամսյա երկարատև ու համառ դիմադրությունից հետո թուրքերին հաջողվում է հրետանու խաչաձև կրակոցների հեղեղով ավերել ու հրկիզել նաև Հաճընի քարաշեն տները: Հարյուրավոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հաճընցիներ անխնա կոտորվում են: Միայն 380 հոգու է հաջողվում կռվելով ճեղքել թշնամու պաշարման շղթան և դուրս գալ ահավոր հրդեհի շրջապատումից.

«Վրե՜ժ» գոռալով ընկնում են նաև ընդհատումներով երեք հարյուր տասնչորս օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առևտրի կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր: Ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները, 1921թ. հոկտեմբերի 20-ին, Անկարայում կնքված պայմանագրով, Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը:

Հետագայում անտուն ու անհայրենիք մնացած արևմտահայ հայրենադարձները, վերաբնակվելով Երևանի շրջակայքում, սկսում են հիմնադրել իրենց պատմական հայրենիքի հիշատակները խորհրդանշող ավաններ ու թաղամասեր, սակայն երբեմնի ավերակված տան, հանգած օջախի մրմուռը շարունակում է մխալ նրանց հիշողության մեջ ու կորցրած Երկրի երազանքը հոգու կանչ դարձած՝ ժողովրդայնացած «Կիլիկիա» երգի տեսքով ավանդվում է սերնդից սերունդ:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱՋԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող

* Բանահյուսական մեջբերումները կատարված են մեր «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը» (Երևան, 1994) գրքից:

ԱԼԱՅԱ - ԿՈՌԱԿԵՍԻՈՆ ԿԱՄ ԱԼԱՆԻԱ

Ալայան ծովային Կիլիկիայի հին ու նշանավոր բերդաքաղաքներից մեկն էր, կառուցված թերակղզու վրա, հրաշալի դիրքով մի նավահանգիստ էր՝ Կիպրոս կղզու դիմաց: Այսօր կոչվում է Ալանիա, Միջերկրականի բանուկ նավահանգիստներից մեկն է՝ Թուրքիայի տարածքում: Ալայան հյուսիսից՝ մոտակա լեռներից, զատվում էր ընդարձակ դաշտով և շրջապատված՝ ցածր ու ավազուտ բլուրներով: Կիկլոպյան հսկա քարերի և սյուների մնացորդներն են երևում քարաբլրին: Քաղաքի երկու կողմերում բարձրանում էին երկու քարաժայռ: Տները կողք-կողքի էին շարված, ամֆիթատրոնի պես՝ մեկը մյուսի հետևից վեր էին բարձրանում, կարծես թե իրար կպած էին: Իսկ եթե ծովի կողմից խարակները բարձրանում էին և, հեռու գնալով, անհետանում՝ ջրերում:

Հին ժամանակներում այս բերդաքաղաքը կոչվել է Կոռակեսիոն: Երկար տարիներ Ալայան հռոմեական կայսրության մասն է կազմել և եղել՝ կայսրության վաճառաշահ քաղաքներից մեկը: Բերդաքաղաքը հռոմեացիներից անցել է բյուզանդացիներին և նրանց ձեռքում մնացել այնքան, մինչև Կիլիկիայի թատերաբեմ են ելել հայերը:

«Կալոնոռոս» հունարեն նշանակում է «Գեղեցիկ կամ Բարի լեռ»: Արաբ պատմիչները վկայում են, որ Ալահետտինը այնտեղ իր անունով մի քաղաք է կառուցել և, կրճատելով իր անվան վերջին՝ «ետտին» մասնիկը, կոչել՝ Ալայա, որտեղ էլ կուտակել է իր ողջ հարստությունը:

Ե՞րբ և ինչպե՞ս են հայերը հասել Կիլիկիա: Լևոն Ա-ի իշխանության օրոք ո՞վ էր տիրել Կիլիկիայի ծովեզերքին: Ո՞ւմ ձեռքում էր Կոռակեսիոնը: Լևոն Ա-ի թագադրության հանդեսին (1198թ.) ներկա իշխանների ու բերդատերերի ցանկում, կարծես թե, հիշատակված չէ Ալայայի իշխանի կամ տիրոջ անունը: Սակայն, ըստ Ալիշանի, քաղաքը 1198-ին կոչվել է Կալոնոռոս, անուն, որ հիշատակվում Լևոնի թագադրության հանդեսին ներկա իշխանների ու բերդերի ցանկում, որի իշխանը Սիր Ատան էր: Վերջինս Լևոնի օրոք ամենահզոր ու ազդեցիկ մարդն է եղել, ում Լևոնը իր կյանքի վերջին օրերին Պայլ է անվանել և նրան իր աղջկա Ջաբելի համար դաստիարակ նշանակել:

Սիր Ատան պետք է, որ ընդարձակ երկրների ու բերդերի տեր լիներ: Այս ամենը հաստատում է նաև Սմբատ Սպարապետը. «Լևոն Ա. դնէր եւ դաստիարակս տղային իւրոյ՝ զմեծ իշխանն Սիր Ատան, որ էր տէր բազում բերդից եւ գաւառաց, ի Սելեւկիոյ մինչեւ մերձ ի Կալօնօռօս, որ անուամբ նորա կոչի մինչեւ ցայսօր Աշխարհ Սիր Ատանայ»:

Ե՞րբ են հայերը հասատվել այստեղ, և ո՞վ էր Սիր Ատան: Հայագետ եվրոպացիները և պատմագետները կարծում են, թե «Սիր Ատան ֆռանկ մըն էր»: Եվրոպայից խաչակիրների հետ գալով Արևելք, նա հաստատվել է նախ՝ Ասորիքում, ապա Բյուզանդիայի կայսեր հրավերով անցել է նրա կողմը՝ դառնալով նրա հավատարիմ ծառաներից մեկը: Կիրակոս պատմիչը նրա մասին գրում է. «որ էր հոռոմ դաւանութեամբ»: Այս տողերը ցույց են տալիս, որ Սիր Ատան ոչ լատին էր և ոչ էլ հույն, այլ հունաճոես հայ, իսկ Սմբատ Սպարապետը տալիս է նրա իսկական անունը՝ Ատոմ:

Ալիշանը գրում է, որ Սիր Ատանի նախնիները «Թագաւորազարմ պայազատք Արծրունեայն Սենեքերմայ գաղթեալքն ի Վասպուրական եւ տիրացեալք կողմանցն Սեբաստիոյ»: Այստեղից կարելի է հետևություն անել, որ Ատոմյանները ազգով և ծեսով հայ էին: Նրանք, գաղթելով Սեբաստիա, հույների կողմից որպես օտարածես, հալածվում էին, և հանուն խաղաղության հայերը ընդունում են հունական ծեսերը:

Հավանաբար Կիլիկիայի ծովեզերքին ու բերդերին Ռուբինյաններից առաջ իշխում էին Ատոմյանները, որոնք, ունենալով հայկական ծագում, ցեղակից էին Ապլղարիբներին և Հեթումյաններին: Ենթադրվում է, որ Ատոմյաններ-ը Սենեքերիմ թագավորի հետ 1102-ին գաղթել են Սեբաստիա և, այնտեղից էլ իջնելով հարավ, հասել են ծովեզերք և տիրել այս շրջաններին, ապա մտել են Բյուզանդական կայսրերի հովանու տակ և համալրել նրանց բանակների շարքերը:

Ալայան վաճառաշահ քաղաք է եղել, ուր գալիս էին վենետիկցի, ճենովացի և լոմպարտցի վաճառականները: Ենթադրվում է, որ լոմպարտացիների անունով էլ կոչվել է Լոմպարտի բերդը:

Հիմա քաղաքում նշանավոր բան չի մնացել, բերդն ամայի է, քաղաքի պարիսպները՝ խարխլված: Նավահանգստի մոտ կա ութանկյուն մի հսկա աշտարակ՝ Գզլ-Գուլե՝ 36 մետր բարձրությամբ, հինգ հարկաբաժինով, կառուցված 1228-ին՝ հալեպցի ճարտարապետի կողմից: Ալայա քաղաքի պարիսպները 145-ից ավելի աշտարակ ունեին և երեք բարձր բերդ: Պարիսպներից ներս քաղաքը բաժանված է վեց մասի, ամենակարևորը զինվորական նավաշինարանն էր՝ փորված քարաժայռի մեջ, շուրջ 87 մետր խորությամբ և 106 մետր լայնությամբ, որտեղ պատերազմական ամենամեծ նավերն անգամ կարող էին կայանել:

1220-ին սելջուկ թուրքերը Ատալիան գրավելուց երեք տարի անց գրավեցին Ալայան: Տեսնելով, որ այն մեծ շահ է բերում, որովհետև բազմաթիվ նավեր էին այնտեղ մտնում ու ելնում, որոնցից նրանք տուրքեր էին գանձում, ցանկացան Միջերկրականում Ատալիայի նման մի ուրիշ նավահանգիստ ևս ունենալ, ուստի ընտրեցին Կալոնոռոսը և այն նոր անունով կոչեցին՝ Ալայա:

Անմիջապես այստեղ հաստատվեցին Արևելքի վաճառական ժողովուրդները, հույները հրեաները, ճենովացիները, վենետիկցիները: Առանձին հասարակություններ կազմեցին, առանձին թաղամասերով:

1340-ին արաբ ուղեգիր Իպն Պաթուտան, գալով Ալայա, հիացմունքով է խոսում նրա մասին և այն կոչում է. «Սկիզբն աշխարհին Յունաց»:

ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱԴՅԱՆ

ՏԱՐՕՆ - ՄՈՒՇ

Սուրբ Կարապետ. Հայոց հոգեւոր կեդրոններուն մէջ երկրորդը կը համարուի էջմիածնէն ետք: Սուրբ Լուսաւորիչ, կործանելով այնտեղ գտնուող հայ հեթանոս աստվածների՝ Անահիտի, Վահագնի, Աստղիկի, Գիսանեի ու Դեմետրեի մեհեանները, հիմնեց եկեղեցի՝ ամփոփելով Ս. Կարապետի՝ այսինքն Յովհաննէս Մկրտիչի նշխարները: Վանքը կոչուած է նաեւ Իննակեան, քանի որ կը գտնուէր իննը աղբիւրներուն մօտ: 16-17-րդ դարերուն՝ թուրք-պարսկական պատերազմներու ամենաբուռն շրջանին Ս. Կարապետ վանքը եղած է փրկութեան վայր: 1750-ականներուն պարսիկները այրեցին Սուրբ Կարապետ եկեղեցին: 1760-ականներուն վանքը կը դառնայ արեւմտահայոց ազատագրական պայքարի կեդրոններէն մէկը: Անոր վանահայր Յովնան կը նամակակցի վրաց թագաւոր Հերակլ Երկրորդին եւ ականաւոր քաղաքական դէմք Յովսէփ Էմինի հետ: 1784-ի երկրաշարժը աւերեց Կաթողիկէ եկեղեցին եւ կարգ մը այլ շէնքեր: 1788-ին վանքը ամբողջութեամբ կը վերանորոգուի: 1827-ին քրտական աւարառու խումբ մը կը գրաւէ վանքը եւ կը կողոպտէ հարստութիւնը: Ս. Կարապետի հեղինակութիւնը կը բարձրանայ 1860-80-ականներուն, երբ այստեղի վանահայրեր կը նշանակուին Խրիմեան Հայրիկ եւ Գարեգին Սրուանձտեանց: Խրիմեան Հայրիկ այստեղ կը հիմնէ ժառանգաւորաց վարժարան մը եւ կը հրատարակէ «Արծուիկ Տարօնոյ» թերթը: Սրուանձտեանցի համաձայն, այս վանքին մէջ թաղուած են Գայլ Վահան, Արծրունեաց Վարդ Պատրիկ իշխանի որդին: Բակէն դուրս գտնուած է Զէնոբ Գլակի գերեզմանը: 1915-18-ականներուն վանքը ենթարկուեցաւ յարձակման: Եղեռնի օրերուն բազմաթիւ տարօնցիներ ապաստանած էին այստեղ եւ երկու ամիս ահեղ կռիւ կը մղէին թրքական օրինաւուր զօրքերուն դէմ: Հետագային վանքը աւերուեցաւ թուրքերուն կողմէ:

Սուրբ *Կարապետի ուխտը.* *Սուրբ Կարապետի ուխտագնացութիւնը կապուած էր Վարդավառի եւ Վերափոխման տօներուն հետ: Միաժամանակ ան կը տեւէր ամբողջ տարի մը: Ս. Կարապետի ուխտագնացութիւնը լաւագոյնս նկարագրած է Սիմէոն Լեհացին իր «Ուղեգրութեան» մէջ: Սուրբ Կարապետը մուրազատու էր ոչ միայն այն պատճառով, որ իրեն դիմողներու խնդրանքը կը կատարէր, այլեւ Ս. Կարապետի շիրիմին հասնիլը ինքնին ուխտաւորի մուրազի կատարումն էր: Ահա այս պատճառով Լեհացին կը գրէ. «Մեք հասաք մեր մուրատին, Աստուած զամէնքն հասցէ իւրեանց մուրատին»: Ուխտաւորները կը վերցնէին Ս. Կարապետի շիրիմին շուրջ գտնուող հողէն. «Եւ տուին մեզ ճուհար հողուն, որ ի սուրբ գերեզմանէն կ՚ելնէ»: Այնուհետեւ ուխտաւորները օրէնքի համաձայն, կը հիւրասիրուէին վանքի միաբանութեան կողմէ. «կերաք կերակուր վանաց եւ արբաք ջուր»: Ասիկա սովորական ուտել չէ, այլ ծիսական հաղորդութիւն վանքի հացին եւ ջուրին:*


Մշո Սբ. Կարապետ վանք

Մշոյ Սուրբ Կարապետ վանքի յատուկ աւանդական «Լոլիկ հաց»-ի պատրաստման եղանակը.

Բաղադրութիւնը. *1 բաժակ ոսպի ալիւր, 3 բաժակ պարզ ալիւր, 2 գլուխ սոխ, 2 լոլիկ, 4 ճաշի դգալ լոլիկի ջուր, 1 թէյի դգալ սեւ պղպեղ, 2 դգալ կարմիր պղպեղ, պտղունց մը աղ, 1 կապ մաղադանոս:*

Պատրաստման եղանակը. *Ոսպի եւ ցորենի ալիւրը խառնել, աւելցնել մանր կտրուած սոխ, աղ, պղպեղ, շաղել ջուրով: Յետոյ աւելցնել մանր լոլիկ, կանաչ պղպեղ, լոլիկի ջուր, մաղադանոս: Շաղել եւ 1 ժամ ձգել, որ հանգչի խմորը: Ապա նարինջի մեծութեամբ խմոր հունձել, բանալ քրտնակով, ապա արաբական հացի նման բանալ ու թխել թիթեղի (սաճ) վրայ:*

Մեսրոպ արք. Աշճեանի 1997 թուականի

Գիտեմ, ոմանք քմծիծաղով պիտի մօտենան, «տիրացուական հայրենասիրութիւն» որակեն այս բոլորը: Ոչինչ: Ես աւելի ու աւելի կը համոզուիմ, որ մշակութային եղեռնը կը շարունակուի, եւ ոչ միայն թուրքին ձեռքով: Մենք, հայերս, իբրեւ պետութիւն, իբրեւ Եկեղեցի, շահագրգիռ կազմակերպութիւններով, յուշարձաններու վարչութեամբ, յանցաւոր ենք անտարբերութեան մեղքով: Եւ յետոյ՝ մեր պարտականութիւնը չէ՞ ճանչնալ հայրենին, աւանդութիւնը, պատմութիւնը: Ինծի համար ապրող յուշարձան է եւ ճոճան պարը, եւ չաչանէն, եւ Մշոյ ղըրը, եւ եկեղեցւոյ շէնքը. ինծի համար յուշարձան է նաեւ մեր լեռներուն եւ սրբավայրերուն աւանդութիւնները, պատմութիւնը: Գիտնալը՝ թէ **Սուրբ Յովհաննէս** Արծուաբեր կը կոչուի, Շիշ Իւղոյ եւ կը կոչուի, կամ ուրիշ գիւղի մը եկեղեցին կը կոչուի Քաղցրահայեաց, Սիրահայեաց, Ծովահայեաց Սուրբ Աստուածածին:

Սուրբ Յովհաննէսի մէջ կը հանդիպինք, ի վերջոյ, հայու մը: Արմէն է անունը ու կը համբուրուինք, կը սիրենք զիրար: Կինն ալ հայ է: Հայաստանի հետ կաշիի առեւտուր կ՚ընէ, հօրեղբայրը տեսանք՝ ան ալ Հայաստանի հետ կապեր ունի: Միլիոնէն մէկը, պիտի ըսէր դպրոցի տնօրէնս Եդուարդ Տարօնեան, իր մէկ պատմուածքին մէջ: Բայց քանի՜ քանի Արմէններ կան, Րէճէպներ կան, Բամազաններ կան, որոնք կարօտ են Հայաստանի րատիօյի ձայնին, եւ հպարտ պիտի ըլլան, եթէ երեկոյ մը, իրենց տան հեռուստացոյցը բանան, եւ լսեն հայերէն երգ եւ պար, Հայոց պատմութիւն, իրենց հողի ու երկրի պատմութիւնը: Հիմա կը յիշեմ մեզի ընկերացող գիւմրեցի Սագօն: Երբ իր տպաւորութեանց մասին կը խօսէր՝ Վալէի վրացական սահմանի մաքսատան մէջ, շեշտեց հետեւեալը. «Մուշի մէջ հանդիպեցայ քիւրտի մը, որ երբ իմացաւ թէ հայ եմ, բռնեց ձեռքերս, շօշափեց, համբուրեց զիս եւ ըսաւ. ես ալ հայ եմ... դրսի հայի չէի տեսած... աչքերը դուրս եկան, պիշ-պիշ կը նայէր ինծի... ու աւելցուց՝ 24 տարեկան եմ, զինուորութիւն չեմ ըրած... պիտի երթամ Հայաստան աղջիկ առնեմ»: Եւ կը յիշեմ ուրիշ պահ մը՝ երբ նոյն այդ կորսուա՞ծ հայը, թէ արդէն իսկ ինքը քիւրտը, որ պատմութեան ալ տեղեակ է, մեր Աշոտին դիմաց, իր ձեռքի գաւազանը գետին կը խփէ, եւ երկիցս կ՚ըսէ. «Պու թոփրաք էրմենի տըր» («Այս հողը հայկական է»):

Բաւականին ուշ կը վերադառնանք Մուշ: Առիթը կ՚օգտագործենք: Քանի մը հոգիով կը քշենք դէպի Մշոյ հայ-


Մշո Սբ. Կարապետ վանք

կական թաղերը: Քիչ մը ծանօթ եմ լերան լանջին փռուած Մուշին: Իրարու վրայ դիզուած տուներ, հնաւանդ բնակարաններ եւ մի քանի հայկական թաղեր՝ որոնք հիմակուան քիւրտերուն ալ ծանօթ են.- Բրուտի թաղ, Ջորի թաղ, Մարիմէի թաղ: Նոյն այս թաղին մէջ կ'այցելենք հայ կաթոլիկներու եկեղեցին: Մեր քիւրտ առաջնորդը կը փափաքի տուն մը տանիլ մեզ, ուր խաչքար մը կը պահուէր: Գացինք, դիտեցինք: Երբ որ դուրս կ'ելլէինք, նոյն շէնքի երրորդ յարկի պատուհանէն մէկը ցոյց տուաւ փողոցի դիմաց բացուող բլուրը, ըսաւ, որ հայոց գերեզմանատունն է, եւ աւելցուց՝ այնտղ Գէորգ Չաւուշը կը քնանայ: Կը քնանա՞յ: Այս բայը ընտրուա՞ծ էր, պատահակա՞ն էր. բայց անոյշ էր եւ խորունկ: Գէորգ Չաւուշ այնտեղ կը քնանայ: Ուրեմն, ողջ է, ապրող էութիւն է, երազ է, յոյս է: Յաջորդ օրը մեզմէ ոմանք փորձեցին գերեզմանատուն երթալ եւ փնտռել Գէորգի գերեզմանը: Դժբախտաբար չէին յաջողած: Գերեզմանատան բոլոր քարերը գլխիվայր շրջուած էին, իսկ իրենք տկար կիներ էին, մէկը չկար, որ «թաւալեցնէր» գերեզմանին վէմը: Նոր օրերու իւղաբեր կիներ էին. Գէորգ Չաւուշ դեռ կը քնանար:

Նոյն այդ առաւօտեան, ուրեմն, երբ ոմանք Գէորգի գերեզմանը կը փնտռէին, եւ քանի մը հոգի ալ հայկական Մուշը կը փորձէին վերակազմել, մեզի տրուեցաւ հրաշալի առիթ մը- երթալ եւ համբուրել Գէլիգուզանի հողը:

Գէորգ Չաւուշ ծնած է 1870 կամ 1871 թուականին Բսանաց գաւառի Մրքտիկ գիւղը: Ծնողքը գինք կը դրկէ Մշոյ Ս. Առաքելոց վանք, երկու տարի, մինչեւ 1888: Այդ շրջանին, հազիւ 17 տարեկան, Գէորգ կը հանդիպի փախստական Արաբոյին եւ Լեւոնին, որմէ ետք Գէորգի մէջ կը բռնկի յեղափոխական կայծը: Օր մը կռուի կը բռնուի երկու քիւրտերու հետ եւ ծնողներու արգելքներէն ետք, Գէորգ կը մեկնի Հալէպ, ուր Սասունցիները իրեն համար զէնք կը գնեն: 1890-ին կը վերադառնայ Սասուն եւ կը միանայ Հնչակեան Մուրատին եւ Տամատեանին: 1894-ին բախումներ տեղի կ'ունենան կանոնաւոր զօրքին դէմ, Գէորգ կը մասնակցի բոլոր կռիւներուն եւ ի վերջոյ կը ձերբակալուի Մուրատին հետ ու կը տարուի Մշոյ բանտ: Գէորգ 15 տարուան բանտարկութեան կը դատապարտուի: Քսան ամիս ետք ան հնարամտութեամբ կը փախչի բանտէն եւ այս անգամ կ'անդամակցի Դաշնակցութեան: Գէորգ զէնքի ընկեր կը դառնայ Արաբոյին, Սերոբ Աղբիւրին, Անդրանիկին, Հրայրին եւ Ռուբէնին: Սերոբի մահէն ետք, 1899էն 1901 Անդրանիկի հետ կը ղեկավարէ խումբերը եւ կը մասնակցի Առաքելոց Վանքի կռուին: 1904-1907 թուականները կը համարուին Գէորգի ղեկավարութեան տարիները:

Սուլուխի կռուի ընթացքին կը զոհուի Գէորգ Չաւուշ: Ֆետայիներ, թիւով 17 հոգի, 1907 Մայիս 27-ին անակնկալ յարձակումի կենթարկուին Քէօսէ Պին Պաշիէն: Թուրքերը կ'ունենան 120 սպանուած: Գէորգ ծանր վիրաւոր, նահանջի ժամանակ կը մտնէ եղեգնուտի մը մէջ, ուր հոգին կաւանդէ Մայիս 28-ին: Զօրքը դին կը յանձնէ Առաքելոց Վանքի կռուին, որ մեծ սուգով կը թաղէ Մշոյ Կողուբաղի գերեզմանոցին մէջ:

Մեսրոպ արք. Աշճեանի հուշերը տպագրության պատրաստեց ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԸ

ՄԾՈ ՍՈՒՐԲ ՄԱՍՈՒՆՔԻ ՁԱԳԱՏԱԳԻՐԸ



Գերմանացի հնահավաք Ռիխտերի ընտանիքը 1970-ական թվականներին հաստատված էր Թուրքիայի Սան Ստեֆանո (այժմ՝ Եշլի) գյուղում: Այդ տարիներին Ռիխտերը Թուրքիայի Չենգիլ գյուղի մի թուրք վաճառականից գնել էր իրենից ազգային մեծ արժեք ներկայացնող Մշո սուլթան Սուրբ Կարապետ եկեղեցու շքամուտքի փայտաշեն դուռը: Սրբավայրը, որ գտնվում է Մուշից 35 կմ հյուսիս-արևելք, հայտնի է՝ որպես Սբ. Կարապետի (Սբ. Հովհաննես Մկրտիչ) մենաստան:

Մի թրքուհու մատնությամբ թուրքական ոստիկանությունը ներխուժեց Ռիխտերի բնակարան և ձերբակալեց նրան, առգրավեց տան ողջ ունեցվածքը: Սակայն նա չգտավ այն, ինչի հետքերով եկել էր... Ուշացել էին. Թուրքիայում Գերմանիայի հյուպատոսարանի մի աշխատակցի միջնորդությամբ օրեր առաջ Մուշի սուրբ մասունքը՝ Սուրբ Կարապետի դուռը, տեղափոխվել էր Գերմանիա:

Պարոն Ռիխտերը թուրքական բանտում սրտի կաթվածից մահացավ: Իսկ տիկին Ռիխտերին թույլ տվեցին ընդամենը երկու ճամպրուկով հեռանալ երկրից: Գերմանիայում իր ընտանիքի գոյությունը պահպանելու համար տիկին Ռիխտերը ստիպված եղավ վաճառել դուռը...: 1996 թվականի աշնանը, Լոնդոնում աճուրդով մի անհայտ եվրոպացու վաճառվեց Սուրբ Կարապետի դուռը: Իսկ այդ նույն ժամանակ Հայաստանի Հանրապետությունում Մեսրոպ արք. Աշճյանին վստահեցրել էին, որ եվրոպացի հայ մեծահարուստները կմասնակցեն աճուրդին և կգնեն այն: Աճուրդը կայացավ, իսկ մեր ազգային արժեքը մեզնից օտարվեց...

Գեղանկարները՝ Արամ Ծատուրյանի: Արվեստագետի
հետ հարցազրույցը կարդացեք էջ 22-23-ում: